



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4178

4179

4180

4181

4182

4183

9(47.925)

U-33

U.S. GOVERNMENT PRINTING OFFICE 1944 12-1000

200

Printed in Turkey

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ

ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԾՈՒԽԻԸ

ԸՆՍ ՌՈՒՍ ՊԵՏ. ՕՐԵՆՔԻ Խ ՀԱՅ. և ՄԱՍԻ

(ՀՐԱ. 1896 թ.)

[Ե Ւ Ն Շ Ե Զ Է .—Դ Պ Վ Շ Գ .]

«Որ «պօլօժենիէն» շատ կողմներով պակասաւոր է, շատ շատ անգամ շնչով ված է, բայց որ դրա հետ միասին և նէնց այդ պակասաւոր «պօլօժենիէն» շատ աւելի պակասաւոր կերպով կարդացվել, հասկացվել ու գործադրվել է մեզանում—այդ ևս պէտք է ընդունենք»

Մ. Ա.-Թ. ՄԵԼԻՔՅԱՆ („ՄՃԱԿԻ“, 1908 թ., № 35)

Ա. Ա. ՀԱՅՐԱԿԻՆ Յ. Ա. Վ. Վ. Վ. Վ. Վ. Վ.



ԷԼԵԿՏՐԱՋԱՐԺ ՄԱՊԱՐԱՆ Ե. ՍԱԿԻՄԻՔԻԱՆԻ, ՄՈՆԿԻԱ.

1909.

ԲՈՒՇԿ ՍԻՄԵՈՆ ՇԱՀ-ՆԱԶԱՐԵԱՆՑԻ

Ա. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ

- 1) «ՆՈՐ-ՓՈՐՉ» գրականական և հասարակական ժանդէս. տեսրակ № 1 (խմբագրեց՝ Յովհաննէս Շահնազարեան), էջ 128, Մոսկա, 1897 թ., (սակաւաթիւ) գինն է 75 կ.
- 2) ՅՈՎՃԱՆՆԷՍ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ «Անմեղ զոհեր» (Կանալք Գ. Զուբարի վեպիկներում). էջ 56, Մոսկա, 1899 թ., (սպառած) գինն է 50 կ.
- 3) ՅՈՎՃԱՆՆԷՍ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ «Խ. Արովեանի գրականական և հասարակական գործունէութիւնը». էջ 23, Մոսկա, 1899 թ., (սպառած) գինն է 35 կ.

Բ. ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ

- 1) Երէցփոխանութեան հարցը Մոսկայում. էջ 31, Մոսկա, 1895 թ., (սպառած) գինն է 25 կ.
- 2) Основные положения физиологической психологии по Вундту, Цигену и Мейнерту. I. Теория апперцепции В. Вундта. Стр. 63, Москва, 1898 г., цѣна 75 կ.
- 3) Ճառ Երևանի Հայոց Թեմական Հոգեոր Դպրանդցին ներկայանալիս. էջ 23, Մոսկա, 1899 թ., (սպառած) գինն է 25 կ.
- 4) Երևանի Հայոց Թեմական Հոգեոր Դպրանդցի աշակերտներին (մի քանի խրատներ). էջ 14, Մոսկա, 1899 թ., (սպառած) գինն է 20 կ.
- 5) Երևանի Հայոց Թեմական Հոգեոր Դպրանդը և Հասարակութիւնը. էջ 32, Մոսկա, 1899 թ., (սպառած) գինն է 30 կ.
- 6) Որոշ կանոնադրութեան և ծրագրի անհրաժեշտութիւնը և Հայոց Թեմական Հոգեոր Դպրանդցիների վարչական և ուսումնական կարգ ու կանոնի՝ գիսցիպլիսայի միաներպութեան գաղափարը. էջ 84, Մոսկա, 1900 թ., (սպառած) գինն է 1 ր.

ԲՈՒՇԻ ՍԻՄԷԾԻ ՇԱՀ-ՆԱԶԱՐԵԱՆՑ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ

ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԾՈՒԽԸ

ԸՍ ՌՈՒՍ ՊԵՏ. ՕՐԵՆՔԻ Խ ՀԱՅ. Ի ՄԱՍԻ

(ՀՐԱՏ. 1896 թ.)

[Ե Հ Ե Ն Ե Յ Ե .—Դ Պ Հ Ռ Ա Յ]

«Որ «պօլօժենիէն» շատ կողմերով
պակասաւոր է, շատ շատ անգամ շնչտ-
ված է, բայց որ դրա հետ միասին և
նէնց այդ պակասաւոր «պօլօժենիէն»
շատ աւելի պակասաւոր կերպով կար-
դացվել, հասկացվել ու գործադրվել է
մեզանում—այդ ևս պէտք է ընդունենք
և խոստովանենք»:

Մ. Ա.-Ք. ՄԵԼԵԱՆ („ՄՃԱԿԱԿ“, 1908 թ., № 35).

Ա. Հ. Ա. Յ. Յ. Յ. Յ. Յ. Յ.



ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ

Էլեկտրաշարժ տպարան Ե. Աւետիքեանի, Մոսկաւ.

1909.

12917

Література ізраїльська
У філософії та філософії
Іудаїзму та єврейської релігії

6648-57

8

Типографія Е. Аветикова

Москва, Б. Лубянка, Варсонофьевский пер., домъ Соловьева.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ

S. S. ՄԱՏԹԵՈՍ Բ.-ԻՆ

ՈՐԴԻԱԿԱՆ ԱՆԽԱՌՆ ՍԻՐԱՎ ԵՒ ԼԻԱԲՈՒԽՆ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐՈՎ.



ՆԻԿՐՈՒՄ Է

ՀԵՂԻՆԱԿԻ:

ԶԵՐԴԻ ՍՐԲՈՒԹԻՒՆՆ,
ՎԵՀԱՓԱԾԻ ՏՀՐ.

Հեռաւոր *) հիւսիսի մայրաքաղաք Մոսկվայի հայ հասարակութեան ամենանւիրական զգացմունքների թարգմանը հանդիսանալու պատիւն ունինք այստեղ մենք—նւասսա և ընկերակիցս **), —զգացմունքների, որոց շուրջն է խմբւել այսօր համայն հայութիւնը: Պատւեր ունինք սրտագինս ողջունել Ամենայն հայոց վեհափառ. Հայրապետիդ բարի գալուստը, որդիական չերմաշերմ համբոյր գրոցմել հայստանեալց առաքելական ս. Եկեղեցու Քահանայապետիդ ս. Աշխն:

Տարիներ, շարունակ մրրկածուփի, մրրկախօս տարիներ, հայութիւնը բևեռած ունի Ձեր վրա իր սպասելիքները—երբեմն՝ իբր Կ.-Պոլսի Պատրիարքի, երբեմն՝ իբր Հայրապետական Գանի թեկնածւի: Իզմիրլեան անունն ի վաղուց անտի մականուն է՝ կորովի կամքի, գիտակ իմացականութեան, աղքանւեր անհատականութեան, գաղափարի զինուորազրութեան—տարրե՛ր, գործօն տարրեր, որոնցով միայն համուրեք կայուն է բանաստեղծք-բաղաքայու հիւսւածք՝ «աղդապահութեան հրաշալի շինուածք»-ը ***):

Հայ ազգը, որի հոգեոր զեկավարութիւնը ստանձնած ունիր այժմէն, մի բեկոր է մարգկութեան, բեկոր՝ իր առանձնայատուկ խառնւածքով, բեկոր՝ իր ինքնատիպ պատմական անցեալով: Բացւում է ազ-

*) Այս տողերն ասւած են Օդեսայում, 1909 թւի մայսի 25-ին՝ ազգիս Վեհի Թիւրքիայից ժամանման առթիւ տրւած հանդիսաւոր ծաշկերոյմին, ապա՝ լոյս են տեսել Հովհաննեան ս. Օժման օրւայ—№ 34-ում «Ողջո՞յն Վեհափառ Հայրապետին» վերատառութեամբ:

**) Մոսկվայի երկրորդ պատգամաւոր—Բժ. Ս. Սուրէնեանց:

***) Տես «Մշակ», 1908 թ., № 9—Ամբատ Շահ-Աղիզի «Զոհեր» բանաստեղծութիւնը:

գային պատմութեան մի նոր էջը: Լուսաճաճանչ ծի-
ածանը կամարել է անցնելիք ուղին: Վաստահ սրտով
հետեւում ենք ուղեսոր-աւաշնորդիդ, —առաջնորդիդ,
որ վերջին պատրիարքական ուխտովդ սահմանադրել-
սկզբնադրել էք՝

«Հայ եւեղեցին իր սրբութեան, վեհութեան և ա-
պահածայնութեան մէջ պէտք է պահպանէն» *),

«Օքնիւթեան և անոնց հայութեան վեւլոււ իւ-
նմանի անդըլի նաև— ճը, որ իւթեան ծանր— մէջ իւ-
պապութելի» **):

Եւ յիրաւիք. Եկեղեցին իբր ազգային կայունու-
թեան ապաւէն, Օքնքը-կանոնը՝ իբր մերայինների
օրէցօրի գրաւիչ յաջորդականութեան գրաւական—
աւելին խնդրելիք, աւելին պաղատելիք չունինք Զերդ
Սրբութիւնից...

Ցնծա հայութիւն, ահա գալիս է ազգբնաիր Քա-
հանայապետք՝ զլուխ անցնելու նւիրական զգացմունք-
ներիդ...

Ցնծայէք նւիրական վայրեր, ցնծա էջմիածին,— էջ-
միածին—ըստ նոյն բանաստեղծ-քաղաքացու կերտ-
ւածի «մշտականաչ կիպարիս, չայաստանի սրտի վրա
տնկած», Էջմիածին՝ «ճայաստանեալց մրմունչների ըն-
դունարան». ցնծա, «ահա գալիս է առաքելաշաւիդ Փե-
սադ՝ հովւել քո ժողովուրդը և վառաւորել քեզ» ***):
Ողջոն չովւսպեա-Փեսայիդ:

19^V₂₅ 09 թ.,

ԲԺ. Ա. Շ.Ն.

Օդեսա:

*) Տես «Մշակ», 1908 թ., № 258—«Իզմիրլեանի (Կրկորդա-
պատրիարքութեան) գահակալութիւնը և ուխտը»:

**) Տես «Մշակ», 1909 թ., № 17—«Պաշտօնական ընդու-
նելութիւն իզմիրլեան պատրիարքի մօտ»:

***) Տես Մաքատ Շահ-Ազիդ՝ «Յորելեանի տարեղարձ», Մուկ-
ւա, 1893 թ., էջ 72 (1892 թիւ ապրիլի 9-ի յորելեանի ծառից):

ՅԱՒԱԶԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Ստորև արտատպում եմ իր ժամանակին լրս տեսած երկու յօդւածներու՝ ա) «Կաթողիկոսական ընտրութեան համար գումարւելիք համազգային ժողովի զբաղմանց առթիւ» *), բ) «Հայոց Եկեղեցական ժուխի իրաւասութեան խնդիրը» **): և գ) մի աշխատութեանս հատւածը՝ «Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի իրաւասութիւնը դպրոցական հարցում» ***): Այդ երկու յօդւածներս և հատւածը՝ ի մի խմբւած՝ տալիս են այս զրքոյին վերնազրում զրի առնւածին վերաբերեալը:

Եւ յօդւածներս, և հատւածն արտատպում եմ նոյնութեամբ՝ կցելով սրանց մի քանի նոր կտորներ:

ի պէտ.

*) Տես «Հովիւ», 1908 թ., №№ 1 և 3:

**) Տես «Նոր-Դար», 1902 թ., №№ 77 և 78:

***) Տես իմ «Հայոց Թթեմական Հոգևոր Դպրանոցների կանոնադրութեան նախագիծը», Մոսկա, 1902 թ., էջ 162—164:—
Նոյնը տես ևս իմ «Դպրոցների նիւթական-դրամական ապահովութեան հարցը. Ի. Հայոց Թթեմական Հոգևոր Դպրանոցների եկամտի աղբիւրները (Պաշտօնական ցանկը և ցալսօր անտես առնւածը)», Մոսկա, 1908 թ., էջ 22—25:

Թէ ի՞նչ փոփոխութիւններ է կրել մեր եկեղեցական ծուխի իրաւասութիւնը յետապայում՝ շնորհիւ 1905 թւի օգոստոսի 1-ի պետական նորմաների — Բարձրագոյն Ուկաղի և «Ժամանակաւոր կանոններ Հայ - Լուսաւորչական եկեղեցիների գոյքերի կառավարութեան մասին Կովկասեան Փոխարքայութեան սահմաններում» հրատարակութեան — այդ մասին տե՛ս իմ առանձին աշխատութիւնս *):

ԲԺ. Ա. Շ.-Ն.

19 $\frac{\text{VIII}}{31}$ 09 թ.,

Մոսկվա:

*) Տես իմ «1905 թի օգոստոսի 1-ի Ուկաղը և Ժամանակաւոր կանոնները», Մոսկվա, 1907 թ., էջ 22—27 և այլն (ծուխ-երեցփոխ), էջ 34—56 և այլն (դպրոց):

I.

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ-
ԻԵԼԻՔ ՀԱՄԱՉԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԶԲԱՂՄԱՆՑ
ԱՌԹԻԻ¹⁾)

«Կաթողիկոսական ընտրութեան համար գումար-
ւելիք համազգային ժողովը պէտք է արգեօք սահ-
մանափակէ կամ, աւելի ճիշտ, որոշ շրջանակի մէջ
դնէ կաթողիկոսի անսահման իրաւասութիւնը. ահա
հայութեան համար կենսական նշանակութիւն ունե-
ցող սկզբունքային մի հարց»—կարգում ենք «Հովիւ»-ի
1907 թւի № 46-ի խմբագրական երկտողում:

Այդ հարցը ոչ միայն «սկզբունքային» է, այլ և
վերին աստիճանի բարդ:

Բայտ իս, զոնէ մեր՝ իրը որոշ առ գումար-
թեան արդի՛ պայմաններում, այդ հարցը չի՛ կարելի
զատել հետեւեալ հարցերից՝ —թէ որն է կաթողիկո-
սական ընտրութեան համար գումարւելիք համազ-
գային ժողովի պաշտօնական օրակարգը, —թէ ի՞նչ տե-
սակի հարցեր կարող են անցնել նոյն ժողովի նաևնա-
ո՞ր օրակարգի ցանկը՝ պրակտիկ տեսակէտից, —թէ
իրօք «անսահման իրաւասութեան» տէր է, տսել է
ՀՅԱՊԾ պէտ է ամենայն հայոց Վեհափառ Հայրապե-

1) Արտատպում է «Հովիւ»-ի, 1908 թւի №№ 1 և 3-ից:

ար թէ ոչ, — թէ արտան դիւրն է կասեցնել ազգիս
վեհի «անսահման իրաւասութիւնը» — լիազօրութիւ-
նը: Ես կրաժանեմ այդ հարցերն երկու խմբերի՝ զա-
տելով վերջին հարցը, որին երկու խօսքով կդառնամ
յօդւածիս ամփոփման մէջ:

ա) Պաշտօնական օրակարգը և մասնաւոր օրակարգի հար-
ցերի պեսակները:

Կաթողիկոսական ընտրութեան համար գումարւե-
լիք համազգային ժողովը պաշտօնական ժողով է և, ըստ
օրինի (Св. Зак. Росс. Имп. XI т. ч. I), ընդուն-
ւում է իրը այլպիսին՝ միայն որոշ գործողութեան՝
կաթողիկոսի ընտրութեան նկատմամբ: Հետևապէս՝
նախ և առաջ հարց է ժագում — կարող է արգեօք ո-
րոշ, յատուկ գործողութեան նկատմամբ դումարւած
պաշտօնական ժողովն չ պաշտօնէ զբաղւել այլ և այլ,
թող թէ վերին աստիճանի ժանրակշխու հարցերով:
Եւ պատեղ խօսքս ոչ թէ համադումարի անդամների՝
իրենց ընտրուներից սասայած իրաւասութեան ման-
դատների մասին է, այլ՝ թէ առաջ պիտի յանձնի հա-
մագումարն իր այգօրինակ որոշումները՝ ի հաստա-
տութիւն և ի գործադրութիւն: Ուուսիացի սահման-
ներում այդօրինակ որոշումներն ունին հանդիպելու
օրինական դիմադրութեան՝ Պետական Օրէնքի տեսկա-
տի (XI հատ. մաս I) մի շարք պարզորոշ շեշտերի
տեսակէտից (այդ մասին՝ ստորե), և այդ գեռ ամե-
նալըն դէպըում, իսկ սպասելի է նոյն իսկ աւելին՝
համագումարի դիմադրութիւնը իսկ գործողութիւնը — կաթո-
ղիկոսի ընտրութիւնը կարող է բեկանւել՝ իրը առաջ-

ընկե ժողովում կայսցրած ընտրութիւն, Ելե այդօրինակ ժողովը շեղեւէ Աննի իր օրակարգի մեակ և Ելու պաշտօնական հարցեց:

Ազգպետով, Հայող Անուանական ընդուն-Ռեան համար գործադրել է համար գործին ժողովին է այսպահում հոգում է Աբանդել մեակն և Ելու Հայող է անդամութիւն:

Սակայն ժամանակն ունի իր ոգին, իր թափր, և սրանք շատ-շատ անզամներ չեն տեղաւորւում տիրող օրէնքի շրջագծում: Երբեմն պէտք է լինում խանդարել այդ շրջագիծը—մերթ՝ ընդլայնել այն, մերթ՝ գծել նոր շրջագիծ:

Հարկաւ, ժամանակի այդօրինակ պահանջներիցն էր, ի միջի այլոց, և նորոգ հանգուցեալ Մկրտիչ Ա. կաթողիկոսի 1906 թւի մայիսի 10-ի № 549 «սահմանադրական» կոնդակը, որով նա ժողովը էն էր շնորհում «թեմակալ առաջնորդների, յաջորդների, գործակաների և հոգևոր վարչական հաստատութեանց պաշտօնեաների ընդուն-Ռեան էրաւունութը, որից յետով ընտրեալները կհաստատեն իրենց պաշտօնին պետութեան կողմից սահմանած օրինական հանապարհով²⁾: Ճիշտ է, որ յետազայում «հանգուցեալ հայրապետին հաճելի եղաւ կամայ թէ ակամայ, զիստութեամբ թէ անդիտութեամբ մեռյնել գեղեցիկ գործն ու սիրուն ձեռնարկութիւնը հէնց սաղմի մէջ», այն է, որ «շատ չանցած հանգուցեալ կաթողիկոսը փոխեց իր գործունեութեան եղանակը, մի նոր կոնդակով հրամապեց,

2) ՏՅԱ, ի միջի այլոց, իմ՝ «1905 թի օգոստոսի 1-ի Ուկագը և ժամանակաւոր կանոնները», Մոսկա, 1907 թ., էջ 69
—70:

որ ամեն ոք իւր պաշտօնում մնայ և սպասէ նոր կարգադրութեան, և այսպիսով հէնց ինըը մեռցրեց թէ իւր սկսած գործի թափր և թէ ժողովրդի ոգեորութիւնը»³⁾, սակայն, վերաբերելով 1906 թւի մայիսի 10-ի կոնդակին՝ իրը պատճական փաստի, մենք պիտի ընդունենք այն՝ իրը որո՞շ ժամանակի ոգու, սրա թափի արտադրութիւն:

Կան շատ հարցեր՝ — հաս-չհասի հարցը, կենդրոնական ժողովի հարցը, ծխական դպրոցների կանոնադրութեան հարցը, ծխական կանոնադրութեան հարցը և շատ այլ և այլ հարցեր, որոնց մէջ զգալի է ժամանակի ոգին ու թափը, սակայն ես կրաւեմ այսքանով:

Թէ ի՞նչ հանդամանքներում կբազմի ս. Գրիգոր Լուսաւորչի զահի վրա ազգիս ապագայ ընտրելին — այդ գուշակել գժւարին է, նամանաւանդ արդի երերուն՝ մերթ ոգեորիչ — մերթ հիասթափեցնող, մերթ «կազմակերպող» — մերթ կազմալուծող օրերում, հետեւապէս՝ գժւարին է գուշակել և այն ամեն հարցերը, որոնց նոյն իսկ զարթեցնել — հրապարակ հանելը գիւրին կլինի այն ժամանակ: Սակայն այդ գեռ չի նշանակում՝ ծեռքներս ժաղած պիտի նստել, ոչ: Կարեւոր, անհրաժեշտ հարցերը շարունակ պիտի ուսումնասիրութեան առնեն: Զանց առնելու չէ միայն այն, որ Ֆանի պաշտօնեան, որին կարող է յանձնել համագգալին ժողովն իր՝ կաթողիկոսական ընարութեան պաշտօնական գործողութիւնից զուրս կալացրած նաև

3) Վերցրած է Ներսէս պ. Տէր-Միքայէլեանի «Հակասութիւններ» լոգամից (տես «Հովհան», 1907 թ., № 46):

հաստիք որոշումները — այդ է նոյն ինքն ազգիս ապագայ ընտրելի հոգւապետը: Ան, և այս ուրիշն ունի, ի դեպք եթէ ինքն յարելիս լինի այդ որոշումներին, յասուուկ հրամանով կոնդակով պարագիր յայտարարելու այն, քանի որ, ըստ տիրող օրէնքի (Ուստիայում՝ XI հատ. I մաս — տեկստը՝ ստորև)՝ երբեմըն միմայն առաջին Վեհին է իւրացրւած իրաւունք — մերթ՝ հասաւատելու որոշ գործողութիւններ-որոշումները, մերթ՝ օգտաելու-իրադորձելու որոշ իրաւունքը: Եւ այդ վերջին հանգամանքով միաժամանակ գծւում է այն ամեն հարցերի շրջապիծը, որոնց վերաբերեալ, ի դեպք եթէ կայանալիս լինեն կաթողիկոսական ընտրութեան համար գումարւելիք համազգային ժողովի հանուատոր նիստի որոշումներ, ենթալրելի են ազգիս ապագայ Վեհի վաւերացնող կոնդակներ, և, սրան կից, այն հարցերի շրջապիծը, որոնց վերաբերեալ նոյն իսկ ազգիս Վեհին անգօր է տալ իր վաւերացումը՝ իբր տիրող օրէնքից բացասարակ գործողութիւն...

Այդպիսով մենք մօտեցանք այն պրակտիկ հարցին թէ՝ ի՞նչ, որո՞նք են կարող լինել կաթողիկոսական ընտրութեան համար գումարւելիք համազգային ժողովի հանուատոր զրադանց աւարիաները: Սրանք երկու տեսակի են՝ — տիրող օրէնքի տեսակէտից՝ ա) ընդունելի և բ) անընդունելի:

Համազգային ժողովի հանուատոր որոշումներն ընդունելի կլինեն այն ամեն անդամները, երբ նրանք չեն շօշափի այն տեսակի հարցեր, որոնց վերաբերեալ վաւերացման վճիռ գնելու իրաւունքն ուրիշին իւրացնելու արտօնութիւնն օրէնքնով չի՝ զլացւում ա-

մենայն հայոց Վեհափառ Կաթողիկոսին և՝ vice-versa!...

Սասացի, որ դժւարին է այժմէն իսկ նախատեսել ազգիս ապագայ ընտրելիի կաթողիկոսանալու պարագաները, հետևապէս՝ դժւարին է այժմէն իսկ նախատեսել թէ ի՞նչ տեսակի որոշումներ, վերը շեշտածո՝ օրէնքի տեսակէալից ընդունելնէրի շարքից, կարող են իրականանալ ազգիս ապագայ Վեհի օրօք: Սակայն, հարկաւ, այդ հարցերի շարքի մասին մտածել, այդ հարցերով գրադւել արժի այժմէն իսկ, նամանաւանդ՝ չէ՞ որ մի օր պէտք է զբաղւել նրանցով: Այդպէս են, զորօր., տպէսների ձեռնադրութեան վերջ տալը և ձեռնադրւելիների ցենզի սլահանչի իրականացումը,—ընտրողական սկզբունքի մշակումը և կանոնաւոր հիմքերի վրա դնելը՝ և ծխական, և հոգեռական կազմերի պարտուց և իրաւանց նկատմամբ,—դպրոցների և դպրոցական գործի բայթայման դէմ մաքառելը և գրանց բարելաւումը,—վանական-եկեղեցական-դպրոցական կալւածների շահագործման բարուրումը, և այլն...

«Օրէնք ի Սիօնէ ելցեն»,—կարդում ենք Վանականի յօդւածում⁴⁾, ուր կան շեշտաւած վերը բերածըս «հարցեր»-ը ևս,—այդ Սիօնի կառավարութեան համար ընտրելի կաթողիկոսը իւր օրէնքները պիտի ունենայ. նա պիտի ձեռնարկող լինի և կազմակերպող:

«Այս, մեր եկեղեցին, մեր ժողովուրդը շատ ցաւեր

⁴⁾ ՏՅԱ «Հովհան», 1907 թ. № 46՝ «Մի կաթողիկոս շատ բան կարող է անել»:

ունեն ալաօր. այդ ցաւերից սմանց նկատմամբ վճիռներ⁵⁾ տալու իրաւունքը անշուշտ վերապահուած է ազգա-լին-եկեղեցական ժողովին: Սակայն վերոցիշեալ հար-ցերը և սոցա նմանները կարող է և այնու է լուծէ համայն ազգի վստահութեան քուէն ստացող կաթո-ղիկոսը»:

Ես նամանաւանդ ընդգծում եմ Վանականի այս րոպէ քաղածս խօսքերի վերջին կտորը: Այս՝ այդ «հար-ցերը և սոցա նմանները կարող է և պէտք է լուծէ համայն ազգի վստահութեան քուէն ստացող կաթողի-նուս», սակայն և աւելացնում եմ՝ ո՞ր չափով այդ հարցերը-վճիռները պատկանում են վերը լիշածս՝ օ-րէնքի տեսակէալից ընդունելու որոշումների-հարցերի շրջանին, և ո՞ւ չափով այդուն Վեհը կարող է նրանց վե-րաբերելու ընդունումն ինժնաբերաբար իւրացնել մի ուրիշ հարցնելի ժողովրդին՝ անմիշապէս կամ սրանից լատ-կապէս ընարւածներին:

Այդ տեսակի հարցերով-որոշումներով սկսում եւ վեր-ջանում են ազգիս Վեհի «անսահման իրաւասութեան» երաժշտութելու ասհմանախակման վերաբերեալ ենթագրու-թիւնները՝ յօդուտ այդպիսով զատւած իրաւանց ապակենդրոնացման - դեմոկրատիզացիալի՝ ժողովրդա-կանացման:

Այդ է երեսութ աեսակի—վերը լիշածս օրէնքի տե-սակէալից անընդունելու որոշումների-հարցերի դրու-թիւնը: Այսաեղ հարցի-որոշման վերաբերեալ լու-ծումը պիսի բղիսի մայն և էն ամենայն հայոց Վեհա-խուս՝ հովանականոց, հարկաւ՝ մինչև դոլութիւն ունի տիրող օրէնքը...

5) Ընդգծումներն իմս են: Բժ. Ա. Շ.-Ն.:

Այդպիսով դժւած է Կաթողիկոսի ընարութեան համար գումարւելիք համազգային ժողովի Տառապոր զբաղմանց օրակարգը՝ առարկաների-հարցերի շարքը և սրանց վերաբերեալ որոշումների պրակտիկ իրականացման նկատմամբ սպասելին՝ աղյուսակություններուն իրարկուացնեալ ժողովը անդամական համար է Հայոց Հանրապետութեան համար և այն թէ «կաթողիկոսի ասահման իրաւասութեան» ի՞նչ տեսակի, որ աստիճանի «սահմանափակման» մասին կարող է խօսք լինել համազգային ժողովում՝ տիրող օրէնքի սահմանում:

Ապա.

Ասացի, որ Վեհն իրեն իւրացրած իրաւունքներից մի քանիսը de facto և de jure էարող է ենթարկել ապակենդրոնացման սկզբունքին և որ, սրան կից, կան նոյն Վեհին իւրացրած իրաւունքներ, որոնց նաև և de jure, և de facto անդը է ենթարկել ապակենդրոնացման։ Եւ այս երկու գեպը երում ևս Վեհին այդ իրաւունքներն իւրացնող օրէնքը ճանաչում է նոյն Վեհին Անդը ունի իր իրաւունքների։

Սական այդ առթիւ մեզանում տիրել են անցեալում, տիրում են, անշուշտ, այսօր ևս, տարբեր տեսակիտներ, ուստի արժէ առանձնապէս կանգ առնել ազգիս Վեհի իրաւունքների որպիսութեան — լիազօր թէ ոչ — վրա, նամանաւանդ, որ այդպիսով լրացրած և լուսաբանած կլինենք վերն արժարծածս տեսակէար՝ ընդունելի և անընդունելի հարցերի - որոշումների նկատմամբ՝ տիրող օրէնքի տեկստով։

բ) Ավաղը պետք է առնեայի հայոց Վեհափառ Կանոնի-
կուլ Ակ այս

Ասացի, որ նոր չէ դրւում մեզանում այդ հարցը:
Սակայն հեռուն չփնացու և յօդւածս չերկարելու հա-
մար՝ ես կիշշատակեմ 1902 թւին «Նոր-Դար»-ի է-
շերում տեղի ունեցածը:

1902 թւին «Նոր-Դար» - ում զետեղւած՝ «Մեր
Թեմական Հոգեոր Դպրանոցների եկամախ ցայսօր ան-
տես առնւած աղբիւրները» յօդւածիս մի կտորի առ-
թիւ⁶⁾, ուր ես հանգել եմ աղգիս Վեհի Ավաղը-
Ռեան թեղին, «Նոր-Դար»-ի նոյն թւի № 175-ի ա-
ռաջնորդում արծարծւեց, թէ ի՞նչ մտքով պիտի
հասկանալ այդ «լիխազօրութիւն»-ը: «Հսկել օրէնքնե-
րի պահպանութեան վրայ, այդտեղ է միայն լիխազօր»
ամենայն հարց Վեհափառ Կաթողիկոսը — այդ էր
«Նոր-Դար»-ի յարգելի խմբագրի եղրակացութիւնը⁷⁾:

Դոյն այդ հարցի առթիւ Ներսէս վ. Մելիք-Թան-
գեանի՝ «Հայոց եկեղեցական իրաւունքը» աշխատու-
թեան Բ. գրքում, ի միջի այլոց, կարդում ենք՝

«Եկեղեցու օրէնադրական իրաւունքի աղբիւրն է
եկեղեցու հիմնադիրը՝ Քրիստոս, որի պատուերը և
առաքեալներին առւած իրաւունքը թէ ով ժեզ կլսէ»

6) Տես «Նոր-Դար», 1902 թ., № 174: Տես ե'ս իմ «Դպրոցների նիւթական - դրամական ապահովութեան հարցը» I. Հա-
յոց Թեմական Հոգեոր Դպրանոցների եկամախ աղբիւրները»,
Մոսկա, 1908 թ., Գլ. Բ.⁸⁾ էջ 18—22:

7) Տես «Նոր-Դար», 1902 թ., № 175՝ «Մտքեր և դիտողու-
թիւններ» առաջնորդողը:

ինձ կյանք (Մատթ. Ժ. և Իլ: 20), հիմք զբեցին եկեղեցու ապագայ օրէնսդրական իրաւունքին:...

«Առաքեալներից այդ իրաւունքը յանձնուեց իրանց յաջորդներին և հետևորդներին՝ այն ձևով, ինչ ձևով որ իրանք էին սահմանում, այսինքն ոչ անհատական կամքի արտայատութեամբ, այլ ժողովական: Աւելի պարզ ասուած: Ովկէր օրէնսդրական մարմինը, անհամար, եկեղեցու հովիւր, թէ առաքեալների ժողովը և ապա եկեղեցական ժողովը:...

«1) Այսպիսով երեւում է, որ առաքելագիր օրէնք է համարւում միմիայն ժողովին յատկացնել եկեղեցու օրէնսդրական իրաւունքը և ոչ որևէ անհատի, եկեղեցու պետին.

«2) Այս օրէնքին չի կարելի հակասական համարել օտար և ազգային սուրբ հարց կանոնները, որոնք առանց ժողովի են արուել և ընդունուել բոլորի կողմից, որովհետև քրիստոնեայ հասարակութիւնը և եկեղեցիները այդ ձևով հրատարակուած կանոնները համարել են եկեղեցու ոգուն համապատասխան և աւանդութեան համեմատ, առանց որևէ շեղման ժողովական սահմանադրութիւններից, մանաւանդ, և այս պիտի ի նկատի ունենալ որ սուրբ հարց Եպահան կանոնները միզու ճշակուել և գրուել են Երևան ժողովու, գոյնեւ Եպիսկոպոսների և այլ խորհրդականների առջականութեան և հասանակցութեամբ: Մինչև այժմ լինում են միշտ կաթողիկոսական կարգադրութիւններ, որոնց հնագանդւում են բոլոր հաստատութիւնները, և այդ չի հակասում ժողովական - օրէնսդրական սկզբունքին, ինչու, առ որովհետև կաթողիկոսական կարգադրութիւններն չեն դուրս գալիս այն գծած

սահմանից, որ դրել են մեր նախկին ժողովները, նոր կարգերը կամ միմիայն լիշեցնում են նախկինները, կամ ըստ ժամանակի և հանդամանեց՝ դոփոխութեան ըն ենթարկուած վարչական, պատժական և յետական կողմերը. բ. ոչ մի կաթուղիկոսական կարգադրութիւն չի յաւակնել շեղել առանց ժողովի՝ նախնեաց աւանդից»⁸⁾:

Սակայն լսենք ոռւս Պետական Օրէնքի,—ի գեպ՝ որի տեխսափի է լինելու մեր խօսքը,—յատկապէս այդ հարցին վերաբերեալ շեշտումները:

Ծուս Պետական Օրէնքը՝ շեշտելով իր XI հատորի I մասի (հրատ. 1896 թ.) մի շարք յօդւածներում ամենայն հայոց Վեհափառ Պատրիարք-Կաթողիկոսի ընարութեան և հաստատման վերաբերեալ պարագաներ՝ միաժամանակ, այդ յօդւածների համաժողուաց, ներդին իմաստով, շեշտում է ընարւած և հաստատւած Կաթողիկոսի դիրքի վեհութիւնը,—մի բան, որը նոյն Պետ. Օրէնքը, այսպէս ասած, սրբազործում է իր նոյն XI հաս. I մասի մի շարք յօդւածներում (1111, 1117, 1132, 1146—1148 և այլն):

Շատ յարմար է այդ առթիւ քաղել «Նոր-Դար»-ի լիշածս առաջնորդողի՝ բատ ամենայնի իրաւացի խօսքը.

«Մենք գեռ առաջ կը գանք և կասենք, որ եկեղեցուն վերաբերեալ Պետ. Օրէնքներում ի նկատի է առնուած հայոց եկեղեցու հոգին»⁹⁾:

8) Տես Ն. վ. Մել իք-Թանգեան՝ «Հայոց եկեղեցական իրաւունքը. Բ. գիրք. Կազմակերպութիւն և Կառավարութիւն», Շոշի, 1905—907 թ. թ. էջ 170, 171—172:—Հրաւիրում եմ ընթերցողիս ուշադրութիւնն ընդգծած տողերի վրա: Բժ. Ս. Շ.-Ն.

9) Դոյն միտքն արտայալտել է ապա Մ. ա.-ք. Մելեանը և այս Պոլօմէնիան ձանաչել է մեր եկեղեցու հիմնական ոգին, նոյն

Այս Պետ. Օրէնքն ի նկատի է առևլ «հայոց եկեղեցու Հոգին» ևս: Սակայն չմոռանաք, որ նոյն Պետ. Օրէնքն իր որոշ յօդւածների (առ' ո վերը շեշտածս յօդւածները)՝ և բառացի, և ներքին իմաստով— «հայոց եկեղեցու Հոգին», այսպէս ասած, Տարհապատճ է առանում յանձին ո. Գրիգոր Լուսաւորչի ամոռի վրա բազմողի:

Զուր չի' Պետ. Օրէնքն անցնում յեւա-է պ-ու տ-ու տօնեայ՝ Տ. Տեղակալի մօտով և շեշտում՝

«... дѣла чисто духовныя, по коимъ Патріархъ (Католикосъ) имѣетъ рѣшительный голосъ, ни въ какомъ случаѣ не могутъ быть рѣшаемы безъ Патріарха во время вакансіи Патріаршаго престола; рѣшеніе дѣлъ сего рода отлагается до назначенія новаго Патріарха—... զուտ հոգեոր գործերը, որոնց վերաբերեալ Պատրիարքն (Կաթողիկոսն) ունի վճռական ծան, Երեւն՝ չեն կարող լուծել Կաթողիկոսական Աթոռի թափուր եղած ժամանակ. այդ աեսակի գործերի լուծումն յեպայիտ»— և մինչ յնոր Պատրիարքի (Կաթողիկոսի) նշանակւելը» (յօդ. 1148):

Եւ ապա՝

«... Патріархъ (Католикосъ) ни въ какомъ случаѣ не можетъ передать ни сему (Эчміадзинскому Синоду), ниже какому либо мѣсту или лицу, власти, правъ и преимуществъ, присво-

իսկ նախատեսել է հոգեորականութեան շտատը» (Տես «Մշակ», 1908 թ., № 114՝ «Կաթողիկոսական պատուիրակների ժողովը Թիֆլիսում»):

енныхъ сану его... — **Պատրիարքն** (Կաթողիկոսն) Եղբայր + չի կարող յանձնել ոչ այս (Եջմիածնի Սինոդին), ոչ որևէ ուրիշ պաշտօնական վայրին կամ անձնաւորութեան յատկապէս նրա կոչման իւրացրած իշխանութիւնը, իրաւունքները և արտօնութիւնները» (յօդ. 1117):

Զուր չի շեշտում Պետ. Օրէնքը, որ՝

«... дѣла чисто духовныя, касающіяся догматовъ вѣры, отправленія богослуженія и тому подобныя — զուտ հոգեոր գործերը, որոնք վերաբերում են գաւանական, ժամասացութեան և այլ նման տեսակ հարցերին») —

ամենայն հայոց Վեհափառ Կաթողիկոսը՝

«руководствуясь древними постановлениями церкви Армяно-Григоріанской и внявъ предварительно мнѣнію Эчміадзинскаго Синода сего исповѣданія, рѣшаетъ окончательно — ուղեցոց առնելով Հայ - Լուսաւորչական Եկեղեցու հնուց գոյսւթիւն ունեցող որոշումները և լսելով նախօրօք Եջմիածնի՝ նոյն գաւանութեան Սինոդի կարծիքը՝ որոշում է Հերշուականապէս» (յօդ. 1132):

Եւ ահա այդ՝ պատրիարք հայութեան գործերին վերաբերեալ հարցերում ամենայն հայոց Վեհափառ Հայրապետը, որը, բայց Պետ. Օրէնքի, ոչ թէ յախնում է իր կարծիքը (мнѣніе), այլ իր Հերշուական, անդուժիւթէ որոշումը (окончательно рѣшаетъ — յօդ. 1132, имѣетъ рѣшительный голосъ — յօդ. 1146 և 1148, даетъ свои резолюціи — յօդ. 1147) — ահա այդ տեսակի գործերին վերաբերեալ հարցերում ամենայն հայոց Վե-

համառ. չայրապետը լվազնը պէտք է ըստ ոռւս. Պետ. Օրէնքի, հետևապէս՝ Ծուսիոյ սահմաններում:...

Ի դէպ.

Պետական Օրէնքի այդպիսով շեշտւած տեսակէտին կից՝ կաթողիկոսական իրաւանց շուրջը պտտող՝ վերշերս գրի առած պարզաբանութիւնների և առաջարկների շարքից այստեղ կըերեմ հետեւալը.

Հ. Առաքելեանն իր՝ «Կաթողիկոսական խնդիր» յօդւածում գրում է՝

«Մէնք բոլորովին հակառակ ենք, և յաճախ առիթ ենք ունեցել յատնելու այդ մասին մեր կարծիքը, որ կաթողիկոսը հանդիսանալ մի ինչ-որ դիկտատոր, մի ինչ-որ փաշա կամ խան, ինչպէս մի քանի կաթողիկոսներ աշխատել են հանդիսանալ. ոչ, հայոց կաթողիկոսը, լինելով պետ մի ժողովրդական, ռամկավարական, կարելի է ասել՝ հանրապետական ոգով սրնված եկեղեցու, պէտք է լինի լոկ զեկավար, լոկ նախագահ այն հաստատութեան, որ կօչւում է կաթողիկոսութիւն: Կաթողիկոսը ազգային - եկեղեցական-վարչական գործերի զեկավարութիւնը պէտք է կատարէ ոչ ինքնակամ, միահեծան, այլ, համաձայն հայ եկեղեցու ոգուն, աւանդութիւններին և սովորութիւններին, պէտք է կառավարէ եկեղեցին խորհրդարանի, մի տեսակ ծերակոյտի (որի մի թոյլ ստուերն է կազմում ներկայ սինօգը) աշակցութեամբ: Այդ խորհրդարանը կամ ծերակոյար պէտք է ընարված լինի աղդից: Միայն պատահ կը տանիական, պատահաբանական հարցերուն հանուն է մասնեցան կատարված եկեղեցն և նիւթեառները: ¹⁰⁾...

10) Տես «Մշակ», 1908 թ., № 53:

Պ. Ա.-Հն իր՝ «Ապագայ կաթողիկոսի պարտիքը և հայրիկից մնացած ժառանգութիւնը» յօդւածում զրում է:

«Կարծես յուսահասական է վիճակը, բայց յուսահասութիւնը անհաւատութեան է նշանակ, հեռողւթինի մեղնից: Յոյսը կորցնողը անկոյս կը կորչի: Անտարակուսելի է, որ ապագայ լիտուակ կաթողիկոսի համար՝ Աստուծոյ օրհնութեամբ և ազգի վստահութեամբ ու օգնութեամբ, անհնարինն էլ հնարաւոր կլինի»¹¹⁾...

Նոյն Պ. Ա.-Հն իր՝ «Կաթողիկոսական խնդրի առթիւ» յօդւածում զրում է:

«Գարով ապագայ կաթողիկոսի իշխանութեան սահման գնելուն նրան զեկավարող խորհրդականների ժողովի կամ գործունեութեան ծրագրի միջոցով, կ'ասենք, որ այդ աւելի քան ջուր ծեծել է: Հայ հայրապետը աւանդապահութեան երգմամբ արդէն ինքն իրան սահմանափակում է, գործել խոստանալով համաձայն առաջելազիր, սուրբ հարց ու ժողովների աւանդած կանոնների: Իսկ նրան, որ Աստուծոյ անհասանելի կամքով և ամբողջ ազգի վստահութեամբ ու հաւանութեամբ ընտրվում է, իշեցնել մի գործազիր անձի աստիճանը, զրկելով սկզբնաւորութեան (ինիցիատիվի) իրաւունքից, աւելի քան ստորացուցիչ է և անպատճառ նորա կոչման և աստիճանին: Նև ավելու է լիտուակ լնի: Մեր հայրապետները նշանաւոր խնդիրներում միշտ գործել են միաբանութեան նշանաւորների ու ձեռնհաս աշխարհականների խորհրդականութեամբ»¹²⁾...

11) Տես «Հովիւ», 1908 թ., № 12:

12) Տես «Հովիւ», 1908 թ., № 13:

Մի կարծիք ես, այս անդամ՝ ի հետևումն հայոց եկեղեցական իրաւունքի պատմական ընդարձակ ուսումնասիրութեան։ Խօսքս վերը յիշածս Ներսէս վարդապետ Մելիք-Թանգեանի հայ եկեղեցու իրաւասութեան նախած աշխատութեան Բ. Գրքի մասին է, որի «Կաթողիկոսական պարտք և իրաւունք» հատածում, ի միջի այլոց, կարդում էնք՝

— «Կաթողիկոսն է հայոց եկեղեցու գերագոյն գատաւորք, Առջնական Հնիւ հայացնողը՝ առանց բաղուժան Ենիայիութեան...», և ապա՝ «Կաթողիկոսն է օրէնսդրական մարմնի մատչ գլուխք, որը կարող է... բացառքնել (եկեղեցու վարչական կազմի վերաբերեալ կանոնների) ճառը կերպեցն...»¹³⁾...

Ապա—ըստ Լէօփ

«Պատմական բազմաթիւ փաստերով հաստատված է, որ կաթողիկոսութեան հետ կազմած են մեր աղդային գործերը, որոնց կառավարել է նա ինժեներութեան»¹⁴⁾....

Մամուլի էջերում գրի առնւած այդ ամեն շեշտերն ուշագրաւ են պաշտպանածո թեզի տեսակէտից:

Յիրաւի՛: Վերը շեշտւած զուտ հոգեոր գործերում ո. Գրիգոր Լուսաւորչի Աթոռի վրա բազմող հայրապետն ունի երեան գալու՝ իրը համան հայ ազգի ներկայացուցիչ, որին համան հայ ազգի և վերչնիս հովանաւորող ոռուս պետութեան մասնամուսա վստա-

13) Տես Ն. գ. Մելիք-Թանգեան՝ «Հայոց եկեղեցական իրաւունքը. Բ. Գրքը. Կազմակերպութիւն և Կառավարութիւն», 1905 — 907 թ թ., Շուշի, էջ 124^я է, ը:

14) Տես «Մշակ», 1908 թ., № 114^я «Կաթողիկոսական պատուիրակների ժողովը Թիֆլիսում»:

հութեամբ իւրացրւած է հայ ազգի ամենանւիրական սրբութեան՝ «Եկեղեցու Հոգու» անխափան պահպանութեան և հաւատարիմ ներկայացուցչութեան նւիրական պարտաւորութիւնը: Եւ ազգիս Վեհափառ Հովւապետ՝ իր այդ նուիրական պարտաւորութիւնն իրագործելիս՝ Աստված է, — Աստված է՝ իբր Տարր՝ իր Տարրի այս յատկութիւններով, իր անհատական ըմբռունումներով, իր, այսպէս ասած, Տրամադր և Էարոյական կարողութեամբ՝ անհատական խղճնիւն: Եւ այդ գէպքում ու Գրիգոր Լուսաւորչի Գահի վրա բազմող Հովւապետի իրաւունքը (Պարտաւորութեան իբահանացունը — id), ինչպէս Փիլիսոփաներն ասում են՝ սա սեբե Ճօվլեւետե — ի՞նքն է իրեն բնորոշում՝ դառնալով անհատական խղճի, անհատական մտաւորականի-բարոյականի թելազրութիւն-հրահանգ-պատվիրան, հետեւապէս՝ անցնելով, այսպէս ասած, օրէնիւն պէնը՝ միւս կողմը¹⁵⁾:

Այդ վերջին՝ օրէնիւն պէնը՝ միւս կողմն անցնող անհատական մտաւորականի - Էարոյականի թելազրութիւնների, մարդկային խղճն պատվիրանների-հրահանգների սկզբունքն ամենելին խորթ չի, ի միշի ալլոց, ուուս Պետ. Օրէնքի ողբոյն ևս: Արժէ ուշադրութեան առնել գէթ դիմացի կողմերի աղաս մըցութեան սկզբունքի և հրապարակի ներկայացուցիչների (սудъ присяжныхъ) ինսափառուաի մուտքը պետական դատա-

15) Տես ևս իմ «1905 Թւի օգոստոսի 1-ի Ուկազը և Ժամանակաւոր կանոնները», էջ 34—56 և այլն, ևս իմ «Դարքոցների նիմական-դրամական ապահովութեան հարցը. 1. Հայոց Թեմական Հոգեւոր Դպրանոցների եկամտի աղբիւրները», էջ 18—26:

վարութեան պրոցեսում¹⁶⁾): Վերջապէս, չէ որ երբեմն նոյն իսկ բարձրագոյն ատեանների որոշումները, թէև կալացրած ըստ ամենայնի «ըստ օրինի», սակայն ներկայացնուում են նորին Կայսերական Մեծութեան բարեհայեցողութեանը...

Ամենայն հայոց Վեհափառ Հովհանքեար Ախանջը պաշտօնեայ է իր այն ամեն գործողութիւններում, որոնք լրիւ, մանրազնին շեշտած են Պետ. Օրէնքներում, և, սրան կից, ամենայն հայոց Վեհափառ Հովհանքեար՝ մնալով իսկ հայ-Լուսաւորչական եկեղեցու «առաջին պաշտօնեայ—սպասաւոր»՝ Ախանջը պէտք է իր այն ամեն գործողութիւններում, երբ «քննաւութեանը» ամենում պահպանութիւններում առաջին պատասխանակի գործողութիւններում նրա իրաւունքն in actio անցնում է, այսպէս ասած, օրէնքից դէմ՝ մէս « իրավունք, նրա որոշումներն՝ անդնդնելի և անդնդնելի:

Ասպա, սրան կից, կարող են պատահել հարցեր, որոնք նախատեսնած չեն Պետ. Օրէնքի տեկստում: Այդ վերջին տեսակի հարցերը «представляются отъ нея (власти Министра Внутреннихъ Дѣлъ)— ներկայացնուում են նրանից (ներքին Գործոց Նախարարից)», որին ենթարկւած են օտար գումանութիւնների գործերը,—«въ Департаментъ Духовныхъ Дѣлъ Иностранныхъ вѣроисповѣданій на Высочай-

¹⁶⁾ Համեմատիր проф. Л. Владимировъ: „Уголовный законодатель какъ воспитатель народа“, Москва, 1903 г., էջ 58—59 և 105—106:

шее разрешение, установленнымъ для того по-
рядкомъ—*Ալաղաւանների հոգեռը գործերի գեղար-
տամենոր Բարձրագոյն որոշման՝ սահմանւած կարգով*
(յօդ. 13, 14, 15):

Ի հարկէ, ամենայն հայոց Վեհափառ Հայրապետին՝
ոչ պաշտօնապէս, ոչ բարոյապէս իւրացրւած չի իրա-
ւունք՝ «փոփոխելու կամ վերացնելու օրէնքները, հնուց
մեզ աւանդւած նւիրական կարգերը»: Ոչ: Նա՝ և պաշ-
տօնապէս, և բարոյապէս պարտաւոր է ամենայն «Յըշ-
տութեամբ կատարել և պահպանել» այդ ամենը: Սա-
կան որոշ հարցերում, երբ ամենայն հայոց Վեհափառ
Հայրապետը չունի հանդիսանալու միայն «какъ пред-
съдатель—իфр նախագահ» ո. Էջմիածնի հայ-Լու-
սաւորչական Սինոդի (յօդ. 1146), ի՞նքը Պետ. Օրէնքը
պաշտօնապէս իւրացրել է նրան իրաւունք՝ գործել—
որոշել վերջնականապէս—«рѣшаеть окончательно»,
ըստ ի՞ն անհատական բարեհայեցողութեան, հրահանգ-
ներ տալ՝ ըստ ի՞ն անհատական մտաւորականի-բարո-
յականի՝ խզէ:

Այդ մտքով ամենայն հայոց Վեհափառ Կաթողի-
կոսը լետուղ ալեա է: Եւ այդ անվիճելի՛ է:

Ամենայն հայոց Վեհափառ Կաթողիկոսը լետուղ ալեա
է ոչ մայն հայ եկեղեցու «օրէնքների պահպանութեան
վրայ հակելու» իմաստով, այլ և՝ իր մի անհատ—ալեա,
որին իւրացրւած է իրաւունք՝ «ուղեցոյց առնելով
(руководствуясь) հայ-Լուսաւորչական եկեղեցու հր-
նուց գոյութիւն ունեցող որոշումները և լուսով նախօ-
րօք Էջմիածնի Սինոդի կարծիքը, վերջնականապէս ո-
րոշ գաւանական, ժամասացութեան և նման տեսակ
հարցերին ամեն ինչ վերաբերեալը»: Ասել է՝ ամենայն

հայոց Վեհափառ Հայրապետին իւրացըւած է Եվս-
տանի՝ ընթանալ ըստ Եւ անհատական մտաւորականի-
բարոյականի՝ խզի հրահանգների-պատւիրանների, ի-
րեն միանդամայն աղատ զգալով կոլլեգիալ հաստա-
տութեան, որպիսին է ս. Էջմիածնի հայ Լուսաւոր-
չական Սինոդը (յօդ. 1146), ամեն քայլափոխը կար-
դագրող, զեկավարող Պետ. Օրէնքի յօդւածների կա-
պանքներից, — մի իրաւունք, որից, կրկնում եմ, պար-
է յիրաւի զուտ պաշտօնեալ՝ Տ. Տեղակալը (յօդ. 1148)
և ս. Էջմիածնի Սինոդը՝ իր պրոկուրորի-գատախա-
զով հանդերձ: — Ի դեպ. վերջինս՝ պրոկուրոր, ըստ
Պետ. Օրէնքի, յատկապէս «имъеть на блюденіе за
дѣлами судебными и распорядительными, въ
семъ Синодѣ производящимися — сънѣ հավելո-
դոյն այդ Սինոդում տեղի ունենալիք դատական և վար-
չական-կարգադրական դորձերի վրա (նկատմամբ?)»
(յօդ. 1152)...

Ահա ս. Էջմիածնի Սինոդի՝ իրը կուլեժիալ մարմնի
այլօրինակ գործողութեան վերաբերեալ մի-երկու իլ-
լիւստրացիա-լուսաբանութիւն, և այն՝ պրոկուրորի
ներկայութեամբ — «հսկողութեամբ» անցածից, — իլ-
լիւստրացիաներ, որոնք բերում եմ այստեղ համաձայն
Սինոդի նախկին անդամ՝ Բարգուղիմէոս Եպիսկոպոս
Գէորգեան-Ճուղուրեանի մի աշխատութեան, ուր՝ իրը
յաւելւած, ի միջի այլոց, կցած կայ ս. Էջմիածնի Սի-
նոդի երկու՝ մել հետաքրքրող հարցի տեսակէտից վե-
րին աստիճանի հետաքրքրելի ալաշոծնական օրագրների
հետեւալ կտորները (օրագրներում ամենայն ուշագրու-
թեամբ ի նկատի են առնւած՝ Սսի ժողովը, Հայտս-
տանեալց եկեղեցու կանոնագիր Հայրերը և այլն):

ա) «հ 11-ն յունվարի 1892 ամիս ըստ հրամանի
Նորին Կայսերական... Սինոդս ի 26 նոյեմբ. անցելոյ
1891 ամիս... Հրամայեցին... որպէս ասացեալ է ի վեր
անդք յօրագրի, նախ՝ «Եկեղեցւոց մերոյ միավոյ է
անկ կարգել կամ խափանել զօրէնս», ըստ այնմ. «Ոչ
է պարտ զվարութեաց սովորութիւն ի գաւառի Եկե-
ղեցւոյ նորածել զվիճակաց, և զաթոռոց, և զժո-
ղովրդոց ասէ, և Եթէ փոփոխել յասացելովդ կամի որ ի
Հայրապետաց՝ ժողովու պարտի առնել՝ որ է անվտանգ
ըստ դատաստանի գրոց» (Կանոնագիրք Սինոդի, Եր.
466. կանոն ՌԶԴ). և Երկրորդ՝ ըստ Պօլօմենիալի և
յօդուած 10, 25, 40, 41 և 42, յատուկ պարտա-
ւորութիւն է Հայրապետի ամենայն Հայոց ճիշդ պահ-
պանութիւն կանոնաց և արարողութեանց դաւա-
նութեան մերոյ ըստ հրահանգութեան նախնի կա-
նոնագրութեան Լուսաւորչական Եկեղեցւոյ և տալ
բացարձակ որոշում (резոլուցիա) է Խոհեման և է Վճիւս-
հոգեւորաց Ուստի չեն մեզ իրաւունք ի նորոյ կանո-
նագրելոց՝ «Թոլլատրել զպասկի 7-րդ աստիճանի ազ-
դակցութեան հաւասարապես վասն ամենեցուն»։ Նոյն-
պէս և «Ն բացարարակեաւ: Դիցուք ասա և վկայութիւն
«Ամուսնութիւն ըստ Հայոց Եկեղեցական իրաւաբա-
նութեան-իրաւաբանական հետազոտութիւն» ի ծան-
րակշիռ աշխատութենէ կանգիտատի Մոսկվայի Հա-
մալսարանի իրաւաբան Վահան վարդապետ Բաստա-
մեանց. «Ռուսական պետական օրէնքը, որ վերա-
բերում է Հայաստանեաց Եկեղեցւոյ կառավարութեան
կայսրութեան սահմանում, ճանաչում է Երև Եկեղեցա-
կան վարչութեան վահան վաստական վիճակը չհասութեան
մասին վարուել Եկեղեցական կանոնով։ Բայց կոնսիս-

տորիաները, կամ որ նոյն է առաջնորդները չհասութեան բարակութեան դէպքերում պարտաւոր են դիմել ո. Էջմիածնի սինողին (Сводъ законоовъ, т. XI ч. I. стр. 985 п. в.), որը իրաւունք ունի ժենել չհասութեան հարցը, որպէս պատկից առաջ, նոյնպէս և պատկից յետոյ (ст. 938 п. 7 того же зак.): Սակայն որովհետեւ նոյն օրէնքը ճանաչում է ընդհանուր Հայոց Կաթողիկոսի գերադայն իրավունքը պատկից յետոյ (929 того же зак.), իսկ չհաս ամուսնութիւնների թոյլ տալլը, այսինքն Եկեղեցական հանոնից բացառութիւնների անելը կըրում է կրօնական կերպարանք, ուստի ո. Էջմիածնի սինողը չհասութեան հարցերի մէջ վարւում է կանոնիները հրահանձնելով և պատուելով («Փորձ» 1881 թ. № V, էր. 22):

բ) «30 յունարի 1892 ամի, ըստ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան Ինքնակալին Ռուսիոյ ի Լուսաւորչական Հայոց Սինողի սրբոյ Էջմիածնի լուսականութեամբ անդամք բարւոք համարէին թողուլ նոյնութեամբ զկննուսեալ գործ պատկին այնորիկ և բարեհայեցողուն ընտրելու Հայրապետի աղքէն՝ համաձայն 40, 41 և 42-րդ յօդւամոց Բարձրագոյն հաստատեալ Պօլօմէնիայի... ուստի գործն այսորիկ... ի վերէ քան զիրաւասութիւնս սինողին»:

«Սինողի պ. պրօկուրոր Կանչելին,—աւելացնում է այդ օրագրին Բարդուղիմէոս Էպիսկոպոսը,—յատկապէս եկած ներկայ էր Ատեանում այս օրագրի ընթերցմանը և մեր անդամոց ստորագրելուն»¹⁷⁾:

¹⁷⁾ Տնս Բարդուղիմէոս եպիսկոպոս Գէորգեան-Ճուղուրեան՝

Բարդուղիմէոս Եպիսկոպոսի աշխատութիւնից վերը
քաղաքում արած ընդգծումները իմա են: Եւ այդպիսով
ընդգծած դալիս է միանդամ ևս ճշտելու ամենայն
հայոց Վեհափառ Հայրապետի Անդը պետք լինելու-
թեան, նրա իրաւասութեան անսահմանութեան - Անդը-
բանական նկատմամբ պաշտպանածս թեզը:

Ապա՝ թէ ռուս Պետական Օրէնքի տեսակէտից ի՞նչ
մաքով պիտի հասկանալ «հայոց Եկեղեցին իր կարգե-
րով ժողովադատական է, նրա հոգին առնձնադրական»¹⁸⁾
թեզը, — մի թեզ, որով կամին ժխտել ամենայն հայոց
Վեհափառ Հայրապետի իրաւասութեան անսահմա-

«Խորենացոն Խորենացով պէտք է հասկանալ», երկրորդ հատոր,
Թիֆլիս, 1902 թ., էջ 174, 193—195, 197—198, 202—
203:

18) Ի դէպ.

«Ժողովրդական» — «սահմանադրական» տերմինների
տեսակէտից ուշագրաւ է հետևեալ վկայութիւնը՝

«Խուսաց մէջ — կարդում ենք Ն. Գ. Մելիք-Թանգեանի վերը
լիշտած նոյն աշխատութեան մէջ՝ մի երկու էջ լետոյ — Պետրոս
Մեծի շնորհի Եկեղեցին ենթարկուեց նոր վարչական կազմա-
կերպութեան, կայսրը համարուեց գլուխ եկեղեցու և բարձր օրէնս-
դրական իրաւատէր: «Բոլոր օրէնսդրական կարգադրութեան սկզբ-
ընական հիմունքը եղել է, ասում է Սոկոլովը Մեծն Պետրոսի
արած այդ կարգադրութեան վրայ խօսենք, դարձնել Եկեղեցա-
կան իշխանութիւնը Խուսաստում պէտական կառավարութեան
մի ծառայողական գործիք՝ իւր նպատակներին հասնելու համար,
և հաւասարացնել Եկեղեցական իշխանութիւնը պետութեան միւս
վարչական հաստատութիւններին, ենթարկելով նրանց նոյն կեր-
պարանքին և տալով նոյն տիպը» (Պր. Օбоզ. 1870 թ.): Հայոց
Եկեղեցին Խուսական տիրապետութեան ներքոյ ստա-
ցաւ այն կերպարանքը, ինչ որ ուսւականը Պետրոս Մե-
ծից սկսած» (Տես Ն. Գ. Մելիք-Թանգեան՝ ibid, էջ 175)...

նութիւնը,—այդ հարցն ես աշխատել են արդէն ըստ
կարեացս, ի միջի այլոց, պարզել՝ օգտուելով պատեհ
առիթից¹⁹⁾...

Ա. Տ կ ո ւ կ ո ւ մ ն

«Կաթողիկոսական ընտրութեան համար գումար-
ւելիք չամազգային ժողովը պէտք է արդեօք սահ-
մանափակէ կամ, աւելի ճիշտ, որոշ շրջանակի մէջ դնէ
կաթողիկոսի անսահման իրաւասութիւնը»—կարգում
ենք «Հովիւ»-ի 1907 թւի № 46-ի երկառող խմբագ-
րականում:

Ի մի խմբելով ամեն վերն ասած՝ պատասխանում եմ.

1) Ամեն պաշտօնական մարմին պիտի լրացնի իր
զբաղմանց պաշտօնական օրակարգը:

2) Որոշ պաշտօնական միսսիայի նկատմամբ գոյու-
թիւն առաջ պաշտօնական մարմնին չէ զլացւում նաև-
նառարարութեան զբաղուել մասնաւոր հարցերով:

3) Կաթողիկոսի անսահման իրաւասութեան «սահ-
մանափակման կամ, աւելի ճիշտ, որոշ շրջանակի մէջ
դնելու» հարցը համազգային ժողովի նաևառոջ զբաղ-
ման առաջարկելիս՝ պրակտիկ տեսակէտից անհրաժեշտ
է զեկավարուել ակրող Պետական Օրէնքի բուն տեկս-
տով, ասել է՝ անհրաժեշտ է զատել այդ տեկստի տե-
սակէտից ընդունելը՝ հարցեր-որոշումները նոյն տեկստի
տեսակէտից անընդունելը՝ հարցեր-որոշումներից:

19) Տես իմ, ի միջի այլոց, «Հայոց եկեղեցական ծուխի իրա-
ւասութեան իմնդիրը» յօւթածը («Նոր-Դար», 1902 թ. № № 77
և 78—արտատպում է ստորկ), ևս՝ իմ «1905 թւի օգոստոսի
1-ի Ռւկագը և Ժամանակաւոր կանոնները»):

4) Կաթողիկոսին՝ Պետական Օրէնքից գծած «անսահման իրաւասութեան» սահմանափակման, ասել է՝ կաթողիկոսին՝ իրը լեսուաց ովքա չընդունելու—չնանաչելու դէպքում, նաև, գոնէ ոռուս պետութեան սահմաններում, կլառնայ պատուական պաշտօնեայ՝ սինողի նախագահ՝ sui generis—իր տեսակի տեղակալ, և ոչ ամենայն հայոց Վեհափառ Հովւապետ:

(«Որոշ շրջանակ» խօսքերի իմաստն առածգական է):

5) Այդ վերջին (4) կէտում զրի առածը պիտի ի նկատի ունենան այն ամենքը, որոնք թերեւս նախագծում են ամենայն հայոց Վեհափառ Հայրապետի իրաւունքների այն տեսակների սահմանափակումը, որոնք բարակացնելու շեշտած կան Պետ. Օրէնքի XI հատ. I մասի (հրատ. 1896 թւի) յօդ. 1117-ում:

6) Արդի կացութեան (ազգային-քաղաքական) պարմաններում ամենայն հայոց Վեհափառ Հայրապետի իրաւասութեան սահմանափակումը—ինչ «սահմանում», ինչ «շրջանակում» էլ իրագործւելիս լինի այն—ամենայն հեշտութեամբ կարող է առիթ հանդիսանալ պետութեան համար ևս զբաղւել նոյն հարցով:

7) Վերջին 6-րդ կէտում շեշտածիս նման հետեւանքներին ամենայն հաւանութեամբ կհանդիպենք այն ամեն անգամները, երբ տքնելիս լինենք որոշել մեր գուտ հայկական հարցերն ամենայն հայրապետութեամբ նորագոյն ժամանակի պէս-պէս կուլտուր-քաղաքական յաղթութիւններին, սակայն, միաժամանակ, անտես առնելով շրջապատի պահանջները և այն, որ մենք երեք պետութեան ստորագրեալ ազգ ենք:

8) Ընդհանուր առմամբ, մենք աւելի քիչ առիթ ունենք երկիւղ կրելու համայն ազգից ընտրւած կա-

թողիկոսի «անսահման իրաւասութիւնից» քան՝ կա-
թողիկոսական ընտրութիւնը և նոյն իսկ ընտրւած
Կաթողիկոսին իրենց անհասական կամ խմբական շա-
հերին ժառայեցնել տքնողներից:

9) Կաթողիկոսական «անսահման իրաւասութեան»
երկիւղն ամենեին չքանում է, երբ ընտրութիւնը յի-
րաւի հաճաղլային է, բւեատւութիւնը՝ ապագ:

$19\frac{XII}{19}07\text{թ.}-19\frac{V}{28}08\text{թ.},$

Մոսկվա:

II.

«ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԾՈՒԽԻ ԻՐԱՀԱՍՈՒ-
ԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ»²⁰⁾

Դոյն այդ վերնագրով մի ընդարձակ յօդւած է հրա-
տարակել Թիֆլիսի Քամոյեան եկեղեցու ծխական պ.
Յ. Սպենդիարեանը²¹⁾:

Ցաւօք սրտի պիտի ասել, որ պ. յօդւածագիրը զերծ
չի մնացել այսօր մեր մէջ տիրող սովորութիւնից՝ նոյն
խակ ժանրակշիռ հարցերն որոշել, թէև յիրաւի որոշ,
սակայն երբեմն վիճելի հիմունքներից հետեցրած «ըս-
կրպունք»-ի տեսակէտից: Սկզբունքների երբեմն ան-
ցողական՝ («փոփոխելի») փայլն այսօր այնպէս գրաւում-
կաշկանդում է մեր իմացականութիւնը, որ մենք ա-
մեն ինչ պարզւած-բացատրւած ենք կարծում, եթէ
յաղթւած են միայն և եթ պրամաբանական խոչնդու-
ները: Կարծես մի տեսակ մշուշ է իշնում շարունակ
տարիների իրականութեան վրա և «հին կարգերը»
պատկերանում են մեր առաջ աւելի ևս «հնացած»՝
անպէտքացած — յամենայն դէպս՝ («անցած-գնացած»):
Տըսմանօքն բաւարարութիւն տալով մեր սկզբունք-
ների թելադրութիւններին՝ մենք, կարծես կորցնում
ենք «անցած» և արդի փասաերի իրականութեան ի-

²⁰⁾ Արտատպւում է «Նոր - Դար»-ի 1902 թւի № № 77—
78-hg:

²¹⁾ Տես «Մշակ», 1902 թ., № № 78—79:

մաստն բմբոնելու ընդունակութիւնը։ Մենք խօսում
ենք 1836 թւի «Պոլոյշենի»-ից, որը «հիմնված է
հայոց եկեղեցական կանոնների և աւանդութիւնների
վրա», մենք վկայում ենք, որ «այդ երեսում է Նիկո-
ղայոս Ա Կայսրի նոյն թւի մարտի 11-ին շնորհած
հրովարտակի բնագրից, ուր առանձնապէս ընդգծված
է Կայսրի ցանկութիւնը անխախտ պահպանել հայոց
ազգի եկեղեցական օրէնքները և հին սովորութիւն-
ները», որ «Պոլոյշենի»-ն «մի հիմնաւոր և նշա-
նաւոր փաստ է, որից չը պիտի շեղվեն վիճող կող-
մերը, քանի որ միայն այդ օրէնքով որոշված են Յով-
հաննէս Կարբեցու ժամանակից հայոց եկեղեցու իրա-
ւունքները և արտօնութիւնները»—և, միաժամանակ,
«գովիլի» հրատարակում «Թայշ Վերջին ժամանակնելու»
երեան եկած «մի քանի ժխական համայնքների ծրգ-
տում»-ը՝ «խորտակել այն կատանքները, որոնք պա-
քան ժամանակ» կապում - ծուլում էին եկեղեցական
ժուխն իր եկեղեցու թարծրագոյն և ստորին պաշ-
տօնեաների հետ և ապա, կարծես մշուշի մէջ նշմա-
րելով Պետական Օրէնքի (նոյն «Պոլոյշենի»-ի) որոշ
յօդւածների պարզ իմաստը, հրաւեր ենք կարդում նրան
—ծուխին՝ գէմ-յանդիման ելնել այդ պաշտօնեաներին,
իսկ, «եթէ ծագէ ո՞ւ և է անհամածայնութիւն ծուխի
և կոնխիստորիայի մէջ», գործը հասցնել «մինչև կա-
ռավարչական Սենատ» -ը, որովհեաւ — այս անդամ
մենք գնում ենք որոշ թեղ — չի կարելի «թողնել աս-
պարեզը գործելու անբնդունակ դասակարգին — մեր
հոգևորականութեանը».... Վերջապէս, այդ այդպէս
լինելով, այսօր մեզ, ի հարկէ, մնում է միայն ժաղըել
(մեր նախնիքների օրով) տեղի ունեցած «հին, ան-

յած-գնացած կարգերը », երբ « Եսլիսկոպոսն էր կատարում երեցփոխանական պաշտօնը»...

Կարճ, ըստ արդի «սկզբունքներ»-ի և այդ «սկզբունքներ»-ին կենդանութիւն ներշնչող տրամաբանական կանոնների թելագրութիւններին, վիճակային առեանը չունի իրաւունք պնդելու, որ «Պոլոյշեն»-ի հիման վրա ծուխը իրաւունք չունի խառնվել եկեղեցու տնտեսական-վարչական գործերի մէջ և թէ երեցփոխը (,) կոնսիստորիայի ստորագրեալ պաշտօնեալ լինելով, պարտաւոր. է զեկավարյիւլ միայն նրա տուած հրահանգներով, և ոչ թէ ծուխի վնիոներով», որովհետև «Երկուսից մէկը. եթէ երեցփոխը վիճակային ատենի պաշտօնեալ է, նա ծուխի հետ ոչ մի կապ չը պիտի (?) ունենայ, իսկ բանի որ օրէնքով երեցփոխը ժողովրդի ընտրեալն է և գործում է իրու նրա լիազօր ներկայացուցիչը, նա ծուխի կամքից դուրս գալ չէ կարող և հոգեւոր իշխանութեան հրամանը կատարում է միայն ծուխի գիտութեամբ և հաւանութեամբ և ոչ թէ նրանից անկախ. այլապէս VIII բաժ. III պլ. XI հ. I մ. Պետ. Օր., ուր լիշված է ծխական համայնքի և երեցփոխի գործունէութեան շրջանը և իրաւասութիւնը, կորցնում է իւր րaison d'être »: Ի վերջոյ, «հոգեւոր ատենի միջամտութեան առիթ տալ կարող է միայն երեցփոխի առաջնորդ գործողութիւնը, լինի դա արված ծուխի գիտութեամբ, թէ անդիսութեամբ. այդ է հսկողութեան սկզբունքի միակ (?) օրինաւոր հետևանքը: Իսկ այդպիսի դէպքերից դուրս հոգեւոր իշխանութիւնը իրաւունք չունի ծուխի տեղը բռնել և երեցփոխի միջացով ամեն իր հրամանները կատարել առաջ, ասելով՝ ես եմ քո իշխանաւորը, իսկ դու

իմ հնազանդ պաշտօնեան։ Այդ կը լինէր անսանծ կամայականութեան և անծնական համոյքի իշխանութիւն, որ ոչ մի հասարակաց գործում ընդունելի սկզբունք չէ։ Իսկ այսուեղ դրած կոնկրէտ հարցին վերաբերեալ պ. յօդւածագիրը՝ «հասարակաց գործ» ասելով, անշուշտ, ի նկատի ունի այն, ինչ վերաբերում է «միան վերջին ժամանակ» իր նկատած «մի քանի ծխական համայնքների կողմից գովելի ձգտման»-ը։

«Մենք ուրախ սրտով ողջունում ենք ծուխի առաջին դիտակական քայլերը և հաւատում ենք, որ այդ հասարակական խմբերի հաւաքական աշխատանքը բարեյացող հանդամանքներում կարող է ստեղծել գործունէութեան փայլուն շրջան»—այդ են յիշածս յօդւածի վերջին տողերը,—մի յօդւած, որով այնքան յանիբաւի հարւածներ է թափւում այն ամեն կարգերի և սովորութիւնների վրա, որոնցով ցայսօր կանգուն է չայստանեաց Եկեղեցին, և այնքան շուալրութեամբ գովեստներ վատնուում առայժմ գեռ ոչ ներկայ և ոչ ապագայ ունեցող «մի քանի ծխական համայնքների ծրգտման»-ը՝ «խորտակել» դոյն այդ՝ Եկեղեցու պաշտօնեանների և ժողովրդի մէջ ցայսօր գործող կարգերը և սովորութիւնները...»

Եւ ահա այդպիսի յօդւածներ դրող և հրատարակող մեր օրէնսգէտ (SIC!) հրապարակախօսներն երագում են՝ վերջ տալ (մեր կեանքի տիսուր իրականութեանը, ուր անթափանցելի խաւարի մէջ ագիտութիւնը և անբարուսականութիւնը ծեռք ծեռքի տուած աւելիչ գործ են կատարում...)»

Զարմանալի՞ միամտութիւն...

Դիմենք, ուրեմն, Պէտական Օնկուֆն և աշխատենք

լոմբունել այստեղ գրած խնդրին վերաբերեալ Օրէնքի յօդւածների լիրաւի «անվիճելի» իմաստը: Հարկ է առել, որ մեր խօսքը չի լինելու մայրաքաղաքների — Մոսկվայի և Պետերբուրգի հայ եկեղեցիների մասին, քանի որ այդ եկեղեցիները՝ իրք բացառութիւն — կառավարւում են առանձին կանոնադրութեամբ (XII հատ. I մաս, հրատ. 1896 թ., յօդ. 1237—1245):

Բայտ Պետական Օրէնքի XI հատորի I մասի (հրատարակութիւն 1896 թւի²²⁾՝ հայ եկեղեցու ժամասցութեան և հոգևոր գործերի կատարման (ուղարկեալ իրաւունքը վերապահում է հայ հոգևորականներին և այդ լինում է համաձայն հայ եկեղեցու օրէնքներին և պաշտօնական աստիճանաւորութեանը (законовъ и чиноположенія) (յօդ. 1111): Ամենայն հայոց Վեհափառ Կաթողիկոսին իւրացրած են այդ եկեղեցուն վերաբերեալ գերազոն վարչութեան և բարձրագոն հսկողութեան իրաւունքները (յօդ. 1117): Ամենայն հայոց Վեհափառ Կաթողիկոսը, ուղեցոյց առնելով հայ եկեղեցու հնուց գոյութիւն ունեցող որոշումները և լսելով նախօրօք ո. Էջմիածնի Սինոդի կարծիքը, վերջնականապէս որոշում է գաւանական, ժամասցութեան և այլ նման տեսակ հարցերին ամեն ինչ վերաբերեալը (յօդ. 1132): Ամենայն հայոց Վեհափառ Կաթողիկոսն է, միաժամանակ, նախագահ ո. Էջմիածնի Սինոդի (յօդ. 1139). վերջնիս իւրացրած է բոլոր հայ եկեղեցիների գոյքի (նույսաւո) պէս-

²²⁾ Ստորև տեկստում պատահելիք «Պետական Օրէնք» խօսքերը ամեն անգամ պիտի հասկանալ՝ իրք Պետական Օրէնքի XI հատորի 1 մասը (հրատարակութիւն 1896 թւի):

պէս կառավարութեան ընդհանուր հսկողութիւնը (յօդ. 1222): Թեմական առաջնորդները լիակատար հսկող-
ղեկավար (общий надзоръ— полные-начальники)
են իրենց թեմերի եկեղեցիների գոլքի պէս-պէս կա-
ռավարութեան (յօդ. 1170, 1222) և պատասխանա-
տու են բաղաբական բարձրադրոն և իրենց հոգեոր
իշխանութեան (յօդ. 1117, 1170, 1222) առաջ. նր-
անց օգնում-նպաստում են թեմական կոնսիստորիա-
ները (յօդ. 1170), որոնց նախագահներն են իրենք
թեմական առաջնորդները (յօդ. 1183): Թեմական առ-
աջնորդները պարտաւոր են անծամբ կամ իրենց ներ-
կայացուցիչների միջոցով տարին գէթ մի անգամ շըր-
շել իրենց թեմերը՝ վերահասու լինելու թեմի գործերի
դրութեանը (յօդ. 1176) և եկեղեցական գոլքին (յօդ.
1180) վերաբերեալին: Թեմական կոնսիստորիաներին
վերապահւած է անմիջական (непосредственный)՝
հսկողութիւն թեմի եկեղեցիների հոգեոր կազմի վրա,
թեմի եկեղեցիների բարեկարգութիւնը և գոլքի կա-
ռավարութիւնը (управление), եկեղեցիների դրամա-
կանը և մատեաններն ամեն ամիս քննել-ճշտելը, ս.
էշմիածնի Սինոդին ամեն տարի մանրամասն հաշիւ
տալը (յօդ. 1188, 1, 2, 4, 14, 15): Հոգեոր կա-
ռավարութիւններն ենթարկւում են կոնսիստորիանե-
րին և չեն կարող ոչինչ գործել առանց կոնսիստորիայի
առանձին յանձնարարութեան (յօդ. 1191). Նրանք հա-
ւաքում են կոնսիստորիաների համար կարեւոր տեղե-
կութիւնները (յօդ. 1192): Տայ եկեղեցիների շէնքերը,
նրանց մէջ եղած շարժական և անշարժ կայքը, նրանց
հողերը, դրամները, նրանց անւելիք նւիրաբերութիւն-
ները պատկանում են հայ եկեղեցուն (յօդ. 1212),

և այն՝ ոչ այս կամ այն եկեղեցուն զատ-զատ, այլ՝ բոլոր հայ եկեղեցիներին՝ իրը մի ամենով ջունակն (յօդ. 1213): Հայ եկեղեցու գոյրի մասնաւոր (частное—և ոչ непосредственное!) կառավարութիւնն անմիշապէս²³⁾ կախւած է երէցփոխից (յօդ. 1225), որին ընտրում է իր միջից ինքը ծուխն երեք տարով (յօդ. 1227) և որն ունի պարտաւորութիւն (օբյազնություն և ոչ իրավունք!)՝ հսկել (наблюдение) եկեղեցական գոյրի անձեռնմխելիութեան վրա, կառավարել (управление) եկեղեցական եկամուտները, յաճախել (хождение) պաշտօնական վայրերը՝ եկեղեցուն վերաբերեալ հարցերի դէպքերում, կառուցանել և նորոգել եկեղեցական շէնքերը, ըրէնով տալ այն և կատարել ամեն նման տեսակ գործողութիւններ. նա առհասարակ դործում է իրը ծուխի հաւատարմատար - նէրէայացուցին, սակայն ժանրակշիռ դէպքերում նա ունի իրաւունք (въ правѣ) պահանջել ծուխից առանձին հաւատարմաթուղթ: Ստանալով այդ առանձին հաւատարմաթուղթը՝ երէցփոխը հաւատարմաթղթում շեշտւած հարցերի նկատմամբ ամեննեին աղաս է որ և է պատահիսնատութիւնից ծուխի առաջ (յօդ. 1229): Երէցփոխը պարտաւոր է ամեն տարւայ վերշը հաշիւ տալ իր ընտրողներին — ծուխին և թեմական տտեանին — կոնսիստորիալին (յօդ. 1232): Հայ հոգևորական ոչ-կուսակրօն կազմը, որն ընտրում է հաստատուում է համաձայն Պետ. Օրէնքի IX հասորի (հրատ. 1899թ.) 500 և 501 յօդւածների, ստանում է իր սնունդը ծուխից (յօդ. 1146):

²³⁾ Այսինքն՝ երէցփոխը պիտի կառավարի և ոչ թէ՝ ծուխը:

Ահա՝ Պետական Օրէնքի այն յօդւածները, որոնք կապում-ծովլում են հայ ժողովրդին իր եկեղեցու և սրա պաշտօնեաների հետ: Ի՞նչ է սրանց համագումար իմաստը: Ահա թէ ի՞նչ.

Հայ եկեղեցին ունի հոգեւոր Պետ՝ յանձին ամենայն հայոց Վեհափառ Կաթողիկոսի, որը, միաժամանակ, նախագահ է ո. Էջմիածնի Սինոդի. Թեմական առաջնորդներ՝ իրենց ատեան-կոնսիստորիաներով և հոգեւոր կառավարութիւններով հանդերձ, անմիջական պաշտօնեաներ՝ քահանաներ և սպասաւորներ. Երէց-փոխ և ծուխ: Դրանց ամենքին՝ զատ-զատ իւրացրած են հետեւեալ որոշ իրաւունքները և պարտաւորութիւնները.

Ամենայն հայոց Վեհափառ Կոթողիկոսը գործում է իրը հայ եկեղեցու հոգեւոր լիազօր Պետ (յօդ. 1117, 1132) և իրը նախագահ ո. Էջմիածնի Սինոդի (յօդ. 1139): Ամենայն հայոց Վեհափառ Կաթողիկոսի և ո. Էջմիածնի Սինոդի անմիջական և լիակատար ներկայացուցին է ժողովրդի առաջ թեմական առաջնորդը (յօդ. 1170, 1222), որը գործում է և անձամբ (յօդ. 1176, 1180), և կոնսիստորիալի միջոցով (յօդ. 1188՝ 1, 2, 4, 14, 15), և հոգեւոր կառավարութիւնների միջոցով (յօդ. 1191, 1192), և յատուկ նշանակւած պաշտօնեաների միջոցով (յօդ. 1176): Եկեղեցին յանձնւած է ծուխի մասնաւոր հսկողութեանը և կառավարութեանը. ծուխը տիրանում է այդ իրաւունքներին՝ յանձին իր ընտրած ա) Երէցփոխի (յօդ. 1225, 1227) և բ) Եկեղեցու ոչ-կուսակրօն հոգեւորական կազմի (IX հաստ., հրատ. 1899 թ., յօդ. 500), որի անհրաժեշտ սնունդը մատակարարում է ինքը ծուխը

(յօդ. 1146): *Երէցփոխը, այսպէս ասած, կանգնած է ծուխի և հոգեոր իշխանութեան մէջ՝ իբր հաւատարմատար (Երբեմն՝ լիազօր) առաջնի (յօդ. 1229) և իբր գործակատար վերջնի (յօդ. 1170, 1222). նա ունի լրացնելու միայն ծուխի իբր իրեն ընտրողի (յօդ. 1227) և Երբեմն նոյնիսկ լիազօր հաւատարմատարութիւն տուղի (յօդ. 1229) նկատմամբ, իսկ հոգեոր իշխանութեան նկատմամբ նա ունի միայն պարագաներ-նո-նի-նելը (յօդ. 1229) և ոչ Երբէք՝ իրաւունքներ: Երէցփոխը, լինելով իսկ անմիջական մասնաւոր կառավարիչ եկեղեցու գոյըի (յօդ. 1225), միշտ՝ իր ամեն գործողութիւններում կախւած է հոգեոր իշխանութիւնից (յօդ. 1222, 1188 1, 2, 4, 14, 15) և պիտի ներկայանայ հոգեոր իշխանութեան առաջ՝ ոչ Երբէք իր, այլ՝ ծուխի նախագծերով-ցանկութիւններով (օնъ вообще действуетъ какъ уполномоченный отъ лица прихода—*բացի այն դէպքից,* երբ ծուխը տալիս է նրան լիազօրութիւն) (յօդ. 1229):*

Պետական Օրէնքի և ոչ մի յօդւածով իւրացրած չէ ծուխին իրաւունք՝ խառնւել եկեղեցու վարչական և այլ գործերին, բացի կաթողիկոս (յօդ. 1118, 1120) եկեղեցու Երէցփոխ (յօդ. 1227) և ոչ-կուսակրօն հոգեւորական կաղմք (IX հաստ., հրատ. 1899 թ., յօդ. 500) ընարելուց և տարւայ վերջն Երէցփոխի հաշիւր լսելուց (յօդ. 1232)²⁴⁾: Օրէնքի իմաստը պարզ է: Ե-

24) Պետ. Օր. XI հաստ. 1 մասի (հրատ. 1896 թ.) այդ 1232 յօդւածում պարզապէս շնչուում է, որ Երէցփոխը՝ ծխականներին ներկայացրած հաշիւր նոյնութեամբ (сей отчетъ) ներկայացնում է թեմի կոնսիստորիալին: Հետեւապէս՝ ծխական ժողովում Երէցփոխի հաշշի առթիւ անելիք նկատողութիւնների պաշտօնական իրաւական արժէքը հաւասարում է 0-ի...

թէցփոխը լունի իրադարձութելու կատարել Պետական Օրէնքի XI հաս. I մաս. (Դրաս. 1896 թ.) յօդ. 1229 - ուժ շեշտածը — նա պարտապահ է (յօդ. 1229) կատարել այդ ամենը. ապա՝ նա չունի իրաւունք դորժելու ինքնարերաբար կամ ի՞ր նախագծով, այլ ունի պարտապահութեան միշտ և համուրեք ընթանալու համաձայն ծոս-ինչ ցանկութեանը-նախագծին, — ծուխի, որին իւրացրած է միայն և եթ ցանկութիւններ արտայալաելու և նախագծեր յօրինելու — և ոչ երբէք՝ այն ի կատար ամելու — իրաւունքը: Երէցփոխը միշտ և համուրեք պիտի հանդիսանայ՝ իբր կենդրոն ծոս-ինչ ցանկութիւնների - նախագծերի, սակայն, այդ ցանկութիւնները-նախագծերն իրագործելիս, միշտ և համուրեք պիտի զեկավարւի՝ միայն և եթ հոգեոր իշխանութեան հրահանգներով (յօդ. 1170, 1222, 1232): Ծուխի կամքը զգալի և պարտաւորեցուցիչ պիտի լինի երէցփոխի համար (յօդ. 1229) և ոչ երբէք՝ հոգեոր իշխանութեան համար (յօդ. 1170, 1222, 1232): Պետական Օրէնքի և ոչ մի յօդւածի ոչ մի կէտում առւած չէ, որ երէցփոխն անկախ է հոգեոր իշխանութիւնից, մինչդեռ նոյն Օրէնքում պարզապէս շեշտած է, որ թեմական առաջնորդը լիակատար զեկավար (ПОЛНЫЙ начальникъ) է իրեն յանձնաւած թեմի ունենալով պատասխանաւութիւն միայն քաղաքական և հոգեոր Քարծրագոյն իշխանութեան առաջ (յօդ. 1170, 1222): Վերջապէս, յայսնի է, որ երէցփոխը, եթէ զգալի կերպով աւելացնում է եկեղեցական գումարները և կամ վարում է իր պաշտօն անքնդհատ ինն տարի՝ լիակատար բաւարարութիւն պատճառելով իր իշխանութեան (къ совершенному

удовольствію своего начальства), *ստանում է իրաւունք ներկայացնելու պարզեին ընդունւած կարգով* (յօդ. 1233):— Արդ, ժագում է հարց. Պետական Օրէնքի ո՞ր յօդւածում ծուխն իսկօրէն անւանւած է «իշխանութիւն — начальство», կամ ո՞ր յօդւածից կարելի է եղարկացնել ծուխի «իշխանութիւն — начальство» լինելը, և, սրա դիմաց, չէ որ նոյն Պետական Օրէնքն է, որ իր երկու յօդւածներում (յօդ. 1170, 1222) թեմական առաջնորդներին որոշակի անւանում է՝ «полные начальники — լիակատար զեկավար-իշխանութիւն», չէ որ ցայսօր հոգւոր իշխանութիւնն է եղել երէցփոխներին՝ իբր իրեն «ստորագրեալ» պաշտօնեաների պարզեին ներկայացնող...

Այդ այդպէս լինելով՝ թիֆլիսի վիճակային ատեանն իրաւունք ուներ օրինական իրաւունք պնդելու, որ «Положение» - ի հիման վրա ծուխը իրաւունք չունի խառնվել եկեղեցու տնտեսական - վարչական գործերի մէջ և թէ երէցփոխը (,) կոնսիստորիալի ստորագրեալ պաշտօնեալ լինելով, պարտաւոր է զեկավարվել միայն նրա տւած հրահանգներով, և ոչ թէ ծուխի վճիռներով): Եւ այդ է Պետական Օրէնքին՝ թելադրութիւնը և ոչ՝ հոգեւոր իշխանութեան աշխատելը՝ «ժողովրդին հեռու պահել եկեղեցու տնտեսական - վարչական կառավարութիւնից և այդ վերջինը իւր ձեռքում կենդրունացնելը»: Որ «երէցփոխներն իրենց գործավարութեան ծրագիրը և լիազօրութիւնը ստանան միայն վիճակային ատեանից» — այդ պահանջը դնում է ինքը Պետական Օրէնքը, և ոչ՝ «անսանձ կամայականութեան և անձնական հաշիւների իշխանութիւնը»...

Պ. յօդւածագիրը հականառում է.

«Ընդունենք, որ կոնսիստորիալի ասածը ճիշտ է,
բայց նույն՝ ինքը օրէնսդիրը երէցփոխին հանաչում է
իրեւ ծուխի ներկայացուցիչ և հաւատարմատար, որ
գործում է ծուխի անունից և նրա տուած լիազօ-
րութեան համածայն. նույն՝ առանձին յօդուածներով
որոշված են ծուխի և երէցփոխի փոխադարձ յարա-
բերութիւնները, երէցփոխի պատասխանատութիւնը
ծուխի առաջ, ծանրակշիռ դէպերում ծխականների
ընդհանուր ժողովից առանձին հաւատարմագիր ստա-
նալու անհրաժեշտութիւնը, իւրաքանչիւր տարի ծու-
խին հաշիւ տալու պարտաւորութիւնը և այլն։ Ո՞ւ-
տեղ է ասխած, որ երէցփոխը կոնսիստորիալի ստորագ-
րեալն է և պարտաւոր է ծուխից բոլորովին անկախ
կատարել հոգեսոր իշխանութեան հրամանները. այն
ժամանակ չ' նշանակունիւն ունի երէցփոխի ընտրր-
վելը ժողովրդից, ծուխի հաւատարմատար կոչվելը,
ծուխից գործավարութեան հաւատարմագիր ստանալը,
ծուխին իւրաքանչիւր տարի հաշիւ տալը և այլն։»

Պատասխանում եմ.

») Օրէնսդիր՝ հանաչելով երէցփոխին ներկայացու-
ցիչ և հաւատարմատար ծուխի՝ զրանով ո իսո
գեռ չի իւրացնում նրան իրաւունք՝ իրագործել ծուխի
ցանկութիւնները-նախագծերը՝ «բոլորովին անկախ»
հոգեսոր իշխանութիւնից։ Այլապէս, ինչո՞ւ օրէնսդիրն
անւանում է թեմական առաջնորդներին «Полные на-
чальники — Головкии и архитекторы» (յօդ. 1170,
1222): ԶԵ՞ որ զրանով օրէնսդիրը կամեցել է պարզել,
որ երէցփոխը յիրաւի՛ ներկայացուցիւն հաւատարմագիրը

Է ծուխի կողմից հոգեոր իշխանութեան առաջ, և ոչ
երբէք՝ հրամանադրաց առաջնի կողմից վերչնին...

բ) Որովհետեւ հաւատարմատարի «փոխագարձ յարաբերութիւն-
ները», հաւատարմատարի «պատասխանատութիւնը»
—մի ընդհանուր օրէնք է ամեն գործում և համուզեք...

գ) Իսկ «որտեղ է ասված, որ երէցփոխը կոնսիս-
տորիացի ստորագրեալը» չէ²⁵⁾ և պարտաւոր չէ «Ճու-
խից բոլորովին անկախ կատարել հոգեոր իշխանու-
թեան հրամանները»...

դ) Ունի այն «նշանակութիւնը», որ հոգեոր իշ-

25) Սպատեսակէտից ուշագրաւ է Կառավարիչ սենատի 1894
թւի հոկտեմբերի 26-ի հետեւալ վժիորը՝

«Ի նկատի առնելով... պատշաճաւոր օրէնքները, Կառավարիչ
Սենատը գտնում է՝ 1, որ 1857 թ. օրինաց XI հատորի ա. մ.
1010 յօդուածով ամենայն դոյլ, որ նշանակուած է Հայ-Լուսա-
ւորչական որև է եկեղեցու պահպանութեան համար (այսինքն
չէնքի) ամբողջ Հայ-Լուսաւորչական եկեղեցու (որպէս
իրաւաբանական անձի) սեփականութիւնն է. իսկ 938, 985
և 1021 յօդուածներով եկեղեցական գոյլերի կառավարութիւնը
պատկանում է Թեմական կոնսիստորիաներին Հայ-Լուսաւորչական
Սինօդի բարձրագոյն հսկողութեան տակ. մինչդեռ երեցփոխանը
1024 և 1028 յօդուածների հիման վրայ կոնսիստորիայից
կախումն ունեցող լոկ անմիջական մի վերահսկիչ է այս
կամ այն եկեղեցու գոյլքին բաժանաբար (առանձնա-
պէս): [Տես «Հովիւ»-ի 1907 թւի № 19-ում Բենիկ վարդա-
պետի՝ «Երեցփոխանութեան պարտուց և իրաւանց խնդրի շուրջը
յօդւածք:—Տես իս իմ՝ ա) «Ուշագրաւ առաջարկ (Հայաստանեաց
առաքելական սուրբ եկեղեցու ծխական կանոնադրութեան՝ նա-
խագծի առթիւ)»—«Նոր-Դար»-ի 1902 թւի № 121-ում և այլն,
բ) «Հայաստանեաց առաք. ս. եկեղ. ծխական կանոնադրութեան
առթիւ»—«Հովիւ»-ի 1907 թւի № 19-ում և այլն]:

խանութիւնը և ատեանները գործ կունենան մի՛ և
ոչ՝ հարիւրաւոր ։ հազարաւոր անձնաւորութիւնների
հետ, ապա՝ որ այդ մի անձնաւորութիւնը լինում է
օրինական ներկայացուցիչ որոշ անհասների, որ ծուխը
տեղեակ լինի թէ իր հաւատարմատարը որբան նրա-
տիւ է ներկայացրել իր ցանկութիւնները հոգեռոր իշ-
խանութեանը և ատեաններին և որպիսի տոկունու-
թեամբ է աշխատել համոզել-տրամադրել այդ պաշ-
տօնական մարմիններն յօդուա ծուխի ցանկութիւն-
ներին և այլն, և, ի դէպ երեցփոխի նշառապահու-
թեան, ազնւութեան և ընդունակութեան, թերեւ
կրկին և կրկին տալ նրան նոյն հաւատարմատարու-
թիւնը ներկայացուցչութիւնը (յօդ. 1227)...

Ահա «VIII բաժ. III զ. XI տ. I մ. Պետ. Օրէնքի
rasion d'être»՝ իմաստը....

Երկու խօսք ևս.

Պետական Օրէնքը, գրեթէ համուրեք հաստատ մնա-
լով չախատանեալց եկեղեցու ի վաղուց անտի գոյու-
թիւն ունեցող սովորութիւններին, կարգերին և որո-
շումներին, ապահով է մեղ որոշ հիմունքներ՝ սերա կա-
պերով կապւել-միանալու մեր եկեղեցու և նրա ներ-
կայացուցիչների հետ. նա նոյնիւ առանձին յօդւած-
ներում շեշտում է չախատանեալց եկեղեցու հնուց
գոյութիւն ունեցող որոշումների գորութիւնն այսօր
(յօդ. 1111 և 1232), — իսկ մեր միջից դուքս են գա-
լիս մի-մի անհասներ, որոնց մշուշապատ իմացակա-
նութիւնը թելազրում է — ծափահարէք «վերջին ժա-
մանակ»-ը նկատող այն «մի քանի ծխական համայնք-

ների գովելի²⁶⁾ ծգտմանը՝ խորտակել այն կապանք-ները, որոնք այսքան ժամանակ ծուխը պահում էին կաշկանդված (!), թողնելով ասպարէզը գործելու ան-ընդունակ դասակարգին—մեր հոգեւորականութեան), և այն, որովհետեւ այդ «ծգտում»-ն այդպիսով «բա-րեյացող հանգամանքներում կարող է ստեղծել գոր-ծունելութեան փայլուն (!) շրջան»...

«Փայլուն շրջան», որ պիտի ստեղծւի հայ եկեղե-ցու հովիւների և հօտի միջև ցալսօր գոյութիւն ու-նեցող կապերի առերանիւնի վրա՝ ի տես Պետ. առնող Օրէնքի, ի խրախոս այլոց կառեցուցիւ տրամադրու-թիւնների՝ հայ եկեղեցու, սրա Վեհափառ Հովւապետի պաշտօնական դիրքի և իրաւասութեան նկատմամբ...

«Փայլուն շրջան», որ «կարող է» ստեղծւել միայն և եթ «բարեյացող հանգամանքներում»... Սակայն չնա-նայ հայ եկեղեցուն և սրա հօտին... ի դեպ ան«բա-րեյացող հանգամանքներ»-ի...

Որպիսի՞ «անընդունակութիւն» ըմբռնել «գործե-լու ասպարէզը». որպիսի՞ մշուշապատ իմացականու-թիւն... Զի՞ որ մեր այդ «անընդունակութեամբ», մեր այդ մշուշապատ իմացականութեամբ իսկ լիրաւի՞ շեշտակի հրապարակ է բայցում այն ամենի առաջ, որ, ըստ ապ. յօրւածագրի, այլշեցնում է մեզ մեր կեանքի տիսուր իրականութիւնը, ուր անթափանցելի խաւարի

26) Ի դեպ.

Մերայնոց երբեմն այնքա՞ն սրընթաց ոստիւնների հանդէպ շեշտելի է, ի միջի այլոց, վերջերս ևս զրի առնւած խոհուն կոչը՝

«Փրկութիւնը պէտք է որոնել այն ապադայի մէջ, որ լինուած է անցեալի վրայ» (Տիս «Նոր-Դար», 1908 թ., № 1)...

մէջ տղիսութիւնը և անբարոյականութիւնը ձեռք
ծեռքի տուած աւերիչ գործ են կատարում»...

Ուշագրաւ է հետեւալ մանրամասնութիւնը ևս.

Պետական Օրէնքն ընդունում է բոլոր հայ եկեղեցիները՝ իրը մէ մունիշ-ամբողջունիւն (յօդ. 1212, 1213), այդ ամբողջունանը սեպհականացնելով մասնաւոր եկեղեցիների՝ շարժական, և անշարժ կալքը, գոյքը, զրամը և այլն: Ազգպիսով Պետական Օրէնքը կրկնակի շեշտում է Հայաստանեալց եկեղեցու՝ իր ամբողջութեան հոգեոր Պետի և սրա ներկայացուցիչների իրաւունքները՝ և առհասարակ, և մասնաւորապէս:

Ահա մի հանգամանք ևս, որով կրկնակի բացատրում է հայ եկեղեցու ծուխի և սրա ներկայացուցիչնաւոտարմատար երէցփոխի՝ ոմանց կարծեցեալ «իրաւունք»-ը. ահա մի հանգամանք, որը լրիւ պարզում է ոմանց «անընդունակութիւն»-ը ըմբռնել Պետական Օրէնքի «raison d'être»՝ ոգին, երբ նրանք պնդում են. «Երէցփոխն իրաւունք չունի առանց ծոս-լի գիտուննեան և հաւանա-նեան կատարել հոգեոր իշխանութեան պաշտօնական առաջարկը»:

Ո՞չ: Պետական Օրէնքը, հանաչելով հայ եկեղեցիներն իրենց կազմով և ամեն ունեցածով իրը մէ ամբողջունիւն, ոչ յօսո-գրանով իսկ զնում է իր veto-ն այն ամեն ճառաւոր համայնքների-ծուխերի «ձգտումներ»-ի—ցանկութիւնների - նախագծերի վրա, որոնք չեն արժանանալ ամբողջունան Պետի և նրա ներկայացուցիչների հաւանանութեանը և վաւերացմանը:

Ո՞չ: Հայաստանեալց եկեղեցու՝ իրը ամբողջութեան հոգեոր լիազօր Պետի կամ սրա ներկայացուցիչ պաշ-

տօնեաների և ատեանների «պաշտօնական առաջարկեները» չկատարող երեցիոիսն ունի ենթարկւելու օրինական պատասխանատութեան՝ իբր չկատարող իր «պարագաներուն»-ը՝ իբր զանցառու Պետական Օրէնքի (XI հատ., I մաս., հրատ. 1896 թ., յօդ. 1229) առաջ:

Այդ է և մի միայն այդ Պետական Օրէնքի XI հատ. I մասի—(հրատ. 1896 թ.)—«անվիճելի» «rasion d'être»-ը՝ թելագրութիւնը...

Ի վերջոյ: Բայ է որքան շողոքորթեցինք ամբոխացին երբեմն այնքան պախարակելի բնազգներին, այս՝ բայ է: Ժամանակ է ըմբռնել պետական նորմաները և ամենայն պարտաճանաչութեամբ խոնարհել այն թեզի առաջ, որ, մինչ այս—մինչ այն, իրեն՝ հօտի՛ց է կախւած—ճանաչելով և յարգելով հոգեւոր իշխանութեան իրաւունքուն սիրա, միջոց և յարմարութիւն տալ դոյն այդ հոգեւոր իշխանութեանը ընդլայնելու ականական կանոնում իր՝ դոյն այդ հօտին վերաբերեալ ունեցած բարոյական պարագաներուն շըրջանը...²⁷⁾

27) Ուշագրաւ է, որ 1905 թի օգոստոսի 1-ի Կայսերական Ուկանը ևս շեշտում է—«Բարուօր համարնլով հաստատել Սեր փոխարքայի առաջարութիւնը, Մննք ընդարձակ կրթական միջոցներ ենք շնորհում հայադաւան հոգեւորականութեանը ժողովրդի օգտին գործելու համար», և որ նոյն 1905 թի օգոստոսի 1-ի «Ժամանակաւոր կանոններ Հայ-լուսաւորչական եկեղեցիների գոլքերի կառավարութեան մասին Կովկասեան Փոխարքայութեան սահմաններում հրատարակութիւնը գալիս է մի անգամ ևս ամբագնդելու մեր հոգեւոր իշխանութեան և նրա Պետի՛ ազգին Վեհափառ Կաթողիկոսի պաշտօնական դիրքը և իրաւունքները՝ (Ցես իմ՝ «1905 թի օգոստոսի 1-ի Ուկանը և Ժամանակաւոր

Բնակչութեամբ է՞ս — իմ խօսքը Պլատոնիան Օքնիք XI
հասպարը I ճառի (Կրատ. 1896 թ.) պատմադրութեան
ճառին է ...

19^V/₅ 02 թ. — 19^{VIII}/₂₅ 08 թ.,
Հին-Նախիջևան — Մուկուս:

Կանոնները՝ Մուկուս, 1907 թ., էջ III, IX և այլն: Տես ևս ստորև՝
Գլ. III):

III.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՇԱՓՈՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԻՐԱԿԱՍՈՒԹԻՒՆԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ
ՀԱՏ ՈՈՒՄ ՊԵՏ. ՕՐԵՆՔԻ XI ՀԱ. 1 Մ.,
ՀՐԱ. 1896 Թ.

Ա.

Ազգիս Վեհի իրաւասութիւնը յատկապէս մեր Թէ-
մական Հագեսոր Դպրանցներէն հարցում, ի միջի այլոց,
ևս ևս պարզել եմ երբեմն՝ մի աշխատութեանս մէջ:
Ահա կարեսը հասուածը²⁸⁾.

Պետական Օրենքի (XI տ. 1, изд. 1896 թ.) 1117,
1132, 1141², 4, 8, 12, 13, 1146—1148, 1170,
1208²⁹⁾ և 1209³⁰⁾ յօդւածները, կարծես, հակա-

28) Տես իմ «Հայոց Թեմական Հոգեսոր Դպրանցների կանոնադրութեան նախագիծը», Սոսկւա, 1902 թ., էջ. 162—164:

29—30) Սյդ յօդւածները լիշտած չեն նախորդ էջերում: Ահա սրանց տեկստը՝

„1208. Курсъ ученія и весь внутренній распорядокъ въ Армяно-Григоріанскихъ духовныхъ семинаріяхъ опредѣляются особыми правилами, составленными духовными начальствами сихъ семинарій, подъ надзоромъ и руководствомъ Архіепископовъ, разсмѣрѣнными Эчміадзинскимъ Синодомъ и утвержденными высшимъ правитель-

սում են միմէանց: Սակայն այն հանդամանքը, որ «Армяно-Григоріанскіе Архіепископы суть полные въ Высочайше ввѣренныхъ имъ епархіяхъ духовные сего исповѣданія начальники и отвѣтствуютъ за управлениe оныхъ предъ высшимъ правительствомъ и предъ своимъ духовнымъ начальствомъ» (ст. 1170), прѣфіսին է, լստ. ст. 1111—2, և 1117-ի, ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը,

ствомъ.—^Թարգմանութիւնը՝ Հայոց Հոգևոր սեմինարիաների (=Թեմական Դպրանոցների) ուսման ընթացքը և ամեն ներքին կարգաւորումն որշուում են առանձին կանոններով, որոնք կազմուում են այդ սեմինարիաների հոգևոր իշխանութիւններից՝ արքեպիսկոպուների (=Թեմական առաջնորդների) հսկողութեամբ և նախագահութեամբ, քննուում են Էջմիածնի Մինողից և համատաւում պետական բարձրագոյն իշխանութեամբ։

„1209. Во всѣхъ церквахъ и монастыряхъ той епархіи, къ коей принадлежитъ семинарія, производится обыкновеннымъ порядкомъ сборъ въ пользу оной, и собранныя деньги отсылаются каждые три мѣсяца въ надлежащую консисторію, для доставленія семинаріи. Сверхъ того монастыри, ревнуя къ пользѣ Армяно-Григоріанской Церкви, приносятъ ежегодно изъ своихъ доходовъ особья суммы на содержаніе ихъ епархіальной семинаріи. — ^Թարգմանութիւնը՝ Այն Թեմի բոլոր եկեղեցիներում և վանքերում, որին պատկանում է սեմինարիան (=Հոգևոր Թեմական Դպրանոցը), յօդուա վերջնիս, ընդունւած կարգով, կատարուում է ժողովարարութիւն և ժողոված գումարներն ուղարկուում են ամեն երեք ամիս համապատասխան Կոնսիստորիային՝ սեմինարիային յանձնելու համար։ Բացի այդ, վանքերը՝ հոգալով Հայ-Լուսաւորչական Եկեղեցու շահը՝ յատկացնուում են ամեն տարի իրենց եկամտից յասուկ գումարներ՝ Թեմական սեմինարիաների պահպանութեան համար։

ппр «ни въ какомъ случаѣ не можетъ передать ни сему («Эчміадзинскому Армяно-Григоріанскому Синоду»—и. Եշմիածնի Սինոդին), ниже какому либо иному мѣсту или лицу, правъ и премуществъ, присвоенныхъ сану его» (ст. 1117), —աղդ հանգամանքից պարզ է, որ՝ «епархіальныя семинарій» (չ. Թ. չ. Դպրանոցներ) -ի գլուխում կ Պետական «высшее правительство»-ի և ամենայն չայոց Վեհափառ Կաթողիկոսի ձեռքերում:

Ապա՝ այն հանգամանքը, որ ս. Եշմիածնի Սինոդին վերապահւած է միայն «надзоръ за благоустройствомъ подвѣдомственныхъ Синоду... семинарій» (ст. 1141¹ 2) և «разсмотрѣніе» չ. Թ. չ. Դպրանոցների նիստու կացին վերաբերեալ «правила»-ների (ст. 1208), որոնք պիտի հաստատւեն «высшимъ правительствомъ» (ст. 1208), և որ ս. Եշմիածնի Սինոդը «во всемъ содѣйствуетъ» (ст. 1117) ամենայն չայոց Վեհափառ Կաթողիկոսին և ունի իր պարտաւորութիւնների շարքում, ի միջի այլոց, «изъявление мнѣнія къ вопросамъ, предлагаемымъ отъ Патріарха (Католикоса) на заключеніе» (ст. 1141¹ 12), —աղդ հանգամանքից պարզ է, որ՝ չ. Թ. չ. Դպրանոցներին վերաբերեալ հարցերը (բայց ի շահ չ. 13-ում շեշտած կէտերից) լուծելու իրաւունքը վերապահւած է միայն և նու ամենայն չայոց Վեհափառ Կաթողիկոսին և Պետական «высшее правительство»-ին, և որ՝ միայն և եթ ամենայն չայոց Վեհափառ Կաթողիկոսին է իւրացրած իրաւունք դնել Պետական «высшее прави-

тельство»-ի առաջ (ст. 1208) Տ. Թ. Հ. Դպրանոցներին վերաբերեալ այս կամ այն (բացի ст. 1141, 2, 4, 8 և 13-ում շեշտաւած կետերից) հարցը:

Վերը յիշածս հակասութիւնների առթիւ այստեղ ախնարկածս տեսակէտը բացայատս է Նոր-Նախիչևանի և Բեսսարաբիոյ թեժի Հոգեոր Դպրանոցի 1880 թւի յունիսի 27-ին Բայրութոյն հաստատած «Կանոնադրութեան» «Проектъ основныхъ правилъ»-ի յետագայ §§-ից ևս³¹⁾:

«§ 3. Семинария, состоя подъ главнымъ начальствомъ Святъишаого Патріарха Католикоса, находится въ ближайшемъ вѣдѣнии начальника Нахичевано - Бессарабской армяно - григоріанской епархіи, на котораго возлагается отвѣтственность за ея благосостояніе» — Թ. ապր. Հայութ Անդրեասի Անդրեասի «Գ. Դպրանոցն, լինելով ընդ գլւխութը իշխանութեանը Վեհափառ Պատրիարք Կանոնի կամացին հայոց, գտանի է Եղիշաւոր աւելան-Անդրեասի Առաջնորդի վիճակին Հայոց Նոր-Նախիչևանի և Բեսսարաբիոյ, յորոյ վերայ եղեալ լինի պատասխանատւութիւն վասն Նորին բարեկարգութեան»:

«§ 5. Непосредственное управление семинарию ввѣряется ректору, при содѣйствіи: 1) учебнаго совѣта и 2) хозяйственнаго правленія. Составъ и предметы занятій учебнаго совѣта и хозяйственнаго правленія опредѣляются осо-

³¹⁾ Տես „Կանոնադրութիւն Թեմական Հոգեոր Դպրանոցի Վիճակին Հայոց Նոր-Նախիչևանի և Բեսսարաբիոյ“, Նոր-Նախիչևան, 1882 թ., էջ 2 և 3, 1, 2, 3:

бою инструкцією, составляемою попечительствомъ и, по представленію епархіальнаго начальника, утверждаемою Патріархомъ». — *Іоанн Патріархъ Григорій* «*І.* Академії хизиакії կառավարութիւն գպրանցի յանձնեալ ինի Տեսչի օգնականութեամբ а) ուսումնական ժողովոյ և բ) տնտեսական կառավարութեան: Կաղմակերպութիւն և առարկայք պարապմանց ուսումնական ժողովոյ և տնտեսական կառավարութեան կարգաւորին առանձին հրահանգութեամբը, որը յօրինին ի հոգարածութենէ և ըստ առաջարկութեամբ՝ *Іоанн Патріархъ* *Առաջնորդին* հասպատին ի Վեհափառ Կայունութեամբ»:

«*§ 6. Ректоръ избирается попечительствомъ съ согласія епархіальнаго начальника и утверждается Святымъ Патріархомъ Католикосомъ».* — *Іоанн Патріархъ Григорій* «*զ. Տեսուչն ընտրի ի հոգարածութենէ ըստ համաձայնութեան թեմակալ առաջնորդին և հասպատին ի Վեհափառ Պապութեամբ»:*

«*§ 7. Примѣчаніе. Обязанности служащихъ въ семинаріи лицъ опредѣляются особою инструкцією съ утвержденія Патріарха»:* — *Іоанн Патріархъ Григорій* «*Է. «Մատուցութեամբ. Պարտաւորութիւնը ժառապողաց ի գպրանցին կարգաւորին առանձին հրահանգութեամբը ըստ հասպատին Վեհափառ Կայունութեամբ»*³²⁾:

Ապա՝ ամե՛ն ինչ որ ի նկատի առնւած չի «XІ т.

³²⁾ Նուն իմաստով պիտի հասկանալ Պետ. Օրէնքի (XІ հատ. 1 մաս) 1206—1208 յօդածները ևս—տես ստորև՝ Գլ. Դ և Ե:

ч. I (изд. 1896 г.)»-ում, որոշւում է համաձայն նոյն
«Xl т. ч. I (изд. 1896 г.)»-ի ст. 15-ին³³⁾:

Ազգիս Վեհին դպրոցական հարցում իւրացրած ի-
րաւանց վերաբերեալ այդ՝ 1902 թւին արձարձածս
տեսակետը, ըստ իս, մատի չովնական է: Եւ, հարկաւ,
այդ իսկ տեսակետից պիտի մօտենալ յետագայիւ նոյն
հարցի շուրջն անցածին ևս:

Բ.

Վերչերս մեր մամուլն առառաւելն կանգ առաւ
ազգիս Վեհին դպրոցական հարցում իւրացրած իրա-
ւանց վրա: Սրա մօտակայ առիթն էր Կովկասի Փո-
խարքայի սահմանած՝ կանոնադրութիւն մշակող Դրա-
ցիչների հեռանալը, «Կավказ» պաշտօնական լրագրի
(1908 թ., № 109, 113, 116, 118, 124) յօդւածները,
որպէս և ապա գոյն Յանձնաժողովի զբաղմունքը-ո-
րոշումները³⁴⁾:

Ստորև ես կտամ մամուլի էջերում այդ առմիւ-
գի առնւածից մի քանի կտորներ. սրանք մի շարք

³³⁾ Պետ. Օրէնքի այդ 15-րդ յօդւածի բառացի թելադրութիւնն
է—Սմէն ինչ որ նախատեսնած չի Xl հատորի 1 մասում՝ ներ-
կայացնում է ընդունւած կարգով Նորին Կայսերական բարեհայեցո-
ղութեանը:

³⁴⁾ Տես 1098 թի մալիս-լունիս ամիսների մեր մամուլը և,
ի միջի այլոց, «Հովիւ», 1908 թ., № 24՝ «Հայոց եկեղեցական
ծխական դպրոցների ծրագրներ»:

պատմական, մանկավարժական, տրամաբանական փաս-
տերի-հիմունքների վրա գաղիս ևն՝ կրկնակի հիմնա-
ւորելու աղջիս Վեհի իրաւանց ժաւալը՝ համաձայն
վերն ընդգծածիս:

Սակայն, նախ մի կտոր քաղւածք նւաստիս 1905
թւի մի յօդւածից ³⁵⁾ (ազգիս Վեհի ծխական-դրա-
ռոցների համար տւած « Ժամանակաւոր հրահանդ-
ներ»-ի առթիւ).—

«, Ժամանակաւոր հրահանդներ»-ի « Կանոնադրական
պահպան»-ին դէմ ելնելու համար չէ, որ ազգակէս ենք
խօսում, ոչ երբէք: Մեր խօսքը միայն և եթ մեր
առջային նիշնուրույնուն-նեան մասին է, —ինքնուրոյնու-
թեան, որի ցայսօր կայուն փաստն է մեր եկեղեցու-
ուղղոց - ժողովրդի մասնուն-նեանը, — և այն որ մէջ
դպրոցներին վերաբերեալը պիտի բղիսի մեր դպրոց-
ների Պետից անմիջապես, — Պետից, որի անհրաժեշտ
զեկավարը պիտի լինեն նոյն իսկ մեր եկեղեցու-դրա-
ռոցի-ժողովրդի մասնուն-նեան հիմնաւարելը: Եւ այդ
ոչ միայն զրի առած օրէնք է, այլ և՝ բարոյական
պարտականուն-նի՛ ան...

« Եշտածս մեր եկեղեցու-դպրոցի-ժողովրդի մաս-
նուն-նեան հիմնաւարելի տեսակէտից մեզ միանդամայն
անհասկանալի է ոմանց շեշտը՝

« Անհրաժեշտ է դպրոցական գործի բոլոր կէտե-
րում լայն ասպարէղ բանալ ժողովրդի առաջ, առաջ-
նացնելով նրա իրաւունքների և նախաձեռնութեան
ստհմանափակումները (?)»:

35) «Եկեղեցական-ծխական դպրոցների ժամանակաւոր կանոն-
ները»—Տէս «Նոր-Դար», 1905 թ., №№ 44 և 59,—1906 թ.
№№ 24, 25 29:

“„Սիսալ է կարծել թէ մեր ժողովուրդը հասունացած չէ, թէ նրա գլխին հոգեորականութիւնը պէտք է լինի խնամակալ:”

“... Ժողովուրդն է դպրոցների տէրը, ուստի նա պիտի լինի նրա զիսաւոր վերահսկողն ու իրաւատէրը” (Տե՛ս «Արշալոյս», 1906 թ., № 4):

«Հոգեորականութեան խնամակալութեան ջատագովներից չենք՝ ոչ. մեր պահանջն է մեր եկեղեցուդպրոցի - ժողովուրդի միաբանութեան հիմնաւայրերի անսասանութեանը: Մեզանում «եկեղեցի», «գլորոց», «ժողովուրդ» — միաբանակից պարզեց են, և միմիայն այդքան. այդ երեք տարրերից և ոչ մէկն է տէր կամ վերահսկող կամ իրաւատէր, և ամենը՝ աղջային նստարարութեան միաբան գործառից: Մեզանում՝ իրը տէր կամ վերահսկող կամ իրաւատէր կարող է յօրչորջւել միայն մեր առջային ներառությունութեան՝ իրը մեր վրա յիրաւի տիրող, մեզ յիրաւի՝ զեկավարող ինչոր ներ-+ին ոյժ՝ potentia: Զատել միարան գործակիցներից մէկին՝ «ոչնչացնելով սրա իրաւունքների և նախաձեռնութեան սահմանափակումները» — ասել է՝ խախտել-ժուլացնել-ոչնչացնել մեր ներքին ոյժը՝ potentia-ն առաջն ինքնուրոյնութիւնը...”

«Կարճ կարենք: Ըստ մեզ՝ կան մեր աղջային միաբանական նիստ ու կացի մէջ զործոններ, որոնց զատման և ոչնչացման հարցը՝ վերջինս ը-ծելու զիտաւորութեամբ — կարելի է դնել միայն և ել համալգային համապատասխան ժողովում, հետևապէս՝ որոնց լուծելու իրաւունքը չունի նոյն ինքն աղջիս ընդունած Վեհափառ. չայրապեան իսկ:

«Ի մասնաւորի, ոռւս պետութեան սահմաններում

իշխող Օրէնքի XI հատ. I մասի և ոչ մի կէտում գրի է առնւած թէ հայ ժողովներին է հայ դպրոցների տէրը, սրանց վերահսկողը և իրաւատէրը. այդաել ամեն ինչ կապւած է մեր հաջեոր իշխանութեան հետ; Նոյնը շեշտում է սոյն 1905 թւի օգոստոսի 1-ի Բարձրագոյն Ուկազը և՝ «Մենք շնորհում ենք հայը և այս կան հոգիներ այս անունը ընդարձակ կրթական միջոցներ՝ ժողովրդի օգտին գործելու համար»: Հետեւապէս՝ նա, ով, դիցուք, ուղարկան սահմաններում նպաստակում է «ոչնչացնել հայ ժողովրդի իրաւունքների և նախաձեռնութեան սահմանափակումները (?)» դպրոցականի նկատմամբ, պիտի ի նկատի առնի, որ հանապարհին ունի հանդիպելու նախ XI հատ. I մասին և 1905 թւի օգոստոսի 1-ի Ուկազին, և ասպա՝ մեր ազգային ինքնուրունութեան լինել թէ չինելու հարցին...

«Լսենք ճանկավարժի խօսքը ևս.

«Դպրոցի գործը, — ասում է ուսում մանկավարժ՝ Վ. Ստոինինը, — կարելի է ուսումնասիրել միան և եթ՝ միաժամանակ ուսումնասիրելով ամեն պայմաններն այն ապահե, այն ժողովրդի, որի համար դպրոցը նշանակւած է գործելու, ուսումնասիրելով այս բնածին ընդունակութիւնները և հակումները, այս ընտանիքը, հասարակական դիրքը և պահանջները»:

«Ահա այդքան նշանակալից են դպրոցի և ժողովրդի միջև եղած կապերն այլուր: Եւ ինձ թւում է, որ հզօր պետութեան զաւակի այդ խօսքը նամանաւանդ պիտի իւրացնենք Անդ՝ երեք պետութեան — Ռուսիա, Պարսկաստան, Թիւրքիա — մէջ ապրող մի կոյտ ժողովուրդս, Ենէ մեղ համար թանկ է մը դըպ-

շ”ցը՝ ինը ասույլն են նուժնուրոյնունեան միաբան գործա-
նեց գործօնեներեց մելք, ենէ մեղ համար թանկ է նոյն
ինքը մեր առաջային նուժնուրոյնունելու...»³⁶⁾...

1905 թւին զրի առածիս այդ կտոր քաղւածքից
ետ անցնում եմ մեր մամուլի էջերում վերջերս ար-
ձարծւածին:

Ա. Քալանթարը գրում է «Մշակ»-ում՝

«Հայ հասարակութիւնը նուիրել է դպրոցներին իր
կուլտուրական ոլժերի և իր բարեգործական գոհա-
բերութիւնների մեծագոյն մասը:

«Նա բացել է դպրոցներ և նրանց զարգացրել ու
ընդարձակել, որքան կարողացել է։ Նա զրաւել է զէ-
պի այդ գործը ժողովրդի բոլոր խաւերը, յանձնելով
հոգարարձութիւններին դպրոցի տնտեսութեան և բա-
րեկարգութեան գործը, ինտելիգենտ ոլժերին նրա
կրթական և մանկավարժական ղեկավարութիւնը։

ԱԵւ հայկական դպրոցները եղել են ժողովրդական
դպրոցներ, որոնց վերաբերունեած ենդեցին և ժողովր-
դանուն են եղել ենք մի ներկայացնոցական մարմին պե-
տուն-նեան առաջը»³⁷⁾...

Ե. Թոփչեսնի «Վտակ»-ում³⁸⁾ լոյս ընժամած՝
«Հայոց դպրոցական հարցը» վերնագիրը կրող և

³⁶⁾ Տես «Նոր-Դար», 1906 թ., №№ 24 և 25՝ յօդւած:

³⁷⁾ Տես «Մշակ», 1908 թ., № 109՝ «Դպրոցական կանոնադ-
րութեան առիթով» (առաջնորդող): Ի դեպ.—Տես ևս «Մշակ»,
1908 թ., մայիս-յունիսի №№-ը:

Սյս և յետագայ ընդգծումները, բացի յատկապէս նշնածներից,
մերն են: Բժ. Ս. Շ.-Ն.

³⁸⁾ Տես «Վտակ», 1908 թ., №№ 130, 132—135, 138 և
140:

պատոմական նիւթերով այնքան հարուստ ու բնդարձակ յօդւածում, ի միջի այլոց, կարգում ենք՝

«Առանձնապէս դպրոցական հարցի մասին այդ կանոնադրութեան (1836 թւի մարտի 11-ի «Պօլօժէնիկ») մէջ յիշատակում է երկու անգամ—նախ՝ թեմական առաջնորդների պարտականութիւնները որոշելիս և ապա՝ մի յատուկ դլուխ կայ «դպրոցական հաստատութիւնների» մասին:

«Դրանցից առաջինը բացառապէս ծիսական դպրոցներին է վերաբերում՝ ըստ «պօլօժէնիալի» § 66-ըդ և ըստ պետական օրէնքի XI հասորի § 1178 յօդւածի, որ ասում է «Հարց առաջնորդները լուրջ ուշադրութիւն են դարձնում վանքերի և եկեղեցիների մօտ գտնւած գպրոցների վրայ ընդհանրապէս և մասնաւորապէս թեմերը այցելութեան եղած ժամանակ, օդնելով իրանցից կախւած բոլոր միջոցներով այդ ուսումնարանների բարելաւութեան և տարածման: Նրանք պիտի գլխաւորապէս հոգ տանեն նրանց մէջ կանոնաւոր և յարմար դասաւանդութեան եղանակ մոցնել և բարի փարք ու բարք պահպանել ուսուցիչների և աշակերտների մէջ»...

«,,Պօլօժէնիալի“ § 66-ից բղխում է, որ հայոց փանքերի ու եկեղեցիների մօտ գպրոցներ գոլութիւն են ունեցել նախանական այդ կանոնադրութիւն հաստատելը, և որ հայ հոգեւորականութեանն է յանշնում ոչ միայն դրանց վրայ հակելու, այլ և տարածելու պարագաներնեւը, այսինքն այդպիսի դպրոցներ բայց անելու և պետականութեանը, այսինքն այդպիսի դպրոցներ:

«Եւ ուրիշ կերպ չէր էլ կարող լինել: Հայ հոգեւորականութիւնը հին դարերից՝ Սահակ-Մեսրոպի ժա-

մանակներից սկսած ունեցել է այդ արտօնութիւնը և անարգել օգտուել է նրանից ոչ միայն հայկական թագաւորութեան, այլ և մահմէդական իշխանութեան տակ:

«Ճիշտ է, պարսկական բռնակալութիւնը շատ ժանր հարւածներ է հասցըել հայ ժողովրդի զլիսին, շատ սև օրեր է պատճառել նրան, բայց երբէք մուտք չէ գործել նրա եկեղեցական, կուլտուրական կեանքի մէջ, ձեռք չէ տւել այդ ասպարիզում գործող հիմնարկութիւնների Ներքին»³⁹⁾ խնդիրներին:

«Ամբողջ պատմութեան ընթացքում անհնարին է գտնել մի գէպք, երբ օրինակ պարսիկ կառավարութիւնը արգելը կամ սահմանափակումն դրամ լինէր հայոց կրթական հիմնարկութիւնների վրայ: Կործանւել են դրանց պատերը, շատ անգամ թալանի են ենթարկել ունեցածքները, բայց ոգին, ներքին էռութիւնը մնացել է անձեռնմխելի:

«Այդ բոլորից յետոյ անհնթեթութիւն կը լինի ենթալրել, թէ Ռուսաստանը դարեր շարունակ աղդաբնակութեանը ազատութեան, երջանկութեան խոստումներ տալուց յետոյ տիրապետելով» «Հայկական աշխարհը»: նպատակալարմար համարէր խոչընդուաներ դնել հայկական դպրոցների տուած, մանաւանդ այն արտօնեալ դասակարգի՝ հոգեւորականութեան վերաբերմամբ, որին ուժեղացնելու շանքեր էր թափում ներքին ու արտաքին քաղաքական նպատակներով:

«Այս, անհնարին էր դա, որովհեաւ այդպիսի խոչընդուաների գէմ ոտքի կը կանգնէր ամբողջ հոգեո-

³⁹⁾ Հնդգծումն Ե. Թոփչեանի:

բականութիւնը, փոթորկալի թշնամանք կարտայալ-
տէր ժողովուրդը — մի բան, որ երբէք ցանկալի չէր
կառավարութեանը:

«Պատմական փաստերի այդպիսի տրամաբանու-
թիւնն է, որ իրաւունք է տալիս լայն մաքով բացատ-
րելու § 66 (կամ 1178) և ասելու, թէ «Պօլօժե-
նիան» թուլաւրում է հայերին դաշոցական առաօ-
նօթա:

«Պաշտօնական «Կավկազ» լրագրի յօդւածադիրը
բաւական երկար կանդ առնելով այդ կէտի վրայ և
յիշելով թէ «Պօլօժենիալի» մէջ աւտօնօմիալի մասին
խօսք չը կայ, եղբակացնում է⁴⁰⁾—

«Նթէ օրէնքը աչքի առաջ ունենար հայ-լուսա-
ւորչական հոգեորականութեան աւտօնօմիա տալ հա-
յոց մատաղ սերնդի կրթութեան գործում, այն ժա-
մանակ այդ իրաւունքը բոյց տրւած կը լինէր ուղղակի
և դրական կերպով, ինչպէս միւս իրաւունքներն են
ցոյց տրւած»:

«Այդպիսի կարծիքը գուցէ ճիշտ լինի իրաւաբա-
նական պեղանախզմի, բայց ոչ առողջ ու անաչառ
դատողութեան աեսակէտից:

«Այն, «աւտօնօմիա» իօն+լ⁴¹⁾ չը կայ «Պօլօժենիալի»
մէջ, բայց մի՞թէ դրանից բղխում է, թէ հայոց կրր-
թական հիմնարկութիւնները ենթարկւած պէտք է
լինեն ուստական վարչութիւններին:

«Երբէք: Նոյն «Պօլօժենիալի» մէջ ոչ մի խօսք չը
կայ նաև այդ մասին:

⁴⁰⁾ „Կավկազ“ 1908 թ., № 116:

⁴¹⁾ Ընդգծումն Ե. Թոփչեանի:

«Եթէ առաջին «չը կան» իրաւունք է տալիս
Ժխտելու հայոց գալրոցական աւտօնօմիան, երկրորդ
«չը կան» էլ հիմնովին բացասում է ոռւս իշխանու-
թեան որևէ միջամտութիւնը:

«Զը պէտք է մոռանալ մի կարեոր հանդամանք:
Կառավարութիւնը ինքն էր կազմողը այդ կանոնադ-
րութեան, ինքն էր իր հաւատարիմ պաշտօնեաների
ու նրանց հովանաւորած անձերի միջոցով գրա հա-
մար տեղեկութիւններ հաւարողը, ուրեմն եթէ ան-
հրաժեշտ ու հնարաւոր համարէր մի ալդպիսի միջամ-
տութիւն կամ վերահսկողութիւն՝ անպատճառ յա-
տուի կէտ կր մտցնէր այդ մասին:

«Իսկ հայերն անկարող էին իրենց գարաւոր իրա-
ւունքի մասին պարզ ու որոշ յօդւածներ մտցնել
«Պօլօժենիայի» մէջ, որովհետեւ օրէնք կազմողները այդ
առիթով ոչ ժողովրդի կամքն էին հարցըել, ոչ էլ
նոյն իսկ հոգեորականութեան կարծիքը լսել: Ինչպէս
յախնի է, արդէն պատրաստ «Պօլօժենիայի» վերա-
բերմամբ կառավարութիւնը միայն Յովհաննէս Կար-
բեցու հաւանութիւնն էր ստացել Կովկասի փոխար-
քայ բարօն Ռօղէնի միջոցով, իսկ այդ հաւանութիւնը
հայերի տեսակէտից արժէք չունէր, որովհետեւ Կար-
բեցին Ռուսաստանի «սիրեցեալն» էր, ստալենիկъ-ն
էր:

«„Կավկազъ“-ի յօդւածաղիր պ. Ա. Մ.-ն աշխա-
տում է հաւատացնել ընթերցողներին, թէ «Պօլօժե-
նիան» հայկական «հնագոյն օրէնքների ու սովորոցների» հիման վրայ է կազմւած, ուրեմն եթէ նրա
մէջ գալրոցական աւտօնօմիալի մասին խօսք չը կայ—
դա գոյութիւն չէ ունեցել և Ռուսաստանի տիրա-

պեսութիւնից առաջ Միանգամայն սխալ հասկացողութիւն:

«Նախ՝ ինչպէս արդէն տեսանք, տեղեկութիւնները այդ «օրէնքների ու սովորովթների» մասին շատ անվրատահելի և պատահական ազբիւրներից էին հաւաքած, ուրեմն և չին կարող լրիւ ու ճիշտ լինել:

«Երկրորդ՝ նոյն «Պօլօժենիալի» մէջ ուրիշ շատ բաներ չը կան, թէև հին ժամանակներում նրանք գոյութիւն ունեցել են: Օրինակ՝ թեմակալ առաջնորդները գարեր առաջ ժողովրդական ընտրութեանք ու կաթողիկոսի հաստատութեամբ են պաշտօնի կանչել, այն ինչ «Պօլօժենիան» այդ «հին սովորովթը» անտես առնելով, գրում է (§ 57 կամ § 1169 ըստ օրէնքրըի XI հատորի) — , թեմական առաջնորդներ նշանակում է Թագաւոր Կայսրը հայ դաւանութեան հոգեռական աստիճանաւորներից... Պաշտօն մտնելու ժամանակ նրանք հաւատարիմ հպատակութեան և ծառայութեան երդում են տալիս»...

«Ուրեմն այդ յօդւածով ժխտում է ոչ միայն ընտրողական սկզբունքը, այլ նաև կաթողիկոսական որևէ մասնակցութիւնը, իրաւաբանութիւնը:

«Հետեւելով պ. Ա. Մ.-ի տրամաբանութեան, պէտք է ասէինք, թէ կառավարութիւնը իրաւունք ունի հայոց թեմական առաջնորդներ նշանակելու առանց կաթողիկոսի կամքի, և թէ դա բղխում է հայոց «հրնագոյն սովորովթներից», որովհետեւ «Պօլօժենիան» գրանց հիման վրայ է կազմած: Բայց դա կը լիներ անհեթեթ մի սխալ:

«Ինչպէս փաստերը մատնանշում են, ինքը կառավարութիւնն էլ խոյս է տալիս այդքան նեղ բացատ-

ըութիւններից ու սահմանավակումներից: Երբ 1836 թ. Յովհաննէս Կարբեյխն մի դրութեամբ ի միջի այլոց այդ առաջնորդական հարցն էլ է շօշափում, մինհստր Բլուդովիր նոյն թւականի օգոստոսի 20-ին պատասխանում է բարօն Ռոզէնի միջոցով, թէ կաթողիկոսը կարող է „առաջաւա նման ինքը ընտրել կանդիգատներ առաջնորդութեան համար և ներկայացնել Բարձրագոյն հաստատութեան...“:

«Այսպէս էլ լինում է մինչև այժմ: Իսկ Խրիմեանը իր մի կոնդակով վերականգնեց նաև ժողովրդի ընտրողական իրաւունքը այդ խնդրում—մի բան, որ դրանից առաջ էլ, այժմ էլ, գործադրուում է նոյնիսկ Թիւրքիայի նման մի երկրում:

«Պարզ է, ի հարկէ, որ եթէ կառավարութիւնը առաջնորդական հարցում նոյնիսկ «Պոլօթենիալի» բառացի⁴²⁾ իմաստին հակառակ⁴³⁾, իրականապէս հանաչել է կաթողիկոսի իրաւասութիւնը, իսկ վերջերս նաև ժողովրդի ընտրողական մասնակցութիւնը⁴⁴⁾, ուրեմն դպրոցական հարցում նա չէր կարող հակառակն անել, քանի որ «Պոլօթենիալի» յատուկ յօդւածը (§ 66 կամ § 1178) — հայ հոգիւորականութեանն է պարտադրում ծխական դպրոցներ ղեկավարելը և տարածելը, առանց որևէ է ակնարկի ռուսական վարչութիւնների միջամտութեան մասին:

⁴²⁾ Id.:

⁴³⁾ ?—Ե. Թոփչէեանի ուշադրութիւնից, ըստ երևոյթին, վրիպեւլ է «Պոլօթենիե»-ի § 34-ը (Պետ. Օր. XI հատ. I մասի հրատ. 1857 թ. յոդ. 937, հրատ. 1896 թ. յոդ. 1140):

⁴⁴⁾ Խրիմեանի կօնդակը ընտրողական իրաւունքի մասին իշխանութեան լուսում հանդիպեց, որ ի հարկէ նշան էր համաձայնութեան (Ծանօթ. Ե. Թոփչէեանի):

«Հայոց դպրոցական աւտօնօմիան նկատելի է «Պօ-
լօժենիալի» նաև հետեւեալ յօդւածներից — (ըստ օ-
րէնսպրքի XI-րդ հաստորի) § 1206. Հայ պատանիների
աստւածաբանական դիտութիւնների մէջ կրթւելու
համար հաստատւած են Էջմիածնի վանքում հոգեւոր
հեմարան և ռուսահայոց տմեն մի թեմում մի հո-
գեւոր դպրանոց (սեմինարիա):

«§ 1207 Էջմիածնի հայոց հոգեւոր հեմարանը գրտ-
նւում է ամենալն հայոց վեհափառ պատրիարք կա-
թողիկոսի գլխաւոր իշխանութեան տակ, իսկ հոգե-
ւոր դպրանոցները կախւած են իրենց թեմական իշ-
խանութիւններից:

«Ուրեմն միջնակարգ ու միջնակարգից եւ բարձր-
բարական այլ հիմնարկութեանները հայոց իշխանութեան և նե-
մական էշխանութեանների բարձրակարգ հոկուլութեան պահ են
դրանք:

«Դրանից յետոյ մինեւ անհենելութեան վեց լինէ են-
թարթել ու նոյնը չեւ, իսմ վը ուերժ է լինել, նաև
պարզական նէ. Ճիշտական դպրոցների վերաբերնամբ:

«Այդքան պերճախօս փաստեր և օրինակներ աչքի
առաջ ունենալով, մինեւ դեռ կարելի է կտորիածել ու նէ
1836 թ. «Պօլօժենիան» վեց ընդունել հայոց դպրոցա-
կան աւագանելիան:

«Ելքնե՞ւ:

«Այդ աւագանելիան գոյս-նիւն է սունեցել դեռ ռու-
սաց աիրապետութիւնից առաջ, ընդունեած է «Պօ-
լօժենիալի» մէջ և զործագրւած է տասնեակ տա-
րիներ շարունակ:

«Յետին թւով կարելի է, ի հարկէ, մանւածապատ-
բացարութիւններ գրել, հակառակ ենթագրութիւն-

ներ անել, բայց դրանք չեն կարող խախտել պատմական փաստերի հոյակապ ամրութիւնը:...

«...Պատմութիւնը ասում է, որ անցեալում հայեցնուեցել են այդ (բայց այսպիսի անձնութեան:...

«Նրանք գեռ «Պօլօմենիան» հրատարակւելուց առաջ ել ուստաց իշխանութեան տակ անարգել վարել են իրենց դպրոցական գործերը, ինչ չափով կարողացել են: Ոչ ոքի մտքովն ել չէ անցել, թէ հարկաւոր է իշխանութեան հաճութիւնը հարցնել՝ դրաբոյներ բանալու, մատաղ սերնդին դաստիարակելու համար:

«Այդ իրողութեան փայլուն ապացոյց է Ներսէան դպրոցը: Ծրագրելով Կովկասի մայրաքաղաքում — Թիֆլիսում հիմնել հայկական մի այլպիսի բարձր դպրոց, երկար տարիների ընթացքում զանք ու նիդ թափելով այդ դպրոցի նիւթական ապահովութեան ու արժանաւոր ուսուցչական կազմի վերաբերմամբ, Ներսէս Աշտարակեցին երբէք դիմում չէ անում կառավարութեանը, թողլաւութիւն չէ խնդրում նրանից:

«Եւ կառավարութիւնն ել ոչնչով չէ խանգարում նրան: Դպրոցը բացուած է և կառավարուած միմյան Ներսէան ծրագրելով ու հսկողութեամբ:

«Ենէ մի այդպիսի խոլը հիմնայէն-նեան նկատմամբ ւը հայ հասանալուն-նեան միջամաս-նիւն—նո ստուգելու վեր կարող լնել մասն եկեղեցական դպրոցների վերաբերմամբ:

«Եւ նրանիւ շաբանականում է ին իրենց գոյս-նիւնը միանդամայն առեկամ կերպով:...

Սակայն ալստեղ Ներսիսեան Դպրոցի գէմ գործում է նախ՝ Թիֆլիսի առաջնորդ և ապա՝ ամենայն հա-

լոյ Կաթողիկոս՝ Յովհաննէս Կարբեցին, որը դոյն Դրադ-
րոցի հիմնադիր՝ Ներսէս (ապա՝ ամենայն Հայոց Կա-
թողիկոս) Աշաւարակեցու սիերիմ թշնամին էր: Կար-
բեցու ոտնձգութիւններն ունենում են յաջողութիւն
յանձին Պատմեիչի, Բեհրութովի և բարօն Ռօդէնի:

«Նա (Կարբեցին) այնքան դիմումներ է անում իշ-
խանութեան անձամբ կամ իր բարեկամների միջոցով,
այնքան չանքեր է թափում «կասկածելի» ցոյց տա-
լու դպրոցի զեկավարներին, որ փոխարքան լուրջ ու-
շադրութիւն է կենարօնացնում կուախնձոր դար-
ձած այդ դպրոցի վրայ և Թիֆլիսի ոստիկանապետի
միջոցով պահանջ դնում, որ «կօմիտեար»⁴⁵⁾ իւրաքան-
չեւր տարի հաշիւ ներկայացնէ դպրոցի անտեսական
և ուսումնական մասի վերաբերեալ:

«Հայոց դպրոցական կեանքում դա առաջն արդա-
+ն մը ջամանակաւուն տայն էր:

«Դրան շուտով հետեւում է երկրորդ տայլը դեմեկ-
ցիայի հողմաց: Վերջինս 1832 թ. յուլիսի 17-ին №
498 գրութեամբ յայտնում է նոյն կօմիտետին ի մի-
շի այլոց հետեւալը:

⁴⁵⁾ Այսուեն խօսքն այն „կօմիտետ“-ի մասին է, որը
հաստատուեց իշխանութեան կողմից, կազմւած էր ժողովրդից ա-
ռաջարկած ներկայացուցիչներից և կրում էր՝ «Կոմիտետ» բա-
րեկարգութեան ուսումնարանի հայոց» անունը: Այդ «Կոմիտետ»-ը
վերաբացեց Ներսիսեան Դպրոցը, որը՝ շնորհիւ Կարբեցու ոտըն-
ձգութիւնների՝ փակւած էր 1830 թին: Նախ քան փակւելը Ներ-
սիսեան դպրոցը վերակոչվել էր՝ «Կարմարան Էջմիածնի ի Տըփ-
իիս», ապա՝ «Ուսումնարան Հայոց Տփխիսայ»: «Կոմիտետ»-ը
փարեց դպրոցի գործերը մինչև 1836 թի մարտի 11-ը, երբ
Ներսիսեան դպրոցը՝ համաձայն «Պոլոժենիս»-ի՝ վերակոչվեց հո-
գևոր սեմինարիա—թեմական Հոգեոր Դպրանոց:

“ „ Բատ զօրութեան Ռուսաստանի ուսումնարանական մասի հրատարակւած օրինադրութեանց, բոլոր ուսումնարանները որպէս արքունական, նոյնպէս և մասնաւոր մարդկանց ու հասարակութեանց ձեռքով կառավարւողները, ընդ որով անւամբ և լինեն նոքա, և բաց առեւալ հոգինոր, զինւորական և այն ուսումնարանները, որոնք բառ Բարձրագոյն կամաց յանշնաշն են առանձին վարչութեանց — են ընդ իշխանութեամբ նախարարութեան ազգային լուսաւորութեան և պարտաւոր են տեղական ուսումնարաննական իշխանութեանց ձեռքով ներկայացնել նրան տարեկան հաշիւներ բատ ուսումնական մասի։ Այս կանոնների խիստ հսկողութիւնը յանձնւած է քաղաքական նահանգապետներին և ուսումնարաննական դիրեկտորներին։

“Որովհետեւ Վրաստանում ուսումնարաննական մասը կառավարելու համար առանձին վերատեսչութիւնը (դիրեկցիան) միայն նոր կարգեցաւ, վասն որոյ վերուիշեալ օրէնսդրութիւնները տակաւին չէին կարող կատարելապէս ի գործ դնել, և այդ պատճառով ազգային լուսաւորութեան նախարարութիւնը բոլորովին անաեղեակ էր մնում այստեղի մասնաւոր ուսումնարանների մասին, որոնց թւին պատկանում է նմանապէս և Թիֆլիսի Հայոց Ուսումնարանը”...

“Եւ այդ հիման վրայ դիրեկցիան հաշիւ ու մի շարք տեղեկութիւններ է պահանջում։

“Այդ պահանջները մի սկ հեռանկարի ազգանշաններն էին, բայց Կարբեցին գեռ չէր զղչում իր արածից, այլ ծգտում էր աւելի հեռուն, յուսալով բոլորովին փակել դպրոցը, ժամանել շինութիւնը և արձակել (բարեկարգութեան կօմիտեալ)։ Այդ առթիւ

նա 1834 թ. յունւարի 10-ին մի կոնդակով գրում է իր խորհրդակից իշխ. Գրիգոր Բեհրութեանին —,,Հանճարաւոր խորհուրդ ձեր ի մասին ուսումնարանի (Ժախելոյ) և կօմիտէտի նորա — (գոցելոց), ընդունելի եղեւ մեզ յոյժ, յոյժ...“

«Բարեբախտաբար այդ «հանճարեղ խորհուրդը» անկատար է մնում չնորհիւ Ներսէսի և նրա կողմնակիցների եռանդուն շանքերի:

«Սակայն փոխարքայ բարօն Ռօգէնի և գիրեկյիալի բայլերը միայն Ներսիսեան դպրոցով չեն բաւականանում: Նրանք ուշը են դարձնում և պարզական դպրոցների վրայ:

«Պէտք է խոստովանել, որ այդ ժամանակաշրջանում բաւական բազմացել էին մասնաւոր խալֆայական դրադրոցները, որոնք սովորաբար եկեղեցիների բակում էին պահուում: Պարզ է, իհարկէ, որ եթէ հոգևորականութիւնը ապիկար ու ներքին հաշիւներով տարւած չը լինէր, կարող էր այդ դպրոցների վրայ որոշ հսկողութիւն նշանակել, կանոնաւոր ծրագիր տալ, ստեղծելով ժողովրդական ընտրողական մարմիններ:

«Բայց նա մատ մատի չէր խփում այդ ուղղութեամբ, ուստի և մասնաւոր դպրոցները շահագործման ասպարէզ էին դարձել զանազան տղէտ տիրացուների ու տէրտէրների ձեռքում:

«Այդպիսի պայմաններում միշամտում է Կովկասի Եշխանութիւնը: Բարօն Ռօգէնը 1834 թ. յունւարի 13-ին մի շրջաբերականով դիմում է դաւառապետներին և ազգարարում⁴⁶⁾:

46) Ա. Երիցեան «75 ամեայ պատմ. Ներս. դպր.» I, երես 269:

“ „1) Ոչ մի դպրոց չէ կարող բացւել առանց գիրեկ-
ցիայի հրամանի:

“ „2) Ոչ ոք չէ կարող մասնաւոր դպրոցներում ու-
սուցութեամբ պարապել առանց այդ մասին վկայա-
կան և հրաման առնելու ուսումնարանական իշխա-
նութիւնից: “...”

Ե. Թոփչեանի ուշագրաւ յօդւածի վերջին տողերն
են՝

“Յամենայն գէպս ակներեւ է մի բան, որ ճառաւառը
դպրոցների վերաբերմամբ այդպիսի կարգադրութիւն-
ներ անելով հանդերձ, թէ փոխարքան և թէ գիրեկ-
ցիան ակնարկել են, թէ զրանցից բայցառութեան են
կապճառ հագեստ, այսինքն եկեղեցական-ժիական դպրոց-
ները:

“Իսկ այդ բոլորից յետոյ երբ «Պօլոժենիայ» մէջ
էլ յատուկ յօդւածով (§ 66) յիշեցնուում է, թէ թե-
մական առաջնորդները պարտաւոր են հսկել «Եկեղե-
ցիների ու վանքերի մօտ գտնւած դպրոցների» վրայ
— դրանից պարզօրէն կարելի է եղրակացնել, թէ այդ
շնորհը հապճողները շատ լաւ էն յացել են, որ հայկա-
կան դպրոցները առաջնօն կազմակերպութեան են ունեցել
անցեւուած և այդպիսու եւ այդու է հսան ապագայուն:
Բայց քանի որ այդ ժամանակաշրջանում հոգեորա-
կանութիւնը ոչ մի հսկողութիւն ցուց չէ տւել դրա-
բոցական գործում, որի հետևանքն է եղել աիրացուա-
կան ամենավատ տիպի դպրոցների բազմանալը, ուստի
անհրաժեշտ են համարել յատուկ յօդւածով յիշեցնել
նրանց այդ պարտականութիւնը:

“Եւ դրանից յետոյ, Եվեսուն Երկար ու յէտ առյի-
ների ընթացքուած (1837 — 1868), հայոց դպրոցական

... սահմանական խառնութելու— լուրջ գույքի շեշտել և այլեւ հասած-
կարութեալը»⁴⁷⁾...

Շեշտելի է «Վտակ»-ի խմբագրականը ես, որը
դալիս է պարզելու հարցը՝ իրաւաբանական, պատրմական և
աղջոյնական տեսակէտից։ Այդ խմբագրականում, ի
միշի ալրոց, կարգում ենք՝

«Պաշտօնական „Կավказъ“ լրագիրը (№ 109), «չա-
յոց եկեղեցական գպրոցները» վերնագրով յօդւաձում
արձարձում է այն միտքը, թէ հայ գպրոցների նկատ-
մամբ կառավարութեան և հայ ժողովրդի ու նրա
ժայրագոյն պատրիարքի միշե առաջ եկած բոլոր թիւ-
րիմացութիւնները, բոլոր կօնֆլիկտները միայն մի աղ-
բիւր ունեն։

«—Դա այն երկու հակադիր սկզբունքներն են, որ
դրւած են հայ գպրոցական հարցի հիմքում։

«Նիկոլայ I կայսրը 1836 թ. հաստատելով հայոց
եկեղեցական գործերի վերաբերեալ կանոնները— „Ոօ-
լոյնիք“-ն, իր ուկազում ասում է.

«— „Մենք հրամակեցինք՝ տեղումը մշակել հայ-լու-
սաւորչական եկեղեցու գործերը կառավարելու լիա-
կատար կանոնադրութեան նախադիմք, նրան հիմք ըն-

⁴⁷⁾ Տես «Վտակ», 1908 թ., №№ 135, 138 և 140—Ե. Թոփ-
ջեանի «Հայոց դպրոցական հարցը» յօդւածը։

Ի դէպ.—Յետազյում մեր գպրոցների գլխովն անցածի մա-
սին տես իմ «Դպրոցների նիւթական-դրամական ապահովութեան
հարցը. I. Հայոց Թիւմական Հոգևոր Դպրանոցների եկամտի աղ-
բիւրները (Պաշտօնական ցանկը և ցայսօր անտես առնւածը)»,
Մոսկա, 1908 թ., էջ VII—IX («Յառաջաբանի փոխարէն»-ում):
—Տես ևս «Վտակ», 1908 թ., № 102 և ալին—Ե. Թոփ.-ի «Հայ-
կական սեպարատիզմը», ևս № 29—30—Թ.-ի «Հայոց ե-
կեղեցական գպրոցները»։

դունելով հայ եկեղեցու սեփական հին աւանդները և համաձայնեցնելով Մ'եր Կայսերական բնդհանուր օրէնսդրութիւնների հետ⁴⁸⁾:

«—Հայ Եկեղեցն— հին աւանդները ⁴⁸⁾—դա մէկ սկզբ-բունքն է, որի մասին ակնարկում է „Կավказъ“ -ի յօդւածագիրը.—այլպահան ընդհանուր օրէնսդրութիւնը —դա կը երկրորդ սկզբունքն է, որ բաղխւում է առա-շինի հետ:

«Բնդրունենք մի բոպէ, որ ճիշտ են այդ զիտողու-թիւնները:

«Բայց մի՛թէ դրանից պէտք է եղրակացնել, թէ երկրորդ սկզբունքը անպայման հակառակ է առաջի-նին, այսինքն պետական օրէնսդրութիւնը չէ համա-պատասխանելու »հին աւանդներին«:

«Երբէք: Կան հնութիւններ, որ ճիշտ նոր են: Օ-րինակ գողութիւնը վաս բան է, ասւած է շատ հին ժամանակներում, բայց մի՛թէ երկար դարերի ընթաց-քում փոխւել է այդ նշանարտութիւնը:

«Ո՞չ:

«Ճիշտ այլպէս էլ դպրոցական գործի վերաբերեալ աւանդները: Նրանք կապարվեալ ինժեներունութիւնն էն առել հայոց Եկեղեցական-ժիական դպրոցներին, խո-չընդուն չեն դրել նրանց ազատ զարգացման առաջ և դրանից ոչ թէ բացասական, այլ միայն զրական հե-տեւանքներ են առաջայել: Հետեւանքներ, որոնցից եր-բէք չեն առւժել նաև պետական շահերը:

«Հէնց այդ պատճառով էլ Նիկոլայ I կայսրը շեշ-տել է այս «հին աւանդների» մասին:

48) Այս և յետագալ բոլոր ընդդուռները մերն են: ԲԺ. Ս. Շ.-Ն.

«Նոյն համոզմունքով Ալեքսանդր Ա-ը 1874 թր-
ւականի իր հրովարտակում աւելի բացատրել է այդ
սիզունքը և հաստատել է հայկական գպրոցների ան-
կախութիւնը ռուսաց գպրոցական վարչութիւններից:

«Դրանից յետու, ճիշտ է, երկար տարիներ են ան-
ցել, շատ բաներ են փոխւել, բայց և այնպէս Կալսե-
րական նոր հրովարտակը 1905 թ. վերահաստատել է
հայ գպրոցների այդ անկախութիւնը և „ընդարձակ
կրթական միջոցներ շնորհել“:

«Նոյն իմաստով էլ կարգադրութիւններ է արել Կով-
կասի ներկայ փոխարքայ կոմս Վորօնցօվ-Դաշկօվը:

«Պարզ է, ուրեմն, որ ամեն մի շեղում կայսերա-
կան այդ հրովարտակներից ու փոխարքայական կար-
դագրութիւններից՝ ապօրինի պէտք է համարւի:

«Բայց, ինչպէս երեսում է, գաղտնի խորհրդական
Հակելի նախագահութեամբ զործող «Դպրոցական
յանձնաժողովը», որ պէտք է մշակեր հայ գպրոցների
համար մանրամասն կանոնագիր, բաւական խոշոր շե-
ղումներ է արել:

«Այնքան խոշոր, որ կաթողիկոսի ներկայացուցիչ-
ները՝ Մեարոպ վարդ. Տէր Մովսիսեան և Ստ. Մա-
միկոնեան ⁴⁹⁾ ստիպւած են եղել կիսատ թողնել բզ-
բաղմունքները և հեռանալ:

«Մի հանգամանք, որ ցաւալի է ոչ միան հայկա-
կան, այլ և պետական տեսակէտից: Որովհետեւ եթէ
փոխարքան հրաւիրել էր Կաթողիկոսի կողմից էլ ներ-
կայացուցիչներ, ուրեմն դրանով իսկ ցոյց էր տւել
որ այդ ներկայացուցիչների մասնակցութիւնը, նրանց

⁴⁹⁾ Երրորդ ներկայացուցիչ Սիգրանեանը սկզբից բացակալ էր:

կարծիքը կարեոր է ու անհրաժեշտ: Կայսերական հրովարտակում լիշտած „հայ եկեղեցու հին տւանդները“ այս գէպըում էլ յարգւած և պաշտպանւած պէտք է լինեն...

«...տեսանք, որ պատմական փաստերը, իսյութքական հյուծաբանները գուշիս են միայն մի բան հաստատելու, այն է՝

«—Հայոց եկեղեցական ժխական դպրոցները անհայն են եղել տուական դպրոցական լշեանուներներից և այդպէս ել պէտք է շարժանակեն իրենց գոյութիւնը:

«Բայց, ի հարկէ, միայն իրաւական փաստերը բարար չեն հարցը բազմակողմանի կերպով լուսաբանելու համար:

«Եւ իսկապէս: Եթէ կայսերական երեք հրովարտակներ—(1836 թ., 1874 թ. և 1905 թ.)—իշխատակում են, որ հայ եկեղեցական ժխական դպրոցները մի աեսակ անկախութիւն, ինքնավարութիւն պէտք է ունենան: Եթէ այդ հարցը այնպէս մօտ է հայ ազգաբնակութեան սրտին—ապա ուրեմն նա ունի խոր արմադները և առելի լայն հիմունքներ ունի իրամահանն է:

«Պարմական անցեալը և իւանի հյամայողական պահանջը—անո դրանիւն են այդ արմադներին, այդ հանգամանքներին ոյժ պատիը:

«Ճիշտ է, դեռ հին գարերից սկսած հայ հոգեանական-նիւն վանքերին ու եկեղեցիներին կից դրապրոցներ է հիմնել մատաղ սերնդի կրթութեան համար.

«Ճիշտ է, նոյն այդ հոգեանական-նիւն է եղել դրանց իրաւական ղեկավարը.

«Բայց երբէք չը պէտք է մոռանալ, որ ժողովութիւնն
էլ կապւած է եղել այդ հիմնարկութիւնների հետ, ան-
ընդհատ զոհաբերութիւններ է արել նրանց բարգա-
ւաճման համար և ամեն չան ու նիգ գործ է դրել՝
իր իրաւունքները ընդլայնելու և կղերական (?) ուսու-
ծողութիւնները, յետազիմական աղղեցութիւնը սահ-
մանափափելու նպատակով:

«Եւ ժողովրդական այդ չանքերը ապարդիւն չեն
անցել: Հայկական դպրոցներն ու այլ հաստատու-
թիւնները կամաց - կամաց բարեկարգւել են, հասու-
նացած պահանջներին ընդառաջ զնացել և հենց դրա-
նով մօտեցել են ժողովրդի սրտին, նրա համակրան-
քին:

«Ամենազժնդակ պայմաններում էլ հայ ժողովուրդը
թանգ է գնահատել իր կրթական հաստատութիւն-
ները:

«Սով, աղէտ, չարդ, աւերածութիւն և մեծ ու
փոքր հայածանքներ—դրանցից և ոչ մէկը չէ կարո-
ղացել փոխել այդ վերաբերմունքը:

«Դպրանոցները միշտ էլ մնացել են ամեն մի հայի
փայտայանքի առարկան և այդպէս են ներկայումս էլ:

«Բաւական է վերոլիշեալ այն դառնութիւնը, որ
առաջ բերեց 1884 թւականի օրէնքը առաջին ան-
գամ զդալի կերպով սահմանափակելով հայկական դրա-
րոցների ծրագիրն ու իրաւունքները:

«Բաւական է պատկերացնել ժողովրդական յուղ-
մունքը 1889, 1895, 1897, 1898 և մանաւանդ 1903
թւականներում հրատարակւած կարգադրութիւնների
առիթով, որոնց վերջնական հետևանքն եղաւ հայ դրա-

րոցների վակումն ու եկեղեցական կալւածների դրաւումը.

«—Որպէսզի համոզւենք, որ հայ ժողովութիւնը աճ-
բարձ մի պատճական անցւալով էտապահած է եւ դպրոց-
ների հետ և ամեն մի փորձ՝ այդ կազմը քանդելու
նպատակով կատարւած, դիպչում է նրա սրտի ամե-
նահոգաբառ լարերին, շօշափում է նրա կրթական ամե-
նահրատառ շահերը և հէնց այդ պատճառով էլ առաջ
է բերում գժգոհութիւն ու յուղումներ:

«Պարզ է ի հարկէ, որ այդպիսի դժգոհութիւնը,
իբրև կեանքի անդորրութեանը խանգարիչ, ցանկալի
չը պէտք է համարւի ոչ ոքի համար:

«Պետութեան շահն էլ պահանջում է, որ հասա-
րակական կեանքը խաղաղ ընթանայ և դպրոցական
գործը մասսայական յուղումների առարկայ չը դառ-
նայ:

«Անշուշտ հէնց այդ նկատումներով էլ Նիկոլայ I
կայսրը իր հրովարտակում արժանի ուշազրութեան
է ենթարկել հայկական («հին աւանդները»), կոմս Վո-
րոնցով-Դաշկովը Կովկաս գալուն պէս անկեղծ շան-
քեր է գործ գրել վերացնելու այն պատճառումները, ո-
րոնք գժգոհութիւն էին առաջացրել հայ ժողովրդի
ու հոգևորականութեան լայն խաւերում և Կայսրն
էլ յատուկ հրովարտակով—(1905 թ. օգոստոսի 1)—
բարձր արձագանք տւեց վոխարքայի այդ ցանկու-
թիւններին:

«Հասկանալի է, որ մեր դպրոցների անհայտ-նեան
հիմներից մենա էլ, բայց իրաւականից, պատճական անցւալով
է ժողովրդական լոյն սեր դեպէ այդ հիմնացիուննե-
ները:

«Սակայն այդ գեռ բոլորը չեն:

«Միայն իրաւական ու պատմական հիմունքներն են,
ի հարկե, գեռ բաւարար չեն հաստատելու համար,
թէ հայ եկեղեցական-ծխական դպրոցները պէտք է լի-
նեն ինքնավար, անկախ:

«Օրէնքը կարող է այդպէս թելաղըել, պատմական
անցեալում կարող է այդպէս եղած լինել, սակայն
դրանից դեռ չեն կարելի եզրակացնել թէ ապաժա-
յուն էլ այդպէս պէտք է լինի:

«Եթէ զործի շահը պահանջէ, պէտք է օրէնքը բա-
րեփոխւի և անցեալի փորձը ուղղւի:

«Սակայն հարցը հէնց նրանումն է, որ ներկալ դէպ-
րում այդպիսի անհրաժեշտութիւն ու պահանջ չը
կալ:

«Հայոց եկեղեցական-քիոական դպրոցները ինչու-ըստ են,
այսինքն ազգայինական քնոյն են իշտուն:

«Բայց մի՞թէ դա վնասակար է պետական կամ
հասարակական շահերի տեսակէտից:

«Բոլորովին ոչ:

«Դպրոցների ազգայինացման հարցը վաղուց արդեն ժեծ-
ուն է ճանկարական գրականութեան մէջ և ամենա-
հեղինակաւուր էսքիժեները հրապարակուի են ճարել ապայց-
ցելու, «ո դպրոցական այդպիսի չարեժինութեանը իւնենը իւսունակ-
իրապատճ առահանջն է և կարեւոց է իշնական գործի բար-
ժառանձնան համար:

«Ինքը—իշխանութիւնն էլ որոշ չափով ընդունել
է այդ կարծիքը, մինիստրական տարրական դպրոցների
ծրագրում համապատասխան փոփոխութիւնն մտցնե-
լով և մարենի լեզւին անցեալի հետ համեմատած—
աւելի լայն տեղ տալով:

«Հետեւապէս Երբե+ համապետական ու վաստակաց
երեսյն ու ալեպու է համար-ի, ենէ մեր ծխական զրադ-
րոցները հայկական են եղել այդ բառի իսկական ի-
մաստով, ենէ այդտեղ բոլոր առարկաների դասաւան-
դութիւնը մարդենի լեզուով է կատարւել և զրա հետ
միասին պետական լեզուն—ռուսերէնն էլ իր արժանի
առաջնակարգ տեղն է ունեցել:

«Վաստակաց ունին ու իսյ նաև այն բանի մէջ, որ
ռուսական գպրոցական վարչութիւններից անհայտ են
եղել այդ գպրոցները:»⁵⁰⁾...

Բաւականանանք ալպանով...

Մեր մամուլի էջերում այլպիսով երեան եկածը,
հարկաւ, չի կրում անցորդականի լատկանիշը, թող թէ
այդ ամեն զրութիւնների անմիջական առիթ հան-
գիսացաւ, ինչպէս ասացի, ի միջի ալլոց, կովկասի
Փոխարքայից սահմանած Դպրոցական Յանձնաժողովը
և վերջնից ազգիս Վեհի ներկայացուցիչների հեռա-
նալլ:

Սրան կից, շեշտելի է այն ևս, որ, ինչպէս ե-
րեւում է նոյն իսկ վերը բարձած մամուլից, այդ միակ
անդամը չէր, որ գպրոցական հարցը գրաւեց հրա-
պարակի ուշագրութիւնը: Այդ նոյնը տեղի է ունե-
ցել մեր գպրոցական գործի պատմական անցեալի ա-
մեն էտապների ելևէջերում, սակայն՝ առառաւելն 70-
ական և 80-ական թւականների տուաշին կէսում:

Ցարոնի է, որ 1884 թւի փետրւարի 16-ի պե-

50) Տես «Վտակ», 1908 թ., № № 104—106՝ «Մեր զրա-
դրոցները» (առաջնորդող):—Նոյն հարցերի մասին տես ևս „Մի-
ջակա-ի 1908 թւի մայիս - յունիս ամիսների № №-ներում Ա.
Քալանթարի և Հ. Առաքելեանի ուշագրաւ յօդւածները:

ասկան կարգագրութիւն-օրէնքը գալիս էր վերացնելու Գէորգ Դ. Կաթողիկոսի՝ ի դէմս 1874 թ. յուլիսի 19-ի Կանոնների մեր դպրոցների իրաւաղիղքի նկատմամբ վաստակածը, այն է լիովին բացասելու մեր դպրոցական նույնագույնութիւն-առաջնորդութիւն։ Սակայն, ուսանելի է, որ 1908 թւի Դպրոցական Յանձնաժողովի մշակած կանոնադրութեան նախադիմն երեմն, զորորու, իր V կէտի տեկստով, անցնում է նոյնիսկ 1884 թւի կանոններից էլ դէնը։

Այդպիսով՝ նոր վէճի արանքից ցցւում են մեզ ծառնօթ հին արմատները, և այն երբեմն նորագոյն ժիշերով...

Եւ այդ այդպիս լինելով, հարկաւ, ալսօր կրկնակի հետաքրքրական է անդրադառնալ 1884 թւականին ևս: Եթէ այսօր պաշտօնական «Կավказъ»-ի էջերից խօսում է ամ A. M., 1884 թւի վէճն ամփոփեց 1885 թւի պաշտօնական պեղեկագիրը...

Սակայն նախ՝ մի երկու կտոր տեղեկութիւններ Կովկասի Փոխարքայի սահմանած Դպրոցական Յանձնաժողովի մասին։

Ազգիս հանգուցեալ Մկրտիչ Ա. Վեհափառ Հայրապետ 1907 թւին կառավարութեան հաստատութեան առաջարկեց մի դպրոցական նախադիմ⁵¹⁾: Այդ

⁵¹⁾ Հարկ է ի նկատի առնել, որ հանգուցեալ Կաթողիկոսի առաջարկած նախադիմն անցաւ Դպրոցական Յանձնաժողովի գրադանց նիւթերի շարքը: Այդ նախադի տեկստն էր՝

«1) Հայոց եկեղեցու համար Ոուսաստանում վերահաստատում է իր նախակին իրաւունքը՝ ինքնուրոյնաբար բանալ իր սեպհական հանրակրթական դպրոցական հաստատութիւնները և պահել նրանց իր բացարձակ կառավարութեան ներքոյ: Բացման

առթիւ Կովկասի Տ. Փոխարքայի հրամանով կազմւեց յատուկ Դպրոցական Յանձնաժողով, որին անդամակցելու համար Վեհափառը նշանակեց իր կողմից երեք ներկայացուցիչներ: Յանձնաժողովի գրադաւոնքը սկսւեց Վեհափառի մահից յետոյ: Այդ Յանձնաժողովի կաղմակերպման և այլն մասին տեղեկութիւններն ամփոփւած են «Մեր Զանը» լրագրի «Ուսումնարանական խորհուրդը» յօդւածում, ուր, ի միջի այլոց, դեռ նախ բան Յանձնաժողովի գրադաւոնքների սկզբուելը և հարցին վերաբերեալ մանրամասնութիւնների պարզելը, շեշտակի ընդգծւեց թէ՝ ոքքան հնարին է զբաղւել դաշտական հարցով «Հայրապետական ա-

կարգը, պահպանութեան աղբիւները, դասընթացքը, դասարանների միւր և առհասարակ այդ կրթական հաստատութիւնների ամբողչ կազմակերպութիւնը և կառավարութիւնը որոշում են առանձին կանոնադրութիւններով, որ կը սահմանեն պատշաճաւոր եկեղեցական-հասարակական հիմնարկութիւնները:

«2) Հայոց եկեղեցական իշխանութիւնը պարտաւոր է հաղորդել բացաւած դպրոցների մասին երկրի բարձր իշխանութեան կամ ներքին գործերի մինիստրութեան:

«3) Այդ կրթական հաստատութիւնների սաների դինուորական ծառայութեան մէջ մտնելու յետածգման վերաբերմամբ, իրենց ուսումը աւարտելու համար, ծառայութեան ժամանակամիջոցը կրծատելու և առհասարակ գինուորական ծառայութեան վարման, ինչպէս և զօրքերի մէջ իսկական ծառայութիւնից խաղաղ ժամանակը արժակելու և ուսուցիչների՝ պահեստի մէջ հաշուելու վերաբերմամբ, հայոց դպրոցները հաւասարեցում են իրենց ուսման ծրագրով համապատասխան կառավարչական կրթական հաստատութիւններին» (Տես, ի միջի այլոց, իմ «Դպրոցների նիւթական-դրամական ապահովութեան հարցը. I. Հայոց ժոհմական Հոգևոր Դպրանոցների եկամտի աղբիւները», էջ XII—XIII):

թոռնի թափուր մնացած միշողին): Ահա «Մեր Զայնը»-ի այդ՝ «Ուսումնական խորհուրդը» վերնագիրը կրող խմբագրականը.

«Կովկասի փոխարքան յատուկ խորհուրդ է կազմել հայոց ուսումնարանական գործը որոշ կանոնադրութեամբ կանոնաւորելու համար:

«Փոխարքայի առաջարկութեամբ հանգուցեալ Մը կրրտիչ կաթողիկոսն այդ խորհրդի անդամներ նշանակել էր իր կողմից Սուրէնեան սրբազանին և պատ. Սո. Մամիկոնեանին ու Սիր. Տիգրանեանին: Կաթողիկոսի մահից յետոյ Սուրէնեան սրբազանը, իբրև տեղակալ, անկարող լինելով անձամբ մասնակցել այդ խորհրդին, իր կողմից նշանակել է ներկայացուցիչ Յուսիկ արքեպիսկոպոսին:

«Նուտով խորհուրդը սկսելու է իր գործը. — նա պիտի մշակէ մի կանոնադրութիւն, որը գուցէ շատ երկար արքիներ պիտի ծեւակերպէ, որոշ պայմանների մէջ դնէ մեր ուսումնարանական գործը:

«Հասկանալի է, թէ որքան մեծ զգուշութիւն է հարկաւոր, որպէսզի մի ացլպիտի էական խնդրի մէջ անխոհեմ կամ անզգոյշ քայլեր չառնուին:

«Բայց խնդիրն այն է, որ հանգուցեալ կաթողիկոսն ուսումնարանական խորհրդին իր կողմից երեք ներկայացուցիչ նշանակելով ոչ մի գիրեկանիւ, ոչ մի հրահանգ կամ ծրագիր չի առւել իր ներկայացուցիչներին, չի որոշել նրանց իրաւունքների և պարաւորութիւնների սահմանները, նոյն իսկ ընդհանուր գծերով անդամ չի գծել նրանց ուղին:

«Գուցէ այդ թերին առաջ է եկել այն հանգամանքից, որ կաթողիկոսը չէր կարող նախատեսել, թէ ինչ

ինդիրներ ու հանգամանքներ պիտի զբուէին խորհրդացում իր ներկայացուցիչների առաջ, որպէս զի բառ այդմ էլ հրահանգներ տար. անշուշտ ի նկատի կար, որ իւրաքանչիւր վիճելի կամ կասկածելի դէպօւմ հայ ներկայացուցիչները կրղիմէին կաթողիկոսին և հրահանգ կըխնդրէին:

«Արդ, ի՞նչ զբութեան մէջ են հանդիսանում ներկայումս այդ երեք ներկայացուցիչները: Նրանք պիտի մասնակցեն մի խորհրդի, ուր կարծիքներ ու մտքեր են յայտնելու ամենայն հարոց հայրապետի կողմից՝ առանց այդ հայրապետի համաձայնութիւնը ստանալու:

«Անկասկած է մի բան. — հայ ներկայացուցիչները խորհրդին կարող են մասնակցել միմիայն լոկ իրու հայրապետի կոնդակով նշանակուած հայրապետական ներկայացուցիչները: Եւ Կովկասի կառավարութիւնը կարող էլ չէ այլապէս նայել նրանց վրա: Հետօնաբար նրանց կարծիքները այլորոք նկատուածն են ինը և հայրապետուի կարծիք:

«Եւ այդ այգապէս էլ կրլինի, չնայելով, որ տեղակալը իր զբութեան մէջ փոխարքալին յայտնել է, որ թէակտ հայ ներկայացուցիչները մասնակցելու են խորհրդին, բայց խնդրի վերջնական տնօրէնութիւնը կախուած կրլինի հայրապետի հաւանութիւնից կամ ոչ հաւանութիւնից:

Եւ արգարեա:

«Մեր ուստահաւաններ աէլլը կանողինուն է և միայն նաև կարող է այդ մասին պաօբնութիւնն առել ու ընել «Ն ու ու: Կարծում ենք, որ զինուուն է նոյն առաւ որպէսուն է հայրապետական առուուն նոտիւր մասցած միջոցն ընթանելը արտին կամ նոցիդենքներ պատահին այդովուն:

«ԷՌԱՅՈՒԹԵՆ+ԱՅՐԵՆ ԵՐԱԿԱԿԱՆ ԽՆԴՐԵՐՆԵՐՆ ՔԵՐԱԲԵՐԸ ԱՄԲԵՐԸ»⁵²⁾:

Ապա՝ Յուսիկ արքեպիսկոպոսի տեղ նշանակւում
է Տեղակալից Մեսրոպ վարդապետը⁵³⁾:

Յետագյոււմ «Մեր Զայնը»-ում կարդում ենք՝

«Թէֆէլսից մեղ զրում են. — Փոխարքալի գիւանա-
տանը կից հայ գալրոցների կանոնագրութիւնը մշա-
կող յանձնաժողովի հայ անդամները, հայր Մեսրոպ
վարդապետ, պ. պ. Ստ. Մամիկոնեան և Ս. Տիգրա-
նեան, հրաժարուել են նիստերին ճառնահայլը-ց, ի նկատէ
ունենալով, որ ծառադող հարցերի ժնունեան մէջ մանելու-
իրենց ու մէ իբասունու լունին, որ այդ էրասունուը նրանց
վէ հարցող դաշտ Տեղապահը, այլ միայն հայոց ընդհան-
րական հայքաղեցուը Ուրեմն կատարուեց այն, ինչ որ
պիտի կատարուէր. այն է, այս հարցը իր վաղնանա-
նական լուծումը միայն ամենայն հայոց կաթուղիկոսից
սպասող հարց լինելով՝ պէտք է զգար այդ հայրապետի
կարօտութիւնը և բնդհատուէր. ուստի լաւ եղաւ որ
չկսուեց:...»⁵⁴⁾:

Գ.

Լսենք մեղ հետաքրքրող հարցի մասին պալպօնապետա-
րատայտւածը ևս: Այս անգամ բերելիքը վերաբե-
րում է զիխաւորապետ և. էշմիածնի Մինողին և սրա

52) Տես «Մեր Զայնը», 1908 թ., № 12 (յունարի 1):

53) Աղդ առթիւ տես «Մշակ», 1908 թ., № № 67, 70, և «Հովհան», 1908 թ., № 11, էջ 175: Համեմատիր «Սուրբիաս ե-
պիսկ. Պարգևանի նամակը» տեղակ. Երեմիա եպիսկ-ին, էջ 43-49:

54) Տես «Մեր Զայնը», 1908 թ., № 62 (մայիսի 18-ին),
և «Հայրենիք», 1908 թ., № 1, և «Մշակ», 1908 թ., № 105:

Երբեմնի ներկայացուցչին: Եւ այդպիսով արտայալուածն երբեմն աւելի քան կտրուկ է:

Նորագոյն փաստերից—

«Էջմիածին, 13 գեկտեմբերի.

«Փօխմարքայի դիւանատունը դիմել է սինօղին և յայտնելի որ հայոց գլորոցների համար ծրագիր և կանօնադրութիւն մշակող յանձնաժողովի նախադահ Հակիելը մտադիր է մօտ ժամանակում յանձնաժողովի պարապմունքները սկսել: Այդ պատճառով խնդրում է հաղորդել, թէ կաթողիկոսի կողմից նշանակված անդամները, Ստ. Մամիկոնեան և Ս. Տիգրանեան, այլ և աւելական նշանակած (!?) Յուսիկ արքեպիսկոպոսը Երբ կարող կը լինեն Թիֆլիսում լինել: Մնաւը, բը բարուցական խնդրութիւն մէջ լսաւունքելն էր իր նշանային, որուն լուսաւունք առաջանաւ և անմիջապես կարուցած էր անհետայի կանոնին իրաւունքին, դիւանատան թուղթն ուղարկեց տեղակալին, որ սա հաղորդէ պահանջված տեղեկութիւնը»⁵⁵⁾):

Աստրախանի թեմի Հոգեոր Դպրանոցի կանօնադրութեան առթիւ «Մշակ»-ում կարդում ենք՝

«... կազմվեց գլորոցի կանօնադրութիւնը և ուղարկվեց վեհ: Կաթողիկոսին, որ նա էլ իր կողմից ներկայացնէ մինխստրութեանը՝ հաստատելու: Բայց կաթողիկոսի անսկնկալ մահը նորից մի արգելք հանդիսացաւ այդ գործի շուտ իրականացման:

«Կանօնադրութիւնը մնաց կաթողիկոսական դիւանում: Դպրացի հոգաբարձութիւնը, աւսոնելով այդ, դիմեց միեւնոյն խնդրի առիթով կաթողիկ. տեղակալին

55) Տես «Մշակ», 1907 թ., № 184:

և խնդրեց, որ վերջինս դիմէ մինիստրութեանը և հաստատութիւն ինդիք:

«Տեղակալը հոգաբարչն Անդանը յայտնում է, որ ինչու անկարող է միջնորդել այդ ինորդի առաջնորդ և առաջնորդում է «աշատել նոր կայսութիւն»...⁵⁶⁾:

Այժմ՝ անցեալի փաստերից—

ա) «Սուքիաս Եպիսկոպոս Պարզեանի նամակը — գրուած սուքը էջմիածնի Սինօդի Ատենապետի Տեղակալ Գերապատիւ Երեմիա Եպիսկոպոս Գալստեանի անուան» աշխատութեան մէջ, ի միջի այլոց, կարգում ենք՝

«Գալով գպրոցական կառավարութեան Տեղակալի միջամտութեանը՝ պէտք է ասեմ, երբ որ բարձրացաւ գպրոցական յեղափոխութեան հարցը և նոր օրէնք սահմանուեց, այն ժամանակ ևս կար սրբազան Սինօդ և կաթուղիկոսական Տեղապահ, բայց իշենց յեւնասունենից վեց հանաւութիւնն ուղղակի ենթարկուի հրատարակուած կանոնագրութեան, մինչեւ նոյն իսկ ուսումնագուանի Տեղը, ամենայն հայոց Կայսութիւնութ ընտրուեց և առկախ խնդիրը վաղճան ստացաւ քանի մի բարեփոխութիւններով՝ որոց կարգում շատ խոստացուեց, բայց փոքր շնորհուեց:...

«... Տեղակալութիւնը կաթուղիկոսական նիշա փոխանորդութեան նմանութիւնն է և ոչ իրականութիւնն: Իսկ թէ դպրոցական կառավարութեան մասին մի քանի խօսք» և «Ծխականների ընդհանուր ժողովը»:

56) Տես «Մշակ», 1908 թ., № 45 — Ս. ք. Ասլանեանի՝ «Թեմական դպրոցի շուրջը», Աստրախան, 4 փետրվարի, և «Լրաբեր», 1908 թ., № 2՝ «Աստրախանի Թեմական Դպրոցի մասին մի քանի խօսք» և «Ծխականների ընդհանուր ժողովը»:

Նախանդանն այնուահան անլիտազը է որդուան և ընդը Ախօտն, այլ երկուքն էլ եղած են վերահսկող և պահպանող լինելու մինչեւ Տերն յայտնուի, կաթուղիկոսն ընտրուի և հաստատուի, յայտնի է առաւելապէս նրանով, որ այժմս իսկ էշմիածի ձեմարանի կանոնագրութիւնը ազգային նախարարից վերագարծրած՝ գտնուում է Տփիսիս Գլխաւոր Կառավարչապետի գիւանատանն սակաւ ինչ բարեփոխութիւններով՝ ինչպէս ասաց պարոն Ամբարդանեանց, բայց չէ առաջարկւում 'ի հաւանութիւն և լրնարութիւն Զեր Գերապատութեան, այլ պահպանուում է ապագայ Քահանայապետի ընտրութեան։ Ուրեմն, կառավարութիւնն էլ չէ ճանաչում իսկապէս լիազօր Տեղակալութիւն Սինօդի գործողութեան շրջանակում կամ դուրսը, որքան և իւր շնորհած օրէնքը « Կաթուղիկոսական Տեղապահ » է կոչում նախանդամ համարուած անձնաւորութեան և թողնում է նորան համեստ շրջանակում պահպանողական գործող՝ միւս անդամների համերաշխ խորհրդով։ Այս հասկանալովն է անշուշտ՝ որ Սինօդի անդամներն և թեմակալ առաջնորդները 1884 թուականին միատեղ ժողովելով յետագայ արծանագրութիւն կազմեցին՝ ուր և Զեր ստորագրութիւնն է գտնուում։—

Աներքոյ ստորագրեալքս Մկրտիչ արք Եպիսկոպոս, Գրիգոր արք Եպիսկոպոս Սագինեանց, Թաղէոս Եպիսկոպոս Զիւնական, Մեսրովք Եպիսկոպոս Սմբատեանց, Յովակիմ Եպիսկոպոս, Գրիգորիս Եպիսկոպոս Աղուանեան, Երեմիա Եպիսկոպոս, Ներսէս Եպիսկոպոս, Գէորգ Եպիսկոպոս և Մամբրէ վարդապետ Սանասարեանց. Երկիցս ժողովեալ 'ի 20-ն Փետրվարի յետ ընդ Երկար խորհրդակցութեան միաձայն հաւանութեամբ ո-

բոշեցաք չանցանել բնաւ զիրաւասութեամբ Ծայրադոյն Պատրիարք Կաթուղիկոսի, որ նուիրական է վասն Հայաստանեացս Ա. Եկեղեցւոյ, այլ ժողուլ զանօրէնութիւն նորոգ հրահանդութեան կանոնաց հաստատելոյ ՚ի 16 Փետրվարի վասն Եկեղեցական ծխական ուսումնարանաց Հայոց ՚ի բարեհաճ կամս բարեխնամ կառավարութեան:

Մկրտիչ արք Եպիսկոպոս
Գրիգոր արք Եպիսկ. Սաղինեանց
Թաղէոս Եպիսկոպոս
Մեսրովը Եպիսկոպոս
Յովակիմ Եպիսկոպոս
Երեմիա Եպիսկոպոս
Գրիգորիս Եպիսկ. Աղուանեանց
Գէորգ Եպիսկոպոս Սուրէնեանց
Ներսէս Եպիսկոպոս
Մամրէ վարդապետ»:

«Յայտնի ճշմարտութիւն Է որ իւրաքանչիւր Հայրապետի բարձրագոյն իշխանութեան հետ սկսած հազորդակցութիւնները էջմիածնի կալուածների մասին, կրօնի և հայոց լեզուի արքունի վարժուրաններում դաստութեան մասին, բարձրագոյն կարգադրութեան ի՞նչ ի՞նչ չօգուածների փոփոխութեան մասին, և այլն, և այլն, նորս ճահուամբ դաստիք Են առնուած և յաջորդէ հասարաւունեամբ վերսկսուած, թէպէտե. Տեղակալներ օրէնքի նանաչած սահմաններում, եղել են միշտ:...»⁵⁷⁾)

57) Տես «Սուրբիաս Եպիսկոպոս Պարզեանի նամակը—գրուած (20 ապրիլի 1892 թ.) սուրբ Էջմիածնի Սինօդի Աստենապետի Տեղակալ Գերապատիւ Երեմիա Եպիսկոպոս Գալստեանի անուան», Երևան, 1907 թ., էջ 44—45, 46—48:

Սուքիաս եպիսկոպոս (ապա՝ արքեպիսկոպոս) Պարզեանի ակնարկը — «Երբ որ բարձրացաւ գպրոցական յեղափոխութեան հարցը և նոր օրէնք սահմանուեց» — 1884 թւի վեարւարի 16-ի պետական կարգադրութեան-օրէնքի մասին է, որով, ինչպէս ասցի, ի վերացումն 1874 թւի յուլիսի 19-ի «Ժամանակաւոր կանոնների»-ի հայ հոգևորականութեան վերապահումն էր ունենալ միայն մի- և երկդասեան տարրական եկեղեցական-ծխական դպրոցներ, և այն՝ լուսաւորութեան նախարարութեան խիստ հսկողութեան տակ, ասել է՝ Անոնցն բացառութեան էլ հայ հոգեւորական-Ծխական անհախութեանը դպրոցական գործութեան և 1874 թւի յուլիսի 19-ի կանոններով գծած լայն շրջանի հանդէպ գրւում էր միայն և եթ մի-և երկդասաւան դպրոցներ բանալու կարծւած իրաւունքը⁵⁸⁾:

Ինչպէս յատանի է, այդ առթիւ տեղի ունեցաւ պաշտօնական պատկրակութիւն ո. էջմիածնի Սինոդի կողմից, որը ստանձնեց Աստրախանի թեմի այն ժամանակայ թեմակալ՝ Սուքիաս եպիսկոպոս Պարզեանը։ Սինոդի այդ առթիւ Սուքիաս եպիսկոպոսին ուղղած 1884 թւի գեկտեմբերի 3-ի № 3342 գրութեան հարազատ օրինակը բերւած է Սուքիաս եպիսկոպոսի յատկապէս այդ պատկրակութեան նրաւիրած աշխատութեան⁵⁹⁾ մէջ, ուստի մենք այժմ դիւրութիւն ունենք ի մօտոյ տեղեկանալու՝ և Սի-

⁵⁸⁾ 1874 թւի յուլիսի 19-ի կանոնների և սրանցով գծածի մասի տես ստորև՝ Գլ. Բ:

⁵⁹⁾ Տես «Պատուիրակութիւն Սուքիաս եպիսկոպոսի ի Ս.-Պետերբուրգ Հոգևոր դպրոցների մասին», Վաղարշապատ, 1907 թ.:

նողի այդ գրութեանը, և պատւիրակութեան վերաբերեալ ամեն մոմենտներին ու մանրամասնութիւններին:

Ահա ս. Էջմիածնի 1884 թւի գեկտեմբերի 3-ի № 3342 գրութիւնը՝

«Կառավարչի Հայոց թեմին Սատրախանայ գերապատիւ Սուքիաս Եպիսկոպոսի. Զինի երրորդական միջնորդական գրադրութեանց Սինողիս ընդ Նորին Պայտառափայլութեան Կառավարչապետի քաղաքական մասին Կովկասու վասն ազգային և եկեղեցական գպրոցաց Հայոց և երրորդ անգամ ընկալնոց ի նմանէ զմերժողական պատասխանիս, Սինողս նկատէ, դի առանց առաքման ի կողմանէ սորին յատուկ և բանիբուն խոհական անձին ի Ս. Պետերբուրգ ի միջնորդութիւն առ պլիսաւոր պաշտօնեալս Տէրութեան Ռուսիոյ, անհնարին է ի ձեռու բերել զցանկանալին յառաջադիմութիւն գործոյս: Սորին ազագաւ Սինողս գնելով զյոյս իւր ի վերայ Գերապատուութեանդ և ըա՞շ կշռադատելով, զի Դուք Զերով խոհեմ և հեռատես նկատողութեամբ ունիք արդարացուցանել զյոյս իւր, որոշեաց առ այս նպատակ նշանակել զՁեզ և առաքել ի Կայսերական մայրաքաղաքն Ս. Պետերբուրգ:

«Ուստի և Սինողս Սրբոյ Էջմիածնի համաժայնութեամբ բոլոր անգամոց իւրոց հրաւիրէ զգերապատիւ Սրբազնութիւն Զեր և յանձն առնէ Զեզ, ընդ ստանալ գրոյս՝ առանց ժամակորոյս լինելոյ, աշխատութիւն յանձն կալեալ՝ փութով յովիտ գնալ անձամբ ի Ս. Պետերբուրգ և խորհրդակցութեամբ ընդ երևելի անձինս ի մերազնէից՝ որք անդ, հասուն մտօք և խո-

հական միջոցօք զելս հնարից ի գործ դնելով՝ նախապէս ներկայանալ Տեառն Կառավարչապետին Կովկասու Կնեաղ Կորսակով՝ Դոնգուկովին, որ քանի աւուրբք յառաջ ուղեարեալ է ի Ս. Պետերբուրգ, և հայցել ի նմանէ զշնորհն և զբարեամիտ միջնորդութիւն Նորին առ Տէր Նախարարն Ներքին գործոց և կամ առ նոյն ինքն ամենողորմած Կայսրն Ռուսաց. որպէս զի՞ միջնորդութեամբ Նորին և խնդրանօք Զերովը ամենողորմածաբար բարեհանեսցի Թագաւոր Կայսրն, եթէ ոչ խսպառ, գէթ լետաձեկլ զգործադրութիւն այնը նորոց կանոնաց մինչ ցընարութիւն և ցհաստատութիւն նորոյ Կաթողիկոսի աղջիտ Խոկ եթէ անհանոյ իցէ Նորին Պայծառափայլութեան Կորսակովի միջամտել յաս գործ, յայն գէսպ մատչիլ առ Տէր Նախարարն Ներքին գործոց այսու յատուկ միջնորդական գրութեամբ Մինողիս (որ ընդ սմին առաքի), և խնդրել զմիջնորդութիւն նորա առ այս: Եւ եթէ խնդրարկութիւնը Զեր առ Նախարարն Ներքին գործոց անօդաբեր և անբաւարաբը մնասցեն ի կողմանէ նորին ևս, ի վերշին դէսպ ամենախոնարհ պաղատանօք արկանել ընդ զարշապարօք նորին Կայսերական Մեծութեան զաղերս Մինողիս և հայցել զշնորհն յերեսաց Նորին Կայսերական Մեծութեան, որպէս զի բարեհանեսցի հրամալել՝ գննէ զգործադրութիւն նորոց Բարձրագոյն հաստատեալ կանոնադրութեանց վասն եկեղեցական դպրոցաց մերոց յետաձեկլ մինչ ցհաստատութիւն Վեհափառ Կաթողիկոսի, որով և աղատել զՄինողս յայսմ դժուարաատար և յանտանելի զրութենէ: Վասն զի՞ ցանկութիւն և խնդիր Մինողիս չէ ընառ դիմադրել ընդդէմ բարե-

համ կամաց թագաւոր Կալսեր կամ օրէնսդրութեանց նորին, այլ ու նուուիրական և ի նախնի որբոց չարց ե- կեղեցոյ առանդաբար հատեալ ցայտ վայր իրաւագու- թիւնուն Կալողիւսաց աղքիս մ' եղջցին, որով Սինոդու պարագաւառը գործ առաջի աղքընուուիր չուլուայւուի ի- րոյ, եկեղեցական կանոնաց և առաջի իոնձի):

«Արդ՝ բաշայիս է Սինոդս, զի գերապատութիւն Զեր ըստ ազգասիրական եռանդեացդ և ըստ բաշ հմառութեանցդ ունիթ զամենացն ճիգն աշխատանաց թափել և զհնարաւոր միջոցս ի կիր ածել առ բար- ւոք ի յանդ հանել զայս վսեմ գործ և յանձնարա- րութիւն ի պարձանս աղզի և եկեղեցւոյ մերոյ սրբոյ:

«Բնդ սմին Սինոդս ընդարձակէ Զեզ զլիակատար իրաւունս, զամենացն ծախս ուղեորութեան և կե- ցութեան Զերոյ ի Ս. Պետերբուրգ առնել ի վիճա- կային գումարաց Աստրախանու և կամ յեկեղեցական արդեանց թեմիդ, յարակցելով թէ՛ վասն նշանակե- լոյ Զեզ ի պէտս բնակութեանդ զվայելուչ սենեակս՝ Սինոդս ի միասին ընդ այսմ առանձին գրութեամբ խնդրեաց զպատշանաւոր տնօրէնութիւն իշխան Հո- գարարձուի եկեղեցւոյն չայոց Սանկտ-Պետերբուրգայ:

«Իսկ վասն տեղեկութեան և կարեորն հրահան- գութեան՝ Սինոդս ընդ սմին առաքէ առ Զեզ զա- մենացն գործս դիւանատան հանդուցեալ Կալթողիկոսի ազգիս և զբոլոր գրագրութիւնս յարուցեալս ի Սի- նոդիս վասն այսր առարկայի»⁶⁰⁾:

Ապա. — Տեղապահ՝ Մակար արքեպիսկոպոսի (ա- պա՝ ամենայն չայոց Կաթողիկոս)՝ նոյն Սուքիաս Ե-

⁶⁰⁾ Տես ibid., էջ 18—20:

պիսկոպոսին ուղղած (գեկտ. 28) նամակում կարդում
ենք՝

«... որովհետեւ և ազգանել անոնք գրադրութեան+ է
մասին հոգեւոր և ծխական դպրոցաց Եկեղեցւաց Հայոց
եղեալւ էն ըստ ՁԵՐ կառաջարարութեան և այլին Գոյնարդա-
յու-Ռեան Կովկասու, վասն որոյ Սինոդն շնորհածանաց,
միջապես է գործն վերաբերեալ միմայն Պատրիարք+ Կա-
ռուկիւնուն, այլ խնդրեալ է և այժմ ևս խնդրէ՛ թո-
ղուկ զայս խնդիր ցհաստատութիւն նորոյ Հայրապե-
տիք...»⁶¹⁾:

Սուքիաս եպիսկոպոսը՝ ստանձնելով պատրիարքու-
թիւնը՝ Պետերբուրգում իրեն յանձնարարած պաշ-
տօնեաներին զիմելիս՝ շարունակ արծարծում—պաշտ-
ապանում էր այն ուսամէտը, որ «Դպրոցական խնդիրը
պատր հոգեւոր գործ է, ինչպէս և իրենցում (ռուսաց
մօս) նոյնն է հոգեւոր վարժարանների կառավարու-
թիւն»⁶²⁾, որ ուսումնարաննական կառավարութեան
գործ և հրահանգ ի սկզբանէ անտի և այսր գտնու-
ում է Հայոց Կանոնիկոսաց ձեռքում, և ոչ ոք չունի
վստահութիւն մտնել նոցա իրաւանց սահմանի մէջ⁶³⁾, որ
«Հայրապետի՛ իրաւունք են միայն դառնալ առ իւր
ընտրող ժողովուրդ հնար և գումար պահանջելու Ռու-
սաստանում գտնուած ամէն մի Հայոց վիճակում Սե-
մինարիաց բանալու և գորանց կանոնադրութիւնը կազ-
մելու և առաջարկելու ի հաստատութիւն Թագաւոր
Կայսեր, որպիսի գործունէութեանց Սինոդ չէ կարող

61) Տես ibid., էջ 28:

62) Տես ibid., էջ 9:

63) Տես ibid., էջ 32:

ծեռնածիդ լինել»⁶⁴), որ «կամբուշին վերապահուածէ և ուսումնարանաց կառավարութիւն»⁶⁵), որ «Հայազգի հասարակութեան լընունեան գործ է ականքանիւնուն ուղարկութեան ցայտոց բացառապես հայ հոգեւորականունուն յեւուն է լուսաւ, մնալ էաւ իւր առաջանական առաջանունուն սունեցած ժամանակներ»⁶⁶), որ «ըստ սովորութեան և աւանդութեանց Հայաստանեալց եկեղեցւոյ, դարաւոր ժամանակօք սրբագործելոց, ծեռնարկել ի հոգեւոր և ի բարոյական լուսաւորութիւն հօտին՝ սեփական է Գլխոյն եկեղեցւոյ, որպէս բաշաբար է այդ կառավարութեան ի գրագրութենէ ամացն անցելոց՝ ըստ այսմ առարկայի»⁶⁷), որ «մինչև այսօր բոլոր Պետական կարգադրութիւններ մեր եկեղեցական խնդրոց մասին Սբունագույն Հայոցապետի միջոցաւ են հաղորդուած Հայոց հասարակութեան ի գործադրութիւն»⁶⁸), և այլն:

Սակայն այդ ամեն պաշտօնական ջանքերը՝ համոզելու Պետերբուրգի շրջաններն ի գերեւ ելան, Սուրբիաս եպիսկոպոսին մերժեց Կայսեր տեսութիւնը և... 1885 թւին յատարաբւեց Կոմիսարի Կառավարչականի պաշտօնական տեղեկագիրը»⁶⁹), ուր, ի միջի այլոց, կարգում ենք՝

64) Տես *ibid.*, էջ 32—33:

65) Տես *ibid.*, էջ 37:

66) Տես *ibid.*, էջ 38:

67) Տես *ibid.*, էջ 41:

68) Տես *ibid.*, էջ 47:

69) Տեղեկագիրը լուս է տեսնել «Նոր-Դար»-ի 1885 թւի № 41-ում, որտեղից արտառաւած է Սուրբիաս եպիսկոպոսի գրքում (Տես *ibid.*, էջ 87—99):

«Ներկայումս տէրութեան կարդագրութեամբ փակվում էն բոլոր այն հայոց ծխական ուսումնարանները, որոնց վարչութիւնը չէ ուղղում կատարել այդ ուսումնարանների համար տէրութիւնից զրուած կանոնները: Որովհետեւ այդ տեսակ ուսումնարանների փակուելու առթիւ հասարակութեան մէջ դիտամամբ տարածվում էն անճիշդ լուրեր, ուստի հետևեալ ծանուցումը տպվում է պարզելու ներկայ հանդամանքը և ցոյց տալու խսկական պատճառները, որոնք ստիպեցին տէրութեան դիմելու վերոգրեալ ցաւալի միջոցին:... Զը նայելով նորան, որ 19 յուլիսի 1874 թ. յիշեալ օրէնքով ուսումնարանական վարչութեանը տրվում էր շատ սահմանափակ հակողութիւն հայոց ծխական ուսումնարանների վերայ և որ ուսումնարանական կրթական կէտաից ուսումնարանների վերայ դիտողութիւնը այդ օրէնքի զօրութեամբ ամբողջապէս մնում էր հայոց հոգեսոր իշխանութեան վերայ, այնու ամենայնիւ այս վերջինը զանց էր առնում հաղորդել ժողովրդական ուսումնարանների վերատեսչութեանց մինչև անդամ ամենակարեսոր տեղեկութիւնները հաշուեառութեան համար թէ այն անձանց մասին, որոնք նշանակվում էին ուսուցչի պաշտօնով հայոց դպրոցներում և թէ հէնց գպրոցների մասին»⁷⁰⁾...

70) Տես ibid., էջ 87, 90—91:—ի դէպ: Սուրբիաս եպիսկոպոսը ևս գրում է՝

«Առանց թագուցանելու պէտք է խոստովանենք՝ որ Սանկտ-Պետերբուրգ գնալով՝ մեր կարծիք փոխեցինք հրահանգի գործադրութեան վերաբերութեամբ, և առանձ անարդար գտանք մեր հոգեսոր բարձրագոյն վարչութիւն քան Պետական կառավարու-

Այս պատճառաբանութեան կից, պաշտօնական տեղեկագիրը բերում է 1884 թւի փետրվարի 16-ի օրէնքի «օրինական» հիմունքները ևս.

«... հանգուցեալ Գէորգ IV Կաթողիկոսը 1873 թ. հրատարակած կոնդակի մէջ յիշում է որ Հայոց Եկեղեցւոյ կանոններով և աւանդութեամբ թեմակալ առաջնորդները և սոցա յաջորդները պարտաւոր են հոգալ թեմական և ծխական ուսումնարանների բարեկարգութեան և յառաջադիմութեան մասին և հսկել նոցա վերայ. աւելացնելով որ այս առաջարկութիւնը գրուած է և Հայոց Եկեղեցւոյ մասին հրատարակուած 1836 թ. կանոնագրութեան (պօլօժենիալի) մէջ 66 յօդուաժում (այժմ 975 յօդ. մ. 1. հատ. XI, օր. ժող.): Ինչ որ վերաբերում է մեր օրէնսդրութեանը, սորա մէջ որոշուած է, որ Կաթողիկոսի վերջնական վճռին առաջադրվում են միմիայն պատուակներ (գործերը⁷¹⁾), որոնք վերաբերում են հաւասարութեանը, աստուածաշատութեան կատարմանը և այլն (յօդ. 929 նոյն հատորի և մասի): Իսկ Սինօղը վերահսկում է իւրեան ենթարկուող բոլոր վարչութեանց և պաշտօնական անձանց գործունէութեան վերայ (յօդ. 938), ի միշի ալլոց, բնականապէս և եպիսկոպոսների վերայ: Վերայիշեալ 975 յօդ. ուսումնարանական գործերը

թիւն. ըստ որում նախ՝ 1874 մուականին տրուած հրահանգներ հոգնոր դպրոցաց մէջ ժողովրդական ուսումնարանաց տեսչի հակողութիւն ունենալու իրաւանց մասին, հանգուցեալ Հայրապետի կողմանէ պակասաւոր է հայորդուած ի գործադրութիւն սրբազն Սինօղի և վիճակաւոր առաջնորդաց, և վերջինքս անմեղութեամբ պակասաւոր են գործադրած....» (Ցէս ibid., էջ 81—82):

⁷¹⁾ Ընդգծումը բնագրին է:

ուղիղ վերաբերում է թեմակալ առաջնորդների գործունեութեան շրջանին, որոնք, ըստ 975 յօդ. Սինոդին ներկայացնում են թեմերի կառավարութեան միջոցին իւրեանց գործունեութեան հաշիւր, սորտ հետև և ուսումնարանների կառավարութեան հաշիւները, իսկ 1003 յօդ. Ենթարկում Կաթողիկոսի զրյաւաւոր կառավարութեանը Եջմիածնայ հոգեւոր ձեմարանը, մինչև անգամ հոգեւոր գպրոցները այդ յօդուածով կախուած են Եպիսկոպոսից, որի թեմում գտնվում են այդ գպրոցները»)՝⁷²⁾

Եւ ապա՝

«Աչքի առաջ ունենալով թէ՛ ուսումնարանական վարչութեան հայոց գպրոցների մէջ ճիշդ յարաբերութիւն հաստատելու անհրաժեշտ կարևորութիւնը և թէ հայ ժողովրդի կրթութեան օգուար, որ Կառավարութեան համար միշտ թանկագին է, ուստի հրատարակուած էին 16 փետրուարի 1884 թ. լրացրուցիչ կանոնները։ Այս կանոններով բոլորովին վէ պահպատճեմ հայոց հոգեւոր իշխանութեան իրաւունքը գրպրոցների կառավարելու մասին, միայն տեղական ուսումնարանական վարչութեան զրուած է պարտականութիւն՝ հակել նոցա մէջ աւանդուող բոլոր առարկաների վերալ, բացի կրօնից, նոյնպէս և պահանջել, հարկաւոր դէպքում, հրաժարեցնել այն ուսուցիչներին, որոնց գործունեութիւնը անհամապատասխան երեար նոցա կոչմանը։

«Այս կանոնները ոչ թէ միայն համաձայն են Ուսուաստանի բոլոր ուրիշ այլագաւան ուսումնարանների

72) Տես ibid., էջ 95—96:

համար եղած կարգադրութիւններին, այլ և չայ լուսաւորչական հոգևոր իշխանութեանը տալիս են մեծամեծ իրաւունքներ համեմատելով այն իրաւունքների հետ, որոնցից օգուտ են բաղում միւս այլադաւան եկեղեցիք: Էջմիածնայ Սինօդը՝ 16 փետրուարի կանոնների գործադրութեան մերժումը, ինչպէս վերև լիշուեցաւ, հիմնում է անկանոն բացարութեան վերայ իրը թէ չայոց զարոցների մասին որևէ է կարգադրութիւն անելու իրաւունքը պատկանում է միայն կաթողիկոսին և թէ այդ իրաւունքը ստանում է իւր զօրութիւնը չայոց եկեղեցւոյ կանոններից, որոնք սրբազործուած են յետազայ ժամանակներում Ռուսաց օրէնսդրութիւններով: Այն ինչ յայտնի է, որ վեհափառ Կաթողիկոսին պատկանում է վճռողական ծայն միայն հոգևոր նշանակութիւն ունեցող գործերի մէջ, որոնք 945 յօդ. հաս. I, օր. ժող. զօրութեամք իրաւ չեն կարող վճռուիլ առանց կաթողիկոսի հաստատութեան. իսկ Սինօդը, որ կազմուած է 11 Մարտի 1836 թ. Բարձրագոյն հրամանաւ իրեւ Ռուսաց Կայսերութեան վարչութիւն, նորա օրդանն է, ուստի նա ենթարկուած է չայոց լուսաւորչական եկեղեցւոյ գործերում, 940 յօդ. նոյն թուականի և հաստորի հիման վերայ կառավարող Սէնատին, Կովկասի վոխարքային (այժմ պլիսաւոր կառավարիչ բազաքային մասի Կովկասում) և Ներքին գործոց նախարարութեան իշարս միւս այլադաւան բարձրագոյն հոգևոր վարչութիւնների, ինչպէս այդ բառացի յայտնուած է օրէնքի մէջ: Ինչ որ վերաբերում է եկեղեցական կանոններին, որոց վերայ մատնացոց է լինում չայոց հոգեորականութիւնը, կաթողիկոսի և Սինօդի չա-

յոց ուսումնարանների կառավարութեան իրաւունք-ները որոշելու ժամանակ, այդ կանոնները նոյն իսկ հայոց հոգևորականութեան խօսքերով հաստատուած են ուսուաց օրէնսդրութեամբ: 11 Մարտի 1836 թ. Բարձրագոյն հրամանից յետոյ, որ որոշում է Խու-սաստանում Հայ լուսաւորչական եկեղեցւոյ օրէնս-դրութիւնը, այս եկեղեցւոյ համար ոչ մի նոր եկե-ղեցական կանոն, որ անհամածայն լինէր ուսուաց Կայ-սերութեան օրինաց, ակներեւ է որ հրատարակուած չէր կարող լինէլ: Ուստի Էջմիածնայ Սինօդը բոլո-րովին հիմք չունէր հրաժարուել մտցնելու ի գոր-ծադրութիւն Հայոց գպրոցների մէջ 16 փետրուարի 1884 թ. կանոնները, որոնք Բարձրագոյն հաստա-տուած էին, և յետածգել նոցա գործադրութիւն մին-չեւ նոր Կաթողիկոսի բնարութիւնը»⁷³⁾)...

Յատկապէս՝ թէ որ աստիճան հիմնաւոր էր պաշ-տօնական տեղեկագրի շեշտը թէ՝ «1884 թ. լրա-ցուցիչ կանոններով բարեկան լի պահանջման Հայոց հոգևոր իշխանութեան իրաւունքը գպրոցների կա-ռավարելու մասին»—գրա պատասխանը գտնում ենք նոյն իսկ „Կավказъ“ պաշտօնական թէրթի առյն 1908 թւին գրի առածում»

„Въ чемъ государственная власть нарушила национальные интересы армянского народа, въ томъ она безъ малѣйшаго колебанія созналась, и всѣ тѣ ограничения въ школьнмъ вопросѣ, которыя послѣдовали посмѣ изданія правилъ 19 июля 1874 года, всѣ они отмѣнены Высочай-

⁷³⁾ Տես ibid., էջ 97—98:

шимъ указомъ 1-го августа 1905 года—ինչում
պետական իշխանութիւնը խախտել էր հայ ժողովրդի
ազգային շահները, դրանում նս (պետական իշխանու-
թիւնը) խոստովանւեց առանց տաստանման, և գորո-
ջական հարցում տեղի ունեցած այն ամեն սահմա-
նափակումները, որոնք գորութիւն առան 1874 թ-ի
յունի 19-ի կանոնները հրաժարակունիչնեց յեպոյ, խա-
փանւած են 1905 թւի օգոստոսի 1-ի Բարձրագոյն
ուկազով»⁷⁴⁾...

Իսկ թէ, սրան կից, որ ասափման տրամաբանական
և ճիշտ են նոյն պաշտօնական տեղեկագրի «օղինական»
թեղերը,—այդ հարցին կանցնեմ ստորեւ:

Դ.

Մի կողմ թողնելով «Ոռւսաստանի բոլոր ուրիշ
այլադաւան ուսումնարանների համար եղած կարգադ-
րութիւնները» և «այն իրաւունքները, որոնցից օ-
գուտ են քաղում միւս այլադաւան եկեղեցիք» և ա-
մենեխն կանգ չառնելով դրանց և հայոց եկեղեցու և
ուսումնարանների իրաւանց ու գիրքի վրա, քանի որ,
ըստ պաշտօնական տեղեկագրի, «Հայ ժողովրդի կըր-
թութիւնը» «կառավարութեան համար միշտ թան-
կագին է» և հենց այդ պատճառով և նկատմամբ
«հրաժարակուած էին 16 փետրուարի 1884 թ. լրա-
ցուցիչ կանոնները»՝ տեսնենք—յիշա—լ՝ «այս կանոն-

74) „Կավказъ “-ի №-ը չկայ ծնոքիս տակ, ուստի քաղում
եմ «Հովիւ» -ի 1908 թի № 24-ից—տես Սեղրակ Մանդի-
նեանի՝ «Հայոց եկեղեցական ուսումնարանները» յօդւածը:

ներով բոլորովին չի պակասում Հայոց հոգևոր իշխանութեան իրաւունքը դպրոցների կառավարելու մասին):

Նախ՝ այստեղ մի հակասութիւն կայ: Եթէ 1884 թւի փետրւարի 16-ի օրէնքի նպատակն էր, ի միջի այլոց, հաւասարեցնել, մի յայտարարի բերել ուրիշ և հայ եկեղեցու և ուսումնարանների իրաւադիրքը, հարկաւ, այդ անել նա կարող էր միայն երկու հանապարհով կամ կարճելով հայ եկեղեցու և ուսումնարանների իրաւասութիւնը, կամ բարձրացնելով-ընդլայնելով ուրիշներինը: Հայ եկեղեցին և սրա ներկայացուցիչ հոգևորականութիւնը՝ յանձին ազգիս Վեհափառ Կաթողիկոսի մինչ 1884 թւի փետրւարի 16-ի կանոնները վայելում էին 1874 թւի յուլիսի 19-ի կանոններով արտօնած Յնդիանունիւնը, հետեւապէս՝ 1884 թւի կանոնների նպատակը կարող էր լինել միայն՝ կարճել Հայ հոգւուր իշխանութիւնն իշխանութիւնը: Եւ այդ մասին վիճելն անկարելի է, որովհետեւ այսօր «Կավказъ»-ի պաշտօնական էջերից ևս յայտարարւած է, որ պետական իշխանութիւնը 1884 թւի կանոններով «Լայնութել եք հայ ժողովրդի ազգային շահերը»:

Այդպիսով՝ միանգամայն վերացրած համարելով Հայ հոգևորականութեան իրաւանց կարճելուն նկատմամբ 1884 թ. փետրւարի 16-ի կանոնների արամագրութեան վերաբերեալ ամեն կասկած՝ աւեմնենք թէ ՞՞ ասպիճան օրինական էլն այդ կանոններին է պաշտպանութիւնն իշտ՝ պաշտօնական պատճառաբանութիւնները: Պարզել այդ հարցն անհրաժեշտ է, որովհետեւ այսօր ևս, գրեթէ 25 տարի անց, «Կավказъ»-ի պաշտօ-

նական էջերից, կարծեօք⁷⁵⁾), լուռում են 1885 թւի պաշտօնական տեղեկագրի «օրինական» հիմունքները, նամանաւանդ որ Կովկասի Փոխարքայի սահմանած Դպրոցական Յանձնաժողովի մշակած կանոնադրութիւնը ևս, իրօք, մի յետադարձ բայլւածք է դէպի նոյն 1884 թւի փետրւարի 16-ի կանոնները, երբեմն, ինչպէս շեշտած է վերը, նոյն իսկ աւելի՛ բացասական⁷⁶⁾:

1884 թւի փետրւարի 16-ի կանոնները, համաձայն պաշտօնական տեղեկագրի, «Էսլորուլին» ՀՀՆ կանոնած «Պահանջնելու Հայոց հոգեւոր իշխանութեան իրաւունքը դպրոցների կառավարելու մասին», ասել է՝ նրանց, արդ կանոնների նպաստակից դուրս էր տիրող պետական օրէնքին հակասութու արամադրութիւնը, և ահա ինչու նոյն պաշտօնական տեղեկադիրը՝ ելակէտ առնելով Պետական Օրէնքի XI հատ. I մասը (1836 թւի մարտի 11-ի «Պոլոժենիէ»—ից)՝ առանց ինչ երկմտելու, գալիս է շեշտելու՛—

«Եշմիածնայ Սինօդը Էսլորուլին հիմն լունէք հրաժարուել մտցնելու ի գործադրութիւն Հայոց զբարոցների մէջ 16 փետրուարի 1884 թ. կանոնները և յետածգել նոցա զործադրութիւնը մինչև նոր Կաթողիկոսի ընտրութիւնը»:

75) „Կավազъ“ի յօդւածներին ևս ծանօթ եմ միայն հայ թերթերից:

76) Զորօք., § V-ը: Տես ևս «Հովիւ», 1908 թ., № 18, 23, 24—Մեղրակ Մանդինեանի՝ «Հայոց եկեղեցական ուսումնարանները»,—«Նոր-Դպրոց», 1908 թ., № 2—3. Տէր-Միքարեանի՝ «Մեր ծխական դպրոցների նոր կանոնադրութեան նախագիծը»,—«Մեր Զայնը», 1908 թ., № 79. «Միթէ ալդ էինք սպասում» (առաջնորդող):

Ալսօր, Երբ, մինչ այս—մինչ այն, 1905 թւի օդոսառափ 1-ի Բարձրագոյն ուկազով վերականգնւած էն 1874 թւի յուլիսի 19-ի կանոնները, ասել է՝ Երբ հրապարակին տիրում էն 1884 թւի փետրվարի 16-ի կանոններին և 1885 թւի պաշտօնական տեղեկագրին նախորդող պետական նորմաները, այսօր, ասում եմ, 1885 թւի պաշտօնական տեղեկագրի պատճական քաշը նոյն իսկ աճում է, նամանաւանդ եթէ ի նկատի առնելու լինենք Դպրոցական Յանձնաժողովի մշակած նախագիծը:

«Էջմիածնայ Սինօղը բոլորովին հիմք չուներ հրաժարուել և այլն»—1885 թւի պաշտօնական տեղեկագիրը պնդում է այդ, որովհետև «Կաթողիկոսի վերջնական վճոխն առաջադրվում էն միայն պատճեն գործութերը, որոնք վերաբերում են հաւատոյ ուսմանը, աստուածաշատութեան կատարմանը և այլն», և որովհետև «Կաթողիկոսի զինաւոր կառավարութեանը» ենթարկում է... Թիայն էջմիածնայ հոգեւոր նեմարանը, ասպա՝ ամեն ինչ ենթակայ է էջմիածնի Սինօղին, որը «կազմուած է 11 Մարտի 1836 թ. Բարձրագոյն հրամանաւ իրեւ Ռուսաց Կայսերութեան վարչութիւն, նորա օրդան»:

Այդպիսով մեր առաջ գրւած են Երկու հարդենաւ հարցեր, որոնց շուրջն է պատառմ, որոնցից է կախւած մեզ հետաքրքրող հարցի օվինական կամ աւելի ճիշտ՝ նըստահան լուծումը: Այդ հարցերն են՝

- ա) Ի՞նչ առեւ է «պատճեն հայելառ գործեր» սասածութեանը:
- բ) Ո՞րն է էջմիածնի Սինօղի կը առանց առհմանը՝ յասական դպրոցական հարցում:

Պարզելով այդ հարցերին վերաբերեալը՝ համաձայն

Պետական Օրէնքի (XII հաստ. I մաս), մէնք ու յօպու պարզած կլինենք հայ եկեղեցու և հոգևորականութեան ու սրա Վեհավասու Հովւապետի իրաւասութեան սահմանադիմք մէր դպրոցական գործում:

Անյնենք այդ հարցերին: Նախ՝ Երիտրու հարցը:

Ո՞ւ՞ն է Եջմանքնի Սինոդի իրաւանց սահմանը՝ յարկապէս դպրոցական հարցուն.

Այդ սահմանը գծւած է Պետ. Օրէնքի XII հաստ. I մասի (հրատ. 1896 թ.) յօդ. 1141-ով (յօդ. 938՝ հրատ. 1857 թ.), որը որոշում է Եջմիածնի Հայ-լուսաւորչական Սինոդի իրաւասութեան շրջանը՝ «ըստ կառավարչական, կարգադրական մասի—ու части распорядительной»: Այդ շրջանն է ⁷⁷⁾)

«1. Այս Սինոդին ստորագրւած բոլոր ատեանների և պաշտօնական անձանց գործողութիւնների հսկողութիւնը—наблюдение.—2. Սինոդին ստորագրուած... աւոնարքիաներէ (Թէմական Դպրանոց)... բարեկարգութեան վերատեսութիւնը—надзоръ.—4... աւոնարքիաներէ հիմնարկութեան գործի նախնական քընութիւնը—предварительное разсмотрение և ներքին Գործոց նախարարի ձեռքով Բարձրագուն թոլլտութիւն խնդրելը: Եջմիածնի Սինոդի կողմից այսպիսի՝ Կովկասին վերաբերեալ գործերի առաջարկը

77) Տես ևս՝ Ն. վ. Մելիք-Թանգեան՝ «Հայոց եկեղեցական իրաւունքը. Ա. Գիրք», Շուշի, 1903 թ., էջ 682—3: Պետ. Օրէնքի այս և յետագալ յօդւածների տեկստը տես ևս իմ՝ «Հայոց Թէմական Հոգևոր Դպրանոցների կանոնադրութեան նախագիծը», Մոսկա, 1902 թ., Յաւելւած VIII:

հասնում է բարձր կառավարութեանը Կովկասի Կառավարչապետի միջոցով.—8. Թոյլաւութիւն—разքնարկութիւն ազատակամ նւերներով հանդանակութիւն անելու յօդուտ ուրիշ թեմի... «Եմբարձութերի...» — 13. Ունենալ ճիշտ ցուցակ—ведenie върхныхъ списковъ Ուստои սահմաններում գտնуած հայոց բոլոր... «Եմբարձիաների...»

Աղավիսով՝ наблюдение—հակողութիւն, надзоръ —վերահսկողութիւն, предварительное разсмотрѣніе дѣлъ объ учрежденіи—հիմնարկութեան գործի նախնական քննութիւն и испрошеніе на сie разքնащенія—և Թոյլաւութիւն խնդրելը, разքнашеніе сбора добровольныхъ приношенній—Թոյլաւութիւն ազատակամ նւերների հանդանակութեան և ведenie върхныхъ списковъ — ունենալ ճիշտ ցուցակ», և այն միայն «Եմբարձիաների» (Թօնական Համար Դպրանոցների) նկատմամբ...

Ահա աղդքան սահմանափակ է Էջմիածնի Հայ-լուսաւորչական Սինոդի իրաւասութիւնը յատկապես գլուրցական հարցում, և, որ պլիսաւորն է, Սինոդի այդ իրաւասութիւնը պլատում է մեր «Եմբարձիաների» (Թօնական Հոգեւոր Դպրանոցներին) վերաբերեալ միայն և ելթ արդարագույն հարցերի շուրջը, ամենեաին չօշափելով նոյն սեմինարիաների ներքին կառչակերպութեան՝ կանոնադրութեան-ծրագրին վերաբերեալ հարցերը, որոնք ազգափոփ, համաձայն Պետ. Օրէնքի հարազատ տեկստի, միանդամայն դուրս են Էջմիածնի Սինոդի իրաւասութեան շրջագծից: Եկեղեցական-ծիտական դրայնոցների հարցն ամենելին չի շօշափւում Էջմիածնի Սինոդի իրաւասութեան «ըստ կառավարչական-կարգադ-

բական մասի» շրջանը գծող Պետական Օրէնքում
(XII հաստ., I մաս, հրատ. 1896 թ.—յօդ. 1141,
հրատ. 1857 թ.—յօդ. 938): Մինչդեռ 1884 թւի
փեարւարի 16-ի կանոնները և 1885 թւի պաշտօ-
նական տեղեկադիրը շօշափում էին մեր Եկեղեցական-
Ֆիւական դպրոցների հարցը և, որ շեշտելին է, սրանց
ներքին կազմակերպութեան (ծրադիր - կանոնադրու-
թիւն) գործը:

Ալլապիսով՝ Պետական Օրէնքի XI հատորի I մասի
1857 թւի հրատարակութեան յօդ. 938-ը (1896 թ.
հրատ.—յօդ. 1141) ամեննեին չի շօշափում մեր դպր-
րոցական գործի (և Թեմական Հոգեւոր Դպրանոցների-
սեմինարիանների, և Եկեղ.-ծխական դպրոցների) ներքին
կազմակերպութեան հարցը: Հետևապէս՝ Գէորգ Դ.
Կալթողիկոսի 1873 թւի կոնդակի-շեշտման դիմացը
սերել յօդ. 938-ն, ինչպէս անում է տեղեկադիրը, առն-
ւագն՝ պաշտօնական վրիպում էր: Սրան կից, Գէորգ
Դ.-ի շեշտումն ըստ ամենայնի հարազատ էր յօդ.
975-ի (1896 թ. հրատ.—յօդ. 1178, «Պոլոժենիկ»—
§ 66) բուն տեկստին, որն է՝

„Епархіальныя начальники Армяно-Григо-
ріанской Церкви обращаютъ также тщатель-
ное вниманіе на состояніе учебныхъ заведеній,
находящихся при монастыряхъ и церквяхъ какъ
вообще, такъ и въ особенности при обозрѣ-
ніи своихъ епархій. Содѣйствуя всѣми зави-
щими отъ нихъ средствами улучшенію и
распространенію сихъ училищъ, они преимущественно
пекутся о введеніи въ оныхъ пра-
вильного и удобнаго порядка обучения и о со-

храненіи добрыхъ нравовъ между учащими и учащимися — «*չալուսաւորչական Եկեղեցու թեմական առաջնորդները նոյնպէս լուրջ ուշադրութիւն են գարձնում վանքերին և եկեղեցիներին կից զատնւած կրթական հիմնարկութիւնների վրա՝ և ընդհանրապէս, և նամանաւանդ իրենց թեմերին այցելութեան ելած ժամանակ։ Իրենցից կախւած ամեն միշոցներով օգնելով այդ ուսումնարանների բարելաւման և տարածման գործին՝ նրանք առ առաւելն հոգս են տանում մացնել այդ ուսումնարաններում դասաւութեան կանոնաւոր և յարմար կարդ և պահպանել ուսուցիչների և աշակերտների մէջ բարի վարք ու բարք»։*

Պետական Օրէնքի այդ յօդւածից պարզէ, որ «*չալուսաւորչական Եկեղեցական - ծխական գպրոցները նախ՝ գոյութիւն ունեն այդ դաւանութեան եկեղեցիներին և վանքերին լից, և այն՝ թեմական առաջնորդների կամքից անկախ՝ իբր վանքերի և եկեղեցիների անհրաժեշտ մասնիկներ-աւարքեր, իսկ թեմական առաջնորդներին միայն իւրացրւած է՝ պարտաւորունիւն՝ «իրենցից կախւած ամեն միշոցներով օգնել այդ ուսումնարանների բարելաւման և տարածման գործին», որպէս և՝ «հոգս տանել մացնելու այդ ուսումնարաններում դասաւութեան կանոնաւոր և յարմար կարդ, և պահպանել ուսուցիչների և աշակերտների մէջ բարի վարք ու բարք»։ Որ, իրօք, Պետ. Օրէնքի արամագրութիւնն է՝ շեշտել թեմակալ առաջնորդների պարտաւորունիւնն իրականացումը, և ոչ՝ ասպարէղ բանալ նրանց կամքի պէս-ալէս արտայալութիւնների համար, ասել է՝ որ 1857 թւի հրատ. յօդ.*

975-ը (1896 թ. հրատ.—յօդ. 1178) գալիս էր կամեց-նելու թեմակալ առաջնորդների իրր, ըստ նոյն Պետ. Օրէնքի 1857 թւի հրատ. յօդ. 967 (հրատ. 1896 թ.—յօդ. 1170), Ավակապար ղեկավարների (полные начальники) իրաւասութիւնը—այդ նոյն իսկ բառացի շեշտւած է Պետական մի ուրիշ նորմայում: Խօսքս 1874 թւի յուլիսի 19-ին Բարձրագոյն հաստատւած կանոնների մասին է, որոնք նախապէս հաւանութիւն են գտել Մեծ Իշխան Կովկասեան Փոխարքայի կողմից և որոց § 1-ի հարազատ տեկստն է:

«§ 1. Համաձայն օրէնքների ժողովածւի XI հատորի I մասի 975-րդ յօդւածի (հրատ. 1857 թ.), հայլուսաւորչական հոգեւորականութեան պարագայուննենն է մնում հիմնել և կառավարել Եկեղեցական դպրոցներ, նոյնպէս և հոգալ մտցնելու դասաւութեան կանոնաւոր և յարմար եղանակ և պահպանել բարի վարք ուսուցիչների և աշակերտների մէջ»⁷⁸⁾:

Եւ Պետական Օրէնքի, որպէս և վերջնիս հաւասարագոր 1874 թւի յուլիսի 19-ի նորմայի այդ շեշտը

⁷⁸⁾ Տես իմ «1905 թի օգոստոսի 1-ի Ուկագը և Ժամանակաւոր կանոնները», էջ VI—VII: Տես ևս ստորև:—Ի դէպ: Ինչպէս յայտնի է, Պետ. Օրէնքը նախատեսել է թեմակալ առաջնորդների պատասխանաւութիւնը և՝ „предъ высшимъ правителствомъ и предъ своимъ духовнымъ начальствомъ—պետақанъ բарձրագոյնъ և իրենց նոգենոր իշխանութեան առաջъ“ (հրատ. 1896 թ.—յօդ. 1170, հրատ. 1857 թ.—յօդ. 967, 1836 թւի «Պոլութենիէ»—§ 58), որպիսին է, ըստ 1896 թ. հրատ.՝ յօդ. 1111, 1112, և 1117 (հրատ. 1857 թ.—յօդ. 907, 908, 914), ամենայն Հայոց Կեհափառ Կաթողիկոսը:

նշանակալից է: Ընդունելով եկեղեց.-ծխ. դպրոցների գոյութիւնն եկեղեցիներին և վանքերին հետ՝ Պետ. Օրէնքն ոչ ուսումնական կապում է այդ դպրոցների ականականութեան և գոյութեան հարցը վանդերի և եկեղեցիների գոյութեան հետ, և ոչ այս-այն պատահական, թող թէ պետութիւնից հաստատւած, պաշտօնեայ՝ թեմական առաջնորդի պատահական կամքի հետ, և ապա՝ կապում է նոյն դպրոցների գոյութեանը և ներդին կապմակերպութեանը հայ եկեղեցու հոգևորականութեան հետ՝ համաձայն այդ եկեղեցու «օրէնքների և պաշտօնական աստիճանաւորութեան—«законовъ и чиноположенія» (Պետ. Օր. XI հատ. I մաս, հրատ. 1896 թ.—յօդ. 1111, 1112, հրատ. 1857 թ.—յօդ. 907—8, 1836 թ. «Պոլաժէնիկ»—§ 3) և ամենայն հայոց Վեհափառ Պատրիարք-Կանոնների հետ, որին իւրացրւած է օգլխուոր վարչութիւնը Հայ-լուսաւորչական եկեղեցու, սրա հոգևորականութեան վերաբերեալ գերագոյն հսկողութիւնը և այդ գաւանութեան կանոնների և սովորութների նշգրիտ կատարումը» (ibid. յօդ. 1117,—914,—§ 10):

Թող էշմիածնի Սինոդն ենթարկւած մնայ «կառավարող Սենատին» (1857 թ.—յօդ. 903, 1896 թ.—յօդ. 1143), սակայն այդ չի նշանակում, որ Սինոդն նույնին կարող է ենթարկել Սենատին այն ինչ ենթարկւած չի իրեն Սինոդին, այլ—նաև՝ ենթարկւած է հայ եկեղեցու հոգևորականութեան (յօդ. 1111, 1112) և սրա գերագոյն հսկող Վեհափառ Հովհապետին (յօդ. 1117), սապա՝ յանձնաւած է նոյն եկեղեցու (յօդ. 1178) թեմական առաջնորդներին՝ բարեկաւելու և տարածելու համար (յօդ. 1178)...

Թող Եջմիածնի Սինողը «վերահսկի իրեն ենթարկւող բոլոր վարչութեանց և պաշտօնական անձանց գործունէութեան վերայ» (յօդ. 938—հրատ. 1857 թ., յօդ. 1141—հրատ. 1896 թ.), թող Սինողը «ըստ դատաստանականի» քննի և վճիռներ կայացնի չալոց թեմերի առաջնորդների գործողութիւնների նկատմամբ (յօդ. 939—հրատ. 1857 թ., յօդ. 1142—հրատ. 1896 թ.), սակայն այդ ամենն ամենևին պարտաւորական չեն ամենայն չալոց Վեհափառ Հովւապետի համար, որը վարում է Եկեղեցներն և վանելքն ինց գոյութիւն ունեցող գալրոցները՝ համաձայն Պետ. Օրէնքի XI հատ. I մասի, հրատ. 1896 թ.—յօդ. 1111, 1112, 1117, 1146, 1147, 1148 և 1178 (հրատ. 1857 թ.—յօդ. 907, 908, 914, 943, 944, 945 և 975, 1836 թ. «Պղոժենիկ»—§ § 3, 4, 10, 40, 41, 42 և 66), սաել է իրը հայաստանեաց Եկեղեցող Պետ...

Թող «975 յօդուաժով» (հրատ. 1857 թ.,—յօդ. 1178—հրատ. 1896 թ.) ուսումնարանական գործերը ուղիղ վերաբերում են Թեմական առաջնորդների գործունէութեան շրջանին», սակայն այդ չի նշանակում, որ նրանք են այդ դպրոցներն տէրը, և ոչ թէ հայ եկեղեցու Հովւապետ...

Այդ ամենին կից, մի վրիպում ևս կայ 1885 թվականական տեղեկագրում: Վերջինս զրում է՝ թեմակալ առաջնորդները «ըստ 975 յօդ. Սինողին ներկայացնում են թեմերի կառավարութեան միջոցին իւրեանց գործունէութեան հաշիւը, սորս հէտ և սունդարանների կառավարութեան հաշիւը»: Մինչդեռ մենք արդէն դիտանք Պետ. Օր. XI հատ. I մասի

(հրատ. 1857 թւի) յօդ. 975-ը (յօդ. 1178—հրատ. 1896 թ.) տեկստը, և այնպէս չկան ալդպիսի շեշտեր: Առաջնորդների «հաշիւ»-ների մասին խօսում են Պետ. Օրէնքի ուրիշ յօդւածները—հրատ. 1857 թ.—յօդ. 978 և 979, հրատ. 1896 թ.—յօդ. 1181 և 1182, և այն ոչ երբէք յատկապէս առւսումնարանների կառավարութեանը վերաբերեալ ճառականի շեշտերով, այլ՝ միայն ալսպիսի ընդհանուր գմբերով՝ «իրենց գործողութիւնների մանրամասն հաշիւ» (յօդ. 1181), «իրենց թեմերի գործերի մասին ընդհանուր հաշիւ» (յօդ. 1182)...

Ապա՝ միանդամայն թերի է յօդ. 1003-ին (հրատ. 1857 թ., յօդ. 1207—հրատ. 1896 թ.) պաշտօնական տեղեկագրով իւրացրած իմաստը ևս:

Ցիրաւի: Մէնք արդէն տեսանք, որ Թեմական Հոգեոր Դպրանոցների (սեմինարիաների) Ներքին կազմակերպութեան (կանոնադրութիւն-ձրագիր) վերաբերեալ հարցերը գուրս են Էջմիածնի Սինոդի իրաւասութիւնից, մինչդեռ 1885 թւի պաշտօնական տեղեկագիրը տքնում է մեր Թեմական Հոգեոր Դպրանոցները ևս ենթարկել Էջմիածնի Սինոդին նախօրօք զատելով սրանց ազգիս Վեհի իրաւասութիւնից և վերապահելով սրան՝ ազգիս Վեհին Թիայն Էջմիածնի Ճեմարանի «զլխաւոր կառավարութիւնը»: Եւ ալդպէս վարելիս՝ պաշտօնական տեղեկագիրը, կարծի հոմանիշներ յալտարարել—«զլխաւոր կառավարութիւն» և «կախուած են» իմաստները, թող թէ՛ ոչ առաջինով, ոչ էլ Երկրորդով գեռ չ' որոշւում թէ համ է պատկանում ալդ գպրոցական հիմնարկութիւնների Ներքին կազմակերպութեան (կանո-

նաղբութիւն - ծրագիր) բնորոշման իրաւասութիւնը...

Այդպիսով Պետ. Օր. XI հատ. I մասի 1857 թ.
հրատ. յօդ. 938 և 1003 (յօդ. 1141 և 1207—
հրատ. 1896 թ.) ամենեին չեն որոշում թէ ուժ է
պատկանում հայ գալրոցական գործի ներքին կազմա-
կերպութեան (կանոնագրութիւն-ծրագիր) բնորոշման
իրաւասութիւնը: Հետևապէս՝ մնում է որոնել այլ
աղբիւրներ: Եւ այսուղ մեզ մեծ ժառայութիւն ունի
ամենու 1885 թւի պաշտօնական տեղեկագրի շեշտը
թէ:

«Ինչ որ վերաբերում է եկեղեցական կանոններին,
որոց վերայ մատնացոյց է լինում հայոց հոգևորա-
կանութիւնը, կաթողիկոսի և Սինոդի հայոց ուսում-
նարանների կառավարութեան իրաւունքները որոշելու
ժամանակ, այդ կանոնները նոյն իսկ հայ հոգևորակա-
նութեան խօսքերով հաստատուած են ուսուց օ-
րէնսդրութեամբ: 11 Մարտի 1836 թ. Բարձրագոյն
հրամանից յետոյ, որ որոշում է Ռուսաստանում հայ-
լուսաւորչական եկեղեցւոյ օրէնսդրութիւնը, այս ե-
կեղեցւոյ համար ոչ մի նոր եկեղեցական կանոն, որ
անհամածայն լիներ ուսուց կացներութեան օրինաց,
ախներև է որ հրատարակուած չէր կարող լինել:»

Հարկաւ, 1885 թւի պաշտօնական տեղեկագրի այդ
շեշտն ակած պիսակ լինի: Եւ այդ այդպիս լինելով՝
մեր գալրոցական գործի ներքին կազմակերպութեան
բնորոշման իրաւասութեան վերաբերեալ թերին գա-
լիս է լրացնելու 1880 թ. յունիսի 27-ի Բարձրագոյն
հրամանը և սրան կցած ներքին Գործոց նախարարի
ստորագրութիւնը՝

ВЫСОЧАЙШЕЕ ПО-
ВѢЛѢНИЕ

Государь Императоръ, по всеподданнѣйшему докладу Министра Внутреннихъ Дѣлъ ходатайства Патріарха католикоса всѣхъ армянъ о преобразованіи существующаго въ гор. Нахичевани на Дону армяно-григоріанскаго духовнаго училища въ семинарію, въ 27-й день Іюня 1880 года, Высочайше на сіе соизволилъ, представивъ Министру Внутреннихъ Дѣлъ, снабдить утвержденіемъ проектированныя Патріархомъ, по соглашенію съ Министерствомъ, основныя правила епархіальной Нахичевано-Бессарабской армяно-григоріанской семинаріи.

На подлинномъ напи-

« ԲԱՐՁՐՈԳՈՅՑՆ ՀՐԱ-
ՄԱՆ

Թագավոր Կայուրը՝ հա-
մաձայն Ներքին Գործոց
Նախարարի ամենահպա-
տակ դեկուցման ամենայն
չափս Պատրիարք-Կառլողի-
կոսի Թջնորդութեան Տառին՝
Նախիչևան Դօնի վրա քա-
ղաքում գոյութիւն ունե-
ցող հոգեոր գպրոցը սեմի-
նարիայի վերածելու նր-
կատամբ, 27-ին Յունիսի
1880 թւի, Բայլըաֆոյնս
տւեց իր հաճութիւնը, վե-
րապահելով Ներքին Գոր-
ծոց Նախարարին Հաւ-
թայնել Պատրիարքի՝ Նա-
խարարութեան հետ հա-
մաձայն Նախարարի Նոր-
Նախիչևանի և Բեսսարա-
րիոյ հայ-լուսաւորչական
թեմական սեմինարիայի
(Հոգեոր Դպրանոցի) հիմ-
նական կանոնները:

Հնդ իսկականին գրւած

сано: „На основаніи ст. 1004 ч. 1. т. XI. Св. Зак. изд. 1857 г. и съ Высочайшаго соизволенія, послѣдовавшаго въ 27-й день Іюня 1880 г., утверждается. С.-Петербургъ, 27 Іюня 1880 г.“

Подпись: Министръ Внутреннихъ Дѣлъ,
Статсь-Секретарь
Л. Маковъ. ⁷⁹⁾

Է աՅօդ. 1004 մ. 1 հատ.
XI Օր. Ժող. Կրատ.
1857 թ. հիման վրա և
27-ին Յունիսի 1880
թւի Բարյյագոյն հանու-
թեածր հասաւատում է:
Ս.-Պետերբուրգ, 27-ին
Յունիսի 1880 թ.
Մարտագրեց՝ Ներքին Գոր-
ծոց Նախարար,
Ստատս-Անկուտար
լ. Մակով:

1880 թւի յունիսի 27-ի այդ պետական նորմա-
յից պարզ է, որ ամենայն հայոց Վեհաժառ Կալո-
ղին է վերապահնամք իրաւունք հոգեոր (եկեղ-
ծիսկան) գպրացը Թեմական Հոգեոր Դպրանոցի (սե-
մինարիս) վերածելուն վերաբերեալ միջնորդութիւնը,
որ ամենայն հայոց Վեհաժառ Կալողին է վեր-
պահնամք Թեմական Հոգեոր Դպրանոցների հիմնական
կանոնների նախագիծը կազմելու և Բարձրագոյն հաս-
տատութեան առաջարկելու իրաւասութիւնը:

Ասպա, եթէ դիմելու լինենք Նոր-Նախիչևանի և
Բեսսարաբիոյ թեմի Հոգեոր Դպրանոցի 1880 թւի
յունիսի 27-ին Բարձրագոյն հասաւատամք աչիմնական
Կանոնը՝ ի § 3-ին, կտեսնենք, որ այդ §-ի տեկստով
ցըւում է 1885 թւի պաշտօնական աեղեկագրի՝ Պետ.
Օր. XI հատ. I մասի (Կրատ. 1857 թ.) յօդ. 1003-ին

79) Տես «Կանոնադրութիւն Թեմական Հոգեոր Դպրանոցի
վիճակին Հայոց Նոր-Նախիչևանի և Բեսսարաբիոյ», Նոր-Նա-
խիչևան, 1882 թ., էջ 1:

(յօդ. 1207 — հրատ. 1896թ.) իւրացրած իմաստը
և:

Յիրաւի՛. «Հիմնական Կանոնք»-ի § 3-ի տեկս-
տըն է:

«Семинария, состоя подъ главнымъ началь-
ствомъ Святейшаго Патриарха католикоса, на-
ходится въ ближайшемъ въдьнии начальника Нах-
ичевано-Бессарабской армяно-григорианской
епархіи, на котораго возлагается отвѣтствен-
ность за ея благосостояніе.—Դպրանոցն լինելով
ընդ գլւխութեամբ վեհաժառ Պատրիարք
Կանոնական աշխայն հայոց, գտանի և մշյառը աւ-
զու-նեան Սուաջնորդի վիճակին հայոց Նոր-Նախիչևանի
և Բեսսարաբիոյ, յորոյ վերայ եղեալ լինի պատաս-
խանատութիւն վասն նորին բարեկարգութեան՝⁸⁰⁾:

Ասել է Նոր-Նախիչևանի և Բեսսարաբիոյ թեմի
հոգեոր Դպրանոցի՝ Բարձրագուն հաստատած «Հիմ-
նական Կանոնք»-ի § 3-ը վերապահում է ազգիս Վե-
հեան Պետ. Օրէնքի XI հատ. I մասի (հրատ. 1857թ.)
յօդ. 1003-ի (յօդ. 1207—հրատ. 1896թ.) «глав-
ное начальство—պիսաւոր իշխանութիւնը» և, միա-
ժամանակ, պարզում է յօդ. 1003-ի «зависятъ» ա-
նորոշ տերմինը՝ տալով սրա իսկական նշանակութիւնը
—«въ ближайшемъ въдьнии—ի մերժաւոր տես-
չութեան»:

Ապա, եթէ անցնելու լինենք նոյն «Հիմնական Կա-
նոնք»-ի ուրիշ §§-ներին, կտեսնենք, որ ամեն ինչ

80) Տես իbid., էջ 2, 1—3:—«Հիմնական Կանոնք»-ի այդ և
միւս մի երկու § ները տես ևս վերը՝ էջ 48—49:

ամօրինւում է առ Հիս Վեհի հասպատառութեամբ, իսկ Եշ-
միածնի Սինոգը նոյն իսկ յիշւած էլ չի այդ «Հիմ-
նական Կանոնը»-ում...

Այդպիսով՝ 1880 թւի յունիսի 27-ի Բարձրագոյն
հրամանը մի անգամ ևս բնգգծեց ամենայն չափոց Վե-
հափառ Հայրապետի Էջմաննել Սննդից միանդամայն
անհամ իրաւասութիւնը դպրոցական գործի ներդին
կաղմակերպութեան հարցում, և այն՝ ամենայն հա-
րազատութեամբ Պետ. Օր. XI հատ. I մասի վերո-
յիշեալ յօդւածներին (հրատ. 1857 թ.—907, 908,
914, 975, հրատ. 1896 թ.—յօդ. 1111, 1112,
1117, 1178, 1836 թ. «Պոլոժենիկ»—§§ 3, 4, 10,
66) և ի լրումն 1874 թւի յուլիսի 19-ի կանոնների
սրանց § 3-ի:

ի գէպ.

1885 թւի պաշտօնական տեղեկադիրը—«11 Մար-
տի 1836 թ. Բարձրագոյն հրամանից յետոյ... այս ե-
կեղեցւոյ համար ոչ մի նոր Եկեղեցական կանոն, որ
անհամածայն լիներ ուուսաց կամերութեան օրինաց,
ակներև է որ հրատարակուած չէր կարող լինել»—
շեշտելիս՝ հարկաւ, անտեսել է Պետական միջանիւսալ
նորման, այն է 1874 թւի յուլիսի 19-ի Բարձրա-
գոյն հաստատուած կանոնները, որոնք նախապէս հա-
ւանութիւն են գտել Մէծ Իշխան Կովկասեան Փո-
խարքապի կողմից: Խնչպէս յատնի է, համածայն այդ
կանոնների⁸¹⁾, Հայոց Թէմական Հոգեւոր Դուռանոց-
ները զրւած են Հայ-Լուսաւորչական հոգեւոր իշխա-

⁸¹⁾ 1874 թւի յուլիսի 19-ի կանոնների տեկստը տես ստորև
գլ. զ:

նութեան, ասել է՝ սրա Վեհափառ Հովկապետի բա-
ցարական վարչութեան-իշխանութեան տակ (§ 3),
իսկ եկեղեցական-ծխական դպրոցները յանձնւած են
նոյն հոգեոր իշխանութեան (§ 1), որոց դէմ չի եղել այն ժամա-
նակւայ ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ՝ Գէ-
որդ Դ. թ.՝⁸²⁾...

Այժմ անցնենք առաջին հարցին՝

Ի՞նչ առել է «Աստիճանի հագետոր գործեր» առաջդր:

Պետական Օրէնքը (XI հատ. I մաս., հրատ. 1896
թ.՝ յօդ 1132, «Պոլոժենիէ»—§ 25, հրատ. 1857
թ.—յօդ. 929) աւել է այդ «զուտ հոգեոր գործեր»-ի
ցանկը—«Ճեղական կայութեան կատարութեան պահպանունքներին՝
ուղարկած այդ գաղտնական աշխատավորութեան գաղտնական,
կայութեան պահպանունքներին՝ այլ նման տեսակ հարցերին»:
Սակայն, հարկաւ, այդ ցանկը թերի է և, յամենայն
դէպս, պարզաբանութիւնների կարօտ:

Յիշաւի: Իրօք, հագետոր պէտի դատուեն այն առն
հարցերը գործերը, որոնք անխոչելի եակցական էականուն
կատարեած են ենթականութեան կայութեան հայութեան կատարեած
գործերը, որոնք գործեան հայութեան կայութեան կատարեած
մասնաւորի, մեր դատույցական գործը պիտի ճանաչւի՝
իրը հագետոր գործ, նախ՝ որովհետեւ մեր դպրոցներն
ի սկզբանէ անտի, որպէս և ցայսօր, գոյութիւն ու-

⁸²⁾ Տես ibid.

նեն, ըստ վկայութեան Պետական Օրէնքի, «при церквахъ и монастыряхъ—Եկեղեցիներին և վանքերին կը» (1836 թ. 11 Մարտի «Положение»—§ 66, XI համ. I մաս, հրատ. 1857 թ. յօդ. 975, հրատ. 1896 թ.—յօդ. 1178⁸³⁾:

Ապա՝ ընդգծելի է Պետական Օրէնքի հետևեալ հարազատ տեկստը—

„Во всіхъ церквахъ и монастыряхъ той епархіи, къ коей принадлежитъ семинарія, производится обыкновеннымъ порядкомъ сборъ въ пользу оной и собранныя деньги отсылаются каждые три мѣсяца въ надлежащую Консисторію, для доставленія семинаріи. Сверхъ того монастыри, ревнуя къ пользѣ Армяно-Григоріанской Церкви, приносятъ ежегодно изъ своихъ доходовъ особыя суммы на содержаніе ихъ епархіальной семинаріи.—Այն թեմի բոլոր Եկեղեցներում և վանքերում, որին պատկանում է սեմինարիան (չողեւոր Թեմական Դպրանոցը), յօդուտ վերջնիս, ընդունւած կարգով, կատարում է ժողովարարութիւն և ժողոված գումարներն ուղարկում են ամեն երեք ամիս համապատասխան Կոնսիստորիային՝ սեմինարիային յանձնելու համար։ Բայցի այդ, վան-

⁸³⁾ Ի դէպ.—Նոյնը վկայում է պաշտօնական նեղինակ՝ Ի. Շոպենը և (Տես Ի. Շոպենъ: „Исторический Памятникъ состоянія Армянской-области въ эпоху ея присоединенія къ Россійской-Имперіи“, Санктпетербургъ, 1852 г., էջ 903: „Во время Персидского правительства училища существовали при Армянскихъ церквахъ“...).

ՔԵՐԱԾ՝ ՀԱՇՎԱԼՈՒՆ՝ ՀԱՅ-ԼՍ-ԱՎԱՐԱՐՎԱՅԻ ԵԽԵՂԵՄԿ- ՀԱԲԸ⁸⁴⁾՝
յատկացնում են ամեն տարի իրենց եկամտից յատուկ
գումարներ՝ թեմական սեմինարիաների պահպանու-
թեան համար» («Պոլոժենիէ») — § 115, XI հատ. I
մաս, հրատ. 1857 թ.՝ յօդ. 1005, հրատ. 1896 թ.
— յօդ. 1200⁸⁵⁾:

Թերևս շեշտելի է այն ևս, որ, ինչպէս մասամբ
տեսանք վերը, Պետ. Օրէնքը տեղ-տեղ (XI հատ. I
մաս, հրատ. 1896 թ. — յօդ. 1141, 8, 1188, 7,
1209, 1210, հրատ. 1857 թ. — յօդ. 938, 985,
1005, 1006) առառառելն կապում է սեմինարիաների
դրամականը վանքերի, եկեղեցիների և եկեղեցական-
ծխական գպրոցների հետ⁸⁶⁾:

Ասել է՝ մեր գպրոցները — եկեղ.-ծխական և թե-
մական, ըստ Պետ. Օրէնքի հարազատ աեկստի, կապ-
ւած են մեր վանքերի և եկեղեցիների հետ՝ գպրոց-

⁸⁴⁾ «Նախանձախնդիր լինելով հայ եկեղեցուն» — տես Ն. վ. Մելիք-Թանգեսան, իբիд., էջ 702: — Հարկան, Պետ. Օրէնքի Xl հատ. I մասի (հրատ. 1896 թ.) յօդ. 1209-ի տեկստի տեսա-
կտից ուշադրաւ է նոյն Օրէնքի յօդ. 1206-ի (1857 թ. — յօդ.
1002) տեկստը ևս՝ «Հայ-լուսաւորչական պատանիներին աստ-
ւածաբանական գիտութիւնների մէջ կրթելու համար (для
образованія въ наукахъ богословскихъ) հաստատած են,
Էջմիածնի վանքին կից Հոգևոր Ճեմարանը — Ակադեմիան և ա-
մեն մի ուս Հայ-լուսաւորչական թեմում նոգենոր սեմինարիաներ
(Թեմական Հոգենոր Դպրանոցներ):

⁸⁵⁾ Տես ևս իմ՝ «1905 թի օգոստոսի 1-ի Ուկաղը և Ժա-
մանակաւոր կանոնները», էջ 29, ևս — սորու՝ Գլ. Հ:

⁸⁶⁾ Տես իմ՝ իբիд., էջ 30—31, ևս իմ՝ «Դպրոցների նիւ-
թական-դրամական ապահովութեան հարցը. I. Հայոց թեմական
Հոգենոր Դպրանոցների եկամտի աղբիւները», էջ 20—21, ևս՝
Բարգէն վարդապետ՝ «Ա. Էջմիածնի կալուածներն ու նրանց բա-

ները գոյութիւն ունեն և հիմնւում են վանքերին և
եկեղեցիներին չեց, պահւում են վանքերի և եկեղե-
ցիների դրամական նախառնելքով՝ վերջապէս՝ դպրոց-
ներն ունին լրացնելու հայ-Լուսաւորչական Եկեղեցու-
շահը, նրանք նախանձախնդիր են հայ Եկեղեցուն»:
Եւ,
այդ ալդպէս լինելով, Եթէ «զուտ հոգեոր գործեր»
խօսքերն ունին որևէ իմաստ, հարկած, այդ իմաստի
մի բաղադրիչ մասնիկն է մեր դպրոցական գործը ևս՝
իր ներքին կազմակերպութեան նկատմամբ:

Ճշաւ է, Պետ. Օր. XI հատ. I մասի (հրատ. 1857
թ.) յօդ. 929-ում (հրատ. 1896 թ.—յօդ. 1132) ի
թիւս «զուտ հոգեոր գործեր»-ի յիշատակւած են միայն
այնպիսիք, «որոնք վերաբերում են հաւատոյ ուսմանը,
աստուածպաշտութեան կատարմանը և այլն»⁸⁷⁾: Սա-
կայն Ելակետ վերցնել մն մի այդ ժամանք և մայն
որ այն «բացառութեան»-ը թէ՝
«Հայոց գպրոցների մասին որևէ կարգադրութիւն ա-
նելու իրաւունքը պատահանում է միայն կաթողիկո-
սին և թէ այդ իրաւունքը սասանում է իր զօրու-
թիւնը Հայոց եկեղեցւոյ կանոններից, որոնք սրբա-
գործուած են յետակայ ժամանակներում Խուսաց օ-
րէնսդրութիւններով», —ասում եմ պնդել, իբր թէ
այդ «բացատրութիւն»-ը «անկանոն» է, ըստ իս, կը-
նշանակի՞ աւելի՞ քան «անկանոն» կերպով բացատրել
Օրէնքի տեկստը: Յիրաւի՛: Նախ նշանակալից է Օ-
րէնքի «և այլն—и тому подобныя—և նման տե-

բեկարգութեան ծրագիրը», Վաղարշապատ, 1908 թ.:

87) Տես 1885 թի պաշտօնական տեղեկագիրը—վերը՝ էջ 91:
Օրէնքի հարազատ տեխնոլոգիական գարդում անք՝ «и тому подобныя
—և նման տեսակի»:

սակի» շեշտը: Ապա՝ որ իրաւամբ 1885 թւի պաշտօնական տեղեկագիրն իւրացնում է Էջմիածնի Սինոդին մի գործողութիւն-ֆունկցիա, որը նախադեսած չէ նոյն Սինոդի՝ և վարչական-կարգադրական (Պետ. Օր. XI հատ. I մաս, հրատ. 1857 թ.—յօդ. 938, հրատ. 1896 թ.—յօդ. 1141), և գատական-դատաստանական (հրատ. 1857 թ.—յօդ. 939, հրատ. 1896 թ.—յօդ. 1142) իրաւասութիւնը շրջագծող պետական նորմաներում: Սրան կից՝ որ իրաւամբ և տրամաբանական կանոններով նոյն պաշտօնական տեղեկագիրը տքնում է կարճել Հայ-Լուսաւորչական եկեղեցու հոգևորականութեան և որա Վեհափառ Հովապետի Պետական Օրենքով (1836 թ. 11 Մարտի «Պոլոженի»—§ § 3, 4, 10, 25, 40, 41, 42, հրատ. 1196 թ.—յօդ. 1111, 1112, 1117, 1132, 1146, 1147, 1148, 1178, հրատ. 1857 թ.—յօդ. 907, 908, 914, 929, 943, 944, 945, 975), 1874 թւի յուլիսի 19-ի կանոններով և 1880 թւի յունիսի 27-ի Բարձրագոյն հրամանով ընդգծւած իրաւասութիւնը: Ինչո՞ւ է, վերջապէս, անտես առնելում պաշտօնական պրակտիկան, այն է որ՝ մեր դպր(ան)ոցներին և նոյն իսկ պետական գալրոցներում աւանդելիք հայոց լեզուին և կրօնին վերաբերեալ գրագրութիւնները միշտ եղել են կառավարութեան և ապահով Վեհափառ միջեւ, որ այդ գրագրութիւնները շարունակ կանգ են առել Վեհի մահով⁸⁸⁾...

Ոչ: «Զուտ հոգևոր գործեր»-ի շաբքից, հետեւապէս՝ մի կողմից—ամենայն Հայոց Վեհափառ Հովա-

88) Տես վերը՝ էջ 83, 88:

պետի ՀՅԱՊԾԻ իրաւասութեան շրջագծից դարձաւ յայտարարել Հայ-Լուսաւորչական եկեղեցու հօտի կրթական գործը, մի գործ, որը գոյութիւն ունի Հայ-Լուսաւորչական վանքերին և եկեղեցիներին էլլց և ունի լրացնելու նոյն եկեղեցու լահը, Կախանչախնդիր է նոյն եկեղեցուն և նպաստում է Վլթվնից, և միւս կողմից—միաժամանակ, միանգամայն անհասկանալի ճանապարհներով իւրացնել գոյն այդ կրթական գործն Էջմիածնի Սինոդին—ահա այզօրինակ գործողութիւն-«բացատրութիւն»-ն է, որ պիտի դատի «անկանոն», ապօրինի...

Ո՞չ Անհին Նէր «հանգուցեալ Գէորգ Խ կաթողիկոսի 1873 թ. հրատարակած կոնդակը», անհին Նէր Էջմիածնի Սինոդի անդամների և թեմակալ առաջնորդների 1884 թւի փետրտարի 20-ի հաւաքական «Արծանագրութիւնը» և Սինոդի նոյն թւի խնդիրը և միջնորդութիւնը, անհին Նէր Կովկասի Փոխարքայի 1907—8 թւին սահմանած Դպրոցական Յանձնաժողովից ազգիս հանգուցեալ Մկրտիչ Ա. Կաթողիկոսի ներկայացուցիչների հեռանալը: Այդ ամեն անգամները յարգւած են ամենայն Հայոց ՎեհավիտՊատրիարք - Կաթողիկոսի «նւիրական իրաւասութիւնը»-ը և 1836 թւի մարտի 11-ից ի վեր գոյութիւն ունեցող Պետական նորմաները: Մէջայն այդուն...

Ե.

1885 թւի սպաշտօնական տեղեկագիրը շեշտելի իմն զգուշութեամբ անտեսում է Պետ. Օրէնքի XI

հաստ. I մասի (հրատ. 1896թ.) յօդ. 1208-ը (1857թ. հրատ.—յօդ. 1004), որը, per se՝ ինքնին վերցրած, ոչ պակաս շահեկան կարող էր դատւել տեղեկադրի համար՝ վերջնիս նոյն Պետ. Օրէնքի յօդ. 1207-ի նկատմամբ (1857թ.—յօդ. 1003) իւրացրած զիրքի-ուղղութեան տեսակէտից։ Ահա այդ յօդւածի տեկստը.

«1208. Курсъ ученія и весь внутренній порядокъ въ Армяно-Григоріанскихъ духовныхъ семинаріяхъ опредѣляются особыми правилами, составленными духовными начальствами сихъ семинарій, подъ надзоромъ и руководствомъ Архіепископовъ, разсмотрѣнными Эчміадзинскимъ Синодомъ и утвержденными высшимъ правительствомъ.— Հայ-Լուսաւորչական հոգևոր սեմինարիաների (Հ. Թ. Հ. Դպրանոցների) սահման ընդուցուր և առն ներդին կարգը-կազմակերպութիւնը որոշում են առանձին կանոններով, որ կազմում են այս սեմինարիաների հոգևոր իշխանութիւններից՝ հակողութեամբ և առաջնորդութեամբ Արքեպիսկոպոսների, գննուում են Էջմիածնի Սինոդում և հաստատուում են պետական Բարձրագոյն իշխանութիւնից»...

Այդպիսով, ըստ երեսովին, յօդ. 1208-ով մեր Թեմական հոգևոր Դպրանոցների ներդին կազմակերպութեան վերաբերեալ առն հարցերի բնորոշումն իւրացրած է, ի միջի այլոց, ս. Էջմիածնի Սինոդին։ Սակայն՝ իրօք այդպէս չէ, և ահա ինչու ուշագրաւ է 1885թւի պաշտօնական տեղեկադրի վերը շեշտածս զգուշութիւնը։

Յիրաւի։ Հայոց Թեմական հոգևոր Դպրանոցների ներդին կազմակերպութեան վերաբերեալ առն հարցերը

չեն կարող բնորոշւել-որոշւել ո. Էջմիածնի Սինոդից,
որովհետեւ—

ա) Ս. Էջմիածնի Սինոդը Ջայն պնդում է (раз-
смотръеъныи) Հայ-Լուսաւորչական հոգևոր սեմի-
նարիաների ուսման ընթացքին և ամեն ներքին կար-
գին վերաբերեալ՝ նոյն սեմինարիաների հոգևոր իշխա-
նութիւններից՝ հակողութեամբ և առաջնորդութեամբ
արքեպիսկոպոսների՝ կաղմածը:—Ս. Էջմիածնի Սինոդը
պիտի ունենայ այդ իրաւունքը, որովհետեւ նա—ս.
Էջմիածնի Սինոդը—կապւած է Տ. Թ. Հ. Դարրանոց-
ների հետ որոշ օրինական կապերով՝ Պետ. Օրէնքի
XII հատ. I մասի (Դրաստ. 1896 թ.) յօդ. 1141 -ով
(1857 թ.—յօդ. 938), ասել է՝ ս. Էջմիածնի Սինոդը
պիտի իրազեկ լինի Տ. Թ. Հ. Դարրանոցների դրամականի
նկատմամբ⁸⁹⁾:

89) Հարկաւ, միայն և նթ այդ տեսակէտից պիտի բացատրել,
որ, զորոր, Երևանի Հայոց Թօնմական Հոգևոր Դապրանոցի 1865
թւի յունարի 31-ի Կանոնադրութեան («Կանոնադրութիւն յաղագս
կառավարութեան ազգային Հոգևոր Դապրոցի Հայոց Երևանայ»)
տակ՝ «Հաստատեմք վշտալի Մատմէս» Կաթողիկոս ամենայն
Հայոց մակագրութեան կից՝ գտնում ենք Սինոդի անդամների և
ատենադպիրի ստորագրութիւնները ևս: Անշուշտ, ալսուել ամե-
նայն Հայոց Կաթողիկոսը՝ իբր այդպիսին՝ հաստատել է ս.
Էջմիածնի Սինոդի զննած «Կանոնադրութիւն»-ը (Տես «Յիս-
նամեակ Հայոց Հոգևոր Թօնմական Դապրանոցի Երևանայ», Տփխիս,
1888 թ., էջ 318):

Դիոյն այդ տեսակէտից, ըստ իս, պիտի մօտենալ «Կանոնադ-
րութիւն Ներսիսեան ազգային Հոգևոր Դապրոցին Տփխիսոյ»
հիւսւածքով ս. Էջմիածնի Սինոդին հւրացրւած դերին ևս (Ճնո-
քիս տակ ունեմ այդ «Կանոնադրութեան» երկրորդ տպագրու-
թիւնը՝ 1877 թ., Տփխիս): Ուշագրաւ է որ այդ «Կանոնադրու-

թ) Նոյն Պետ. Օրէնքն իր յօդ. 1146 և 1147-ով (1857 թ.—յօդ. 943 և 944) նախատեսել է ամենայն հայոց Վեհափառ Կաթողիկոսի Աւագըն-Ռինը (քեշիտելինի գոլոս) Էջմիածնի հայ-Լուսաւորչական Սինոդում՝ իր կոլեգիալ իրաւունքներով (на правѣ коллегії) գործող պաշտօնական վայրում դրբելիք «բոլոր զուտ հոգեւոր գործերի նկատմամբ», որպիսին է, համաձայն վերոպրեալի, չ. թ. չ. Դպրանոցների ներդին կազմակերպութեան-կարգին անեն նև վերաբերեալը, —մի լիազօրութիւն, որը չի ժիստում ազգիս Վեհին նոյն իսկ այն գէպքում, երբ նա Սինոդում ներկայ չի լինում (не присутствуетъ): Վերջին գէպքում ազգիս Վեհը՝ «разсмотрѣвъ заключеніе Синода въ представляемыхъ ему журналахъ, даетъ по нимъ свои резолюціи — զննելով-հասու լինելով Սինոդի Եղբակացութիւններին, որոնք ներկայացնուում են իրեն օրագիրներով, տալիս է նրանց մասին իր վճիր» (յօդ. 1147):

գ) Պետ. Օրէնքի XI հաստ. I մասի (Գրաստ. 1896 թ.) յօդ. 1208-ի (1857 թ.—յօդ. 1004) հարազատ տեկստով գեռ չի որոշուում թէ ու է չ. թ. չ. Դպրանոցների ներդին կազմակերպութեան (Ճրագիր, կա-

Թեսան» յօդ. 1-ով՝ և ազգիս Վեհը, և' ս. Էջմիածնի Սինոդը միաժամանակ դրատուում են միւնոյն յատկանիշներով —

«Ծալրագոյն Պատրիարք Կաթողիկոսն ամենայն Հայոց և Սինոդն Սրբոյ Էջմիածնի իրեւ աւանդապահ Հայոց Եկեղեցւոյ, դիտող բարեբարդյութեան և հոգատար իսկական հոգեւոր լուսաւորութեան իրում ժողովրդեան» (Տես «Կանոնադրումիւն»՝ էջ. 3:—Համեմատիր 1885 թի պաշտօնական տեղեկագրի շեշտը վերը, էջ 93):

նոնադրութիւն) վերաբերեալ՝ ս. Էջմիածնի Սինոդում դննւած-քննւած նախազերը պետական „высшее правительство“ -ին ի հաստատութիւն ներկայացնողը:

Ինչ և իցէ:

Յամենայն գէպս, պարզէ, որ Պետ. Օր. XI հատ. I մասի (հրատ. 1896 թ.) յօդ. 1208-ը (1857 թ.—յօդ. 1004, «Պողոմենի»—§ 114), վերցրած ինքնին-ը-ը սե, ըստ երեսութիւն, թելազրում է, թերեւս շնորհիւ իր անէրի խմբազրութեան⁹⁰⁾), այլ բան, քան նոյն Պետ. Օրէնքի այլ և այլ յօդւածների հանդիպադրութեան (сопоставленије) գէպրում: Եւ, հարկաւ, ընդունելին է միայն և ելք Աւշին տեսակի թելազրութիւնը:

Եւ այդպէս պնդելիս՝ ես չե՞մ տարւում ինչ-ինչ, թերեւս մեր ազգային շահերի տեսակէտից ցանկալի ենթագրութիւններով, ոչ երբէք: Ենթագրութիւնները ոչինչ են ազգօրինակ հարցում: Այս անգամ ևս ինձ ելակէտ և ուղեկից ունեմ Պետական՝ ցայտար իսկ այլով նորհանեցից մէկը:

Պարզէմ:

Պետական Օրէնքի XI հատ. I մասի 1896 թ-ի հրա-

⁹⁰⁾ Այսպէս, յօդ. 1208-ը խօսում է «սեմինարիաների» ինչ-որ «հոգևոր իշխանութիւնների» մասին, որոնք «որոշում են» այդ սեմինարիաների «առանձին կանոնները»՝ «հսկողութեամբ և առաջնորդութեամբ արքապիսկոպոսների», մինչդեռ չի պարզում թէ ով է (են) այդ «հոգևոր իշխանութիւններ»-ը: Նշմարւում է միայն այդ յօդւածի տրամադրութիւնը՝ ստորադրել (!) այդ «հոգևոր իշխանութիւններ»-ը թեմակալ առաջնորդներին (=արքապիսկոպոսներին)...

Դաստիարակութեան յօդ՝ 1208-ին կցւած են վերջնիս աղբիւրները, որպէս և այդ յօդւածի հիման վրա եղած այլ և այլ կարգադրութիւնները։ Այդտեղ կարգում ենք՝ „1836 Մարտ. 11 (8970) ոլ., § 114; 1845 յնվ. 30 (18679); 1880 յօն 27 (61149) Վաշ. ոլ.՝⁹¹⁾: Իմ խօսքը վերջին բնդգծածս՝ „1880 յօն. 27 Վաշ. ոլ.-ի մասին է:

Մենք արդէն գիտենք այդ՝ 1880 թւի յունիսի 27-ի Բարձրագոյն հրամանը⁹²⁾: Դրանով վաւերացրւած են Նոր-Նախշեանի և Բեսսարաբիոյ թեմի Հայոց Հոգեոր Դպրանոցի հիմնարկութիւնը (գոյութիւն առնելը) և գոյն այդ Դպրանոցի «Հիմնական կանոնք»-ը՝ ըստ «Եղջուրդութեան ամենայն Հայոց Պատրիարք-Կանոնի իշտակի»։ Ես արդէն վերը, ի՞ր տեղում⁹³⁾, տւի այն ժամանակւայ ներքին Գործոց Նախարար՝ ստատուելուատ լ. Մահովի՝ այդ առթիւ ստորագրութեան կցած առղերը—

«Ընդ իսկականի գրւած է՝ աՅօդ. 1004 Տ. 1 հայո. XI Օր. Ժող. հրամա. 1857 Ն. հիման վըս և 27-ին Յունիսի 1880 Ն-ի Բարձրագոյն համար-Եվանք, հասպատառութեան է»։

Այդ առղերով պարզւած է—նախ այն, որ, ինչպէս բնդգծել եմ վերը, ամենայն Հայոց Վեհափառ Կոթողիկոսին պատկանում է ս. Էջմիածնի Սինոդից Նախարարացայն անկախ իշտականութեան մեր դպրոցական գործի ներդին կաղմակերպութեան հարցում,—ապա այն, որ՝

⁹¹⁾ Տես, ի միջի այլոց, իմ՝ «Հայոց Թեմական Հոգեոր Դպրանոցների կանոնադրութեան նախագիծը», էջ 163:

⁹²⁾ Տես վերը՝ Գլ. Բ.:

⁹³⁾ Տես ibid., էջ 28:

կամ անկու է յօդ. 1208-ի խմբագրութիւնը, կամ
Աւելի: Վերջին դէպում յօդ. 1208-ի վերջին կտորը
պիտի սրբագրւի այսպէս՝

«... и по предварительному одобрению и хода-
тейству Патриарха-Катомикоса, утвержденны-
ми высшимъ правительствомъ—... և, յամազա-
գոյն համառա-նեամբ և միջնորդ-նեամբ Պատրիարք-
կայուղինուի, հաստատում են պետական Բարձրագոյն
իշխանութիւնից»:

Պնդել համառակիլ—կնշանակի՝ յամենայն դէպս, կաս-
կածի ենթարկել 1885 թւի պաշտօնական տեղեկագ-
րի, մեղ արդէն ծանօթ, այն տողերը, ուր կարդում
ենք՝

«11 Մարտի 1836 թ. Բարձրագոյն հրամանից յեղոյ,
որ որոշում է Ռուսաստանում՝ Հայ-լուսաւորչական
եկեղեցւոյ օրէնսդրութիւնը, այս եկեղեցւոյ համար
և նոր եկեղեցական կանոն, որ անհամայշյան լինել
ու ապահով կայսերա-նեամ ըցընաց, ակներւ և որ հրամա-
բահաժան շեր կարող է լինել»...

Ի դէպ.

Շեշտելի է, որ, ի միջի ալլոց, ուսւս Պետական Օ-
րէնքին ևս առհասարակ խորթ չեն այլօրինակ հա-
յասա-նե-նեպ-անհայրա-նե-նեպ, որոց շնորհիւ Օրէնքի
մի յօդւածով որոշ մարմնին իւրացրւածը—մի ուրիշ
յօդւածով, ըստ երեսոյթին, իւրացրւում է որեւէ այլ
մարմնի: Այսպէս են, զորօր, Պետական Օրէնքի XI
հատ. I մասի (հրատ. 1896 թ.) յօդ. 1132 և 1143:

Բատ յօդ. 1132-ի «... Պատրիարք-Կայուղինու վերջ-
նականապէս որոշում է (քննաւում) պաւատոյ վարդապետութեան, ժամա-
գաւանական հաւատոյ վարդապետութեան,

սացութեան՝ եկեղեցու պաշտամունքներին և այլ նման տեսակ հարցերին առն նուլ վերաբերեալը»—

Բատ յօդ. 1143-ի՝ «Եջմիածնի Հայ - Աստվածածութեան Սինոդը, գանւելով Ծայրագոյն Պատրիարքի անմիշական վերատեսչութեան տակ, ինուում է վերընականապէս (քննաւութեան) այն բուլը (ՎԸԵ) գործերը, որոնք վերաբերում են գաւանական հաւատոյ վարդապետութեան, ժամասացութեան՝ եկեղեցու պաշտամունքներին, ժէսերին և պատկներին»⁹⁴⁾...

Ապա.

Ահա, զորօր., Պետ. Օրէնքի XI հատ. I մասի (հրատ. 1896 թ.) յօդ. 1140 և 1169-ը:

Բատ յօդ. 1140-ի՝ «Եջմիածնի Հայ-լուսաւորչական Սինոդի անդամութեան համար Պատրիարք-Կայող վիստ նշընայացնում-առաջարկութիւն է (представляетъ), Ներքին Գործոց Նախարարի միջոցով, Թագավոր Կալսեր, երկու կանգիդատներ ամեն մի տեղի համար»—

Բատ յօդ. 1169-ի՝ «Հայ-լուսաւորչական եկեղեցու թեմական առաջնորդները նշանակում էն Թագավորութիւն, այդ գաւանութեան հոգեորական աստիճանաւորներից: Նրանք նշանակւում և հեռացւում են Բարձրագոյն հրովարտակներով: Պաշտօն մտնելու ժամանակ, նրանք հաւատարիմ հպատակութեան և ծառայութեան երգում են տալիս»:

Ասկ է յօդ. 1169-ը, կարծես, ժխտում է յօդ. 1140-ի գոյութիւնը⁹⁵⁾...

Այդ ամենն ես անւանում եմ՝ «Խօնքադրական հաս-

⁹⁴⁾ Տնա աս Ն. վ. Մելիք-Թանգեան՝ ibid., էջ 685:—Տնա ևս վերը՝ Ի էջ 21—22:

⁹⁵⁾ Համեմատիր վերը՝ էջ 60:

Համարական մեջ՝ առնհացնամեջուն: Եւ, հարկամւ, այդ ամեն անգամները հարցը պիտի լուծեի նոյն Պետական Օրէնքի այլ և այլ յօդւածների հանդիպաղբութիւնից (сопоставленије) բղխելիք ուղղութեամբ: Զորօր., ի մասնաւորի, յօդ. 1132 և 1143-ի հակասութիւն-անհարթութիւնը պիտի լուծել՝ համաձայն նոյն Պետ. Օրէնքի յօդ. 1111, 1112, 1117, 1132, 1139, 1143, 1146, 1147, 1148-ի համագումար իմաստի: Այն է՝

Ամենայն չայոց Վեհափառ Կաթողիկոսը՝ մնալով իսկ նախագահ ո. Էջմիածնի Սինոդի (յօդ. 1139), դոյն այդ Սինոդում իսկ վերջնականապէս վճռում է (окончательно решается—յօդ. 1132), ունի վրա-ուական վճիռ կայացնող ձայն (решительный голос—յօդ. 1146, 1147, 1148), որը նա իրագործում-արտայացնում է նախօրօք, յստաշագոյն լսելով ո. Էջ-միածնի Սինոդի կարծիքը (внявъ предварительно мнѣнію Эчміадзинскаго Синода—յօդ. 1132):

Եւ, յիրաւի, միմիայն այդ գէպօւմ ամենայն չայոց Վեհափառ Կաթողիկոսը կարող է յորչորչւել՝ իբր հոգեւոր իշխանութիւն (духовное начальство—յօդ. 1111, 1112), զլիաւոր զեկավար և զերագոյն հսկող (главное управление—высший надзоръ) չալ-Լուսաւորչական եկեղեցու (յօդ. 1117)...

9.

Վերշերս մեր մամուլի էջերում, դպրոցական հարցի պարզաբանութեան առթիւ, երեան եկան տեսութիւններ, երբեմն ընդարձակ, որոնք պարզեցին այս-աեղ մեզ հետաքրքրող հարցը, այն է՝ հայ Եւեղեցու և

Դարբացի միջև եղած հասլը և ապագիս վեհի իրավունքները: Այդ ուշագրաւ տեսութիւններից ստորև կրտամ երկու կտոր քաղւածք՝ վերցնելով մէկը ։ Առաքելեանի յօդւածից, միւսը՝ Ս. Տիգրանեանի յօդւածից: Այդ երկու յօդւածները ևս լոյս են տեսել «Մըշակ»-ի էջերում: Ս. Տիգրանեանից քաղւածք մի անդամ արդէն դրել եմ ընթերցողիս առաջ⁹⁶⁾: Այդ կրտոր քաղւածքներով մի անդամ ևս ընդգծում է մեր դպր(ան)ոցների՝ անցեալում ունեցած զիրքն ու արտօնութիւնները, հետևապէս՝ նրանք ունին լրացնելու վերը զրի առածիս թերին:

Ս. Տիգրանեանը գրում է՝
«... եկեղեցական դպրոցը այն դպրոցն է, որ եկեղեցուն է ենթարկվում, որ պատկանում է ու կախված է ոչ թէ պետական կառավարութիւնից, այլ եկեղեցական իշխանութիւնից: Այդ պատճառով եկեղեցու կաղմակերպութեան մէջ են մահուս և որ և է եկեղեցական հաստատութեան կամ մարմնի — օր. ժխական եկեղեցի, վանք, վիճակ, թեմ — կից և կապված են լինում:

«Այս է եկեղեցական դպրոցը էտիսն յապիսնելը⁹⁷⁾...
«Մեր եկեղեցին սեփական դպրոցներ ունեցել է շատ հին ժամանակներից:...

«Եկեղեցին անխղելի կապեր ունի ուսումնարանական գործի հետ. և այլ կերպ լինել չէ էլ կարող, քանի

96) Տնօ ի՞մ «Դպրոցների նիւթական-դրամական ապահովութեան հարցը. I. Հայոց Թիմսական Հոգևոր Դպրանոցների եկամտի աղբիւրները (Պաշտօնական ցանկը և ցայսօր անտես առնաւձը), Մոսկա, 1908թ., էջ IX—XII:

97) Ընդգծումները մերն են: Բժ Ս. Շ.-Ն.

որ Եկեղեցին ինքը հենց ամբողջովին մի մեծ կրթա-
րան պիտի լինի. իսկ կրթիչ լուսաւորութեան ան-
հրաժեշտ գործօնը — դպրոցն է: Անդպայոց Եկեղեցի մի
անձնական Երևայն է լինել, նույն էր Էս-Շենիլ հակա-
ռող մի ժոյակ: Եւ ամենայն իրաւունքով՝ աշխական դըլ-
րոցներ առնենաւը «— անհաճօշըն վայելը մեր Եկեղեցին
էր ամենագլուխոր՝ սրբազն արարականութիւնը «— առ-
նենաւական նույնական իրաւունքն է համարվել:

«Եկեղեցու այս իրաւունքը սովորաբար միշտ ճա-
նաչվել է նաև պետութեան կողմից. որովհետև չէ
կարելի ճանաչել մի Եկեղեցու օրինաւոր (լէգալ) գո-
յութիւնը իր հողի (տերիտորիումի) վրա և մի և նոյն
ժամանակ արգելել նրան իր էական գործը կատարե-
լու. չէ որ ճանաչել մի Եկեղեցի նշանակում է ըն-
դունել նրա իրաւասու գործունեութեան օրինաւո-
րութիւնը: Հակառակ դէպքում այդ Եկեղեցին ոչ թէ
ճանաչված, այլ լոկ աանելի կամ մինչեւ իսկ հայտ-
փած կը հանդիսանայ նոյն պետութեան մէջ: Եւ Պա-
լամենիկի 66-րդ յօդւաժը (1896 թւի հրատարակու-
թեան մէջ 1178 յօդ.), ճանաչելով մեր Եկեղեցական
ուսումնարանների օրինաւոր գոյութիւնը ծխական
Եկեղեցիներին և վանքերին կից՝ արծանազրում է թե-
մական առաջնորդի պարտականութիւնը՝ խնամքով
հետամուտ լինել այդ դպրոցների վիճակին, բարւոք-
մանը և բազմացման:

«Եկեղեցական հանրակրթական դպրոցներին Պա-
լամենիկն այդ մէկ հաստիկ յօդուածն է նուիրել. ո-
րովհետեւ սրանց թէ պարզութեան և թէ բացառա-
պէս Եկեղեցական իշխանութիւնից կախված լինելու
պատճառավ՝ կարիք էլ չը կար մի այնպիսի հիմնա-

կան օրէնսդրութեան մէջ, որպիսին Պալաժենիէն է, առանձին լօդուածներ նուիրել այդ թէև կարեոր, բայց փոքրիկ մարմիններին: Մանաւանդ որ Նշ ծխա- կան և Հանական դպրոցները ծխական եկեղեցիներից և վանքերից զատված առանձին հիմնարկութիւններ չէին, իրաւաբանօրէն ինքնուրոյն մարմիններ չէին, այլ ան- հաժան մասն էին հանդիսանում այն եկեղեցու կամ Հանուի, որին նոց գոյութիւն էին ունենում: Ծխական դպրոցը, օր. իր էութեամբ ոչ թէ մի առանձին հաստատու- թիւն էր, այլ ծխական ժողովի բաղմակողմանի գոր- ծունէութեան մէկ ուրոյն տարրը, մասն էր հանդի- սանում, մի մաս, որ մեծ կարեւորութիւն ունենալով և առանձին ձեռնասութիւն ու յատուկ հոգատա- րութիւն պահանջերով, նոյն ծխական ժողովից ըն- տրրված յատուկ յանձնաժողովի (ծխական դպրոցի հո- գարածութեան) էր յանձնիում: Ծխական դպրոցը յաճախ, մանաւանդ պաշտօնական զրագրութիւնների մէջ, պարզապէս «Եկեղեցու գաւիթ» էին կոչում: Մեր ծխական դպրոցների 1868 թւի Կանոնների 4-րդ յօդ. պատվիրում էր՝ «ծխական դպրոցը պարտին լի- նել ի սրահի իւրաքանչիւր եկեղեցեաց, իսկ եթէ չիցէ անդ յարմարաւոր տեղի կարին լինել ի մերծաւոր վայրս առ եկեղեցեաւ»: Սակայն էականն այն չէ, որ դպրոցի շէնքը եկեղեցու շէնքին կից լինի. Կցութիւնը պէտք է իրաւանաւուն հասկանաւ՝ Աւ դպրոցը, էնթև իւր- նարան, եկեղեցու, իրը հասարակական մի հիմնարկու- թեան, պատրիառնելիքն է ու բարեկացնել առըսը: Դրա- բոցը եկեղեցու նախադուոք, նախակրթարանն է հան- գիսանում նաև հէնց նոյն ինքն եկեղեցու էութեան տեսակէտից:

«Իր վերոլիշեալ յօդուածով՝ Պալաժէնիէն լոկ ար-
ծանազրում էր մեր եկեղեցական հանրակրթական դրա-
բոցների օրինաւոր գոյութիւնը, թողնելով որ եկե-
ղեցին նուան չը աւուական արդ դպրոցների համար կա-
նոններ սահմանէ և ըստ այնմ կառվարէ:...»

«Կայսերահասատատ օրէնքով ապահոված այս ա-
զատութեան և անկախութեան շնորհիւ մեր եկեղե-
ցական դպրոցների բարգաւաճման և զարգացման գոր-
ծը գնալով աւելի և աւելի յառաջադիմեց:... Պալա-
ժէնիէի հրատարակումից հազիւ 20—25 տարի ան-
ցած մենք արգէն բաւական թւով եկեղեցական դրա-
բոցներ ունեինք, որոնք եղեւ ասովէնանի էին բաժան-
վում. ա) բաղաբային և գիւղական եկեղեցիներին կից,
ծիսական դպրոցներ տարրական գասրնթացըով (2—3
նախապատրաստական և 1—2 հիմնական գասարան-
ներով, չորսամեալ ուսում), բ) Նիմակային—յաշորդա-
կան կամ գործակալական վիճակների և շրջանների
կենարօնական բաղաքներում և վանքերում, միջնա-
կարգ դպրանոցի կէս գասրնթացըով (4 հիմնական
դասարաններով) և գ) Անական—լիակատար միջնա-
կարգ դպրանոցի գասրնթացըով:

«Պէտք է նկատել, որ այս երեք կարգի դպրանոց-
ները միմեանցից միմիան աստիճանով էին տարբեր-
վում և ոչ թէ տեսակով, այսինքն գասրնթացըի ա-
ւելի կամ պակաս ընդարձակ ծաւալ ունենալով և
ոչ թէ գասրնթացըի որպիսութեամբ, առարկաների
տեսակներով: Եկեղեցական լինելով հանդերձ՝ դրանք
բոլորն ել հանրակրթական բնաւորութիւն ունեին և
ը կային դրանց մէջ յատուկ կրօնական գասրնթացը
ունեցող դպրոցներ: Ճիշտ է 1836 թւի Պալաժէնիէն

Եկեղեցական դպրոցների մէջ երկու տեսակ ուսումնաբաններ է որոշում՝ մէկ զուտ հանրակրթական (ծրխական և վանական) և միւսը կրօնական («հոգեորսէնարիաներ»). վերջին տեսակի դպրանոցները, բացի անհրաժեշտ հանրակրթականից, պէտք է նաև մասնագիտական—աստուածաբանական դասընթացք ունենային: Սակայն այս բաժանման գաղափարը մեզ համար մի անժանօթ և խորթ բան էր. և գեռ եօթանասնական թւականներին Գէորգ կաթողիկոսը՝ կառավարութեան ուղղած իր գրութիւններում հրաժարվութեան ալգախի մի բաժանում ընդուներուց, բացարելով որ Նոր Յուլի Երես+ կարդի Շուբրոցներն եւ իրաւականները իր շրջանում, հետաձուու են լնուում միանոյն ընդհանուր նախարարին—պատ հայ ճանուններին կրօնական բարոյական և ճարագուր կրօնական:...»⁹⁸⁾...

Հ. Առաքելեանը գրում է՝

«Դիմելով պատմութեան, մենք տեսնում ենք, որ հայոց Եկեղեցին իր գոլութեան ամբողջ ընթացքում —թէ այն ժամանակ, երբ հայերը ունեին քաղաքական անկախութիւն, կազմում էին պետութիւն, և թէ այն ժամանակ, երբ նրանք հեծում էին յոյների, պարսիկների, ակչուկների, մօնղոլների, օսմանցիների լծի տակ—հանգիսացել է այն Թափ⁹⁹⁾ հաստատութիւնը, որտեղից հայ ժողովուրդը քաղում էր իր ոչ միայն զուտ կրօնական, հոգեորս, այլ և ճարագուր-Շաբրոյական և մնալու միական սննունդը, պէտքերը և պահանջները:

⁹⁸⁾ ՏՅԱ «Մշակ», 1905 թ., №№ 125 և 126—Ս. Տիգրանեանի՝ «Անդ Եկեղեցական ուսումնարանների պատմութիւնից» (Եւս՝ №№ 127—128):

⁹⁹⁾ Ընդգծումները մերն են: Բժ. Ս. Շ.-Ն.

Դալլոց և գրականութեան — ամեն մի ազգի զարգացման այս երկու հզօր լժակները — ամփոփած էին Եկեղեցու մշտ, որի զեկավարները հանդիսանում էին ազգանախիր կաթողիկոսը, ժողովրդինախիր առաջնորդները և երեցփոխները և ինքը ժողովուրդը ի դէմս երեցփոխների և հոգաբարձուների: Ժողովրդից ընտրըված երեցփոխների հաստատութիւնը հայ Եկեղեցու մէջ շատ հին և վաղեմի, գարերով նուիրագործված մի հաստատութիւն է: Իսկ երեցփոխների ինստիտուտը ցոյց է տալիս ժողովրդի ճամսնակցութեան սկզբունքը բոլոր Եկեղեցական գործերի մէջ: Դպրոց և մատենադարան, զրբերի և ծեռագիրների հաւաքածու ամփոփված և կինարօնացած էին վանքերում և Եկեղեցիներում, և այն պետութիւնները, որոնց տիրապետութեան տակ լնկել է հայաստանը, այդ կողմից լիակատար ազատութիւն էին թողել հայոց Եկեղեցուն:

«Ուրեմն, հայոց Եկեղեցին վաստոց, ուեւ Ռուսաստանի արքայութեան Ալեքսանդր Անդրեյ, իր Եկեղեցական-դպրոցական գործերում վայելուած իր իշխանական պատուիչա, նուժնավագութեան իրաւունք, որովհետեւ վել Վայուշելյանուացնել նրան և 1836 թ-ի աթօքանիւան, որովհետեւ, հանաչելով կաթողիկոսի համար իրաւունք Եկեղեցու պիտառը կառավարութեան, նա զրանով ճանաչում է և նրա կառավարութեան իրաւունքը բոլոր այն հաստատութիւնների վերաբերմամբ, որոնք ունեն և անբաժան կերպով կապված են Եղել Եկեղեցու հետ դարերի լնթացքում:»

«Թէ այդ այլպէս է, զրա ապացոյցն այն է, որ հայկական նահանգների (Երևանի, Նախիջևանի և Ղա-

բարագի խանութիւնների) Որուսաստանի ծեռքով նուաճումից ի վեր, կամ, աւելի ճիշտն ասած, պօլօժենիայի հրատարակութիւնից սկսած մինչև 1871 թիւը, ամենայն հայոց կաթողիկոսները և նրանց ներկայացուցիչ թեմակալ առաջնորդները կատարեալ ներքին ինքնավարութեամբ գարել և կառավարել են հայ ժողովրդի գպրոցական գործը, մասնակցութեամբ ժողովրդի, և հայոց գպրոցների կառավարութեան այդ եղանակը ոչ մի բողոք և տրաունչ առաջ չէ բերել երկրի բարձր իշխանութեան կողմից:

«Պօլօժենիայի հաստատութիւնից յետոյ ընտրված բոլոր կաթողիկոսները՝ Յովիաննէս, Ներսէս, Մատթէոս և Գէորգ շարունակ հաստատեցին գպրոցներ, թեմական-հոգեւոր, եկեղեցական-ծխական երկսեռ, ստորին, հանրակրթական, սահմանեցին կանօնադրութիւններ այդ գպրոցների ներքին կառավարութեան, ուսման պլանի մասին, ժողովրդական ներկայացուցչութեան մասին, լանծին ընտրված հոգաբարձութիւնների և այդ բոլոր կարգադրութիւնները, իբր արտայատութիւն նէրքին առաջնութիւնը եկեղեցական-դպրոցականից գործունեան նորնավէս ոչ մի նկատողութիւն, բոլոր և տրաունչ առաջ չեն բերել բարձր կառավարութեան կողմից:

«Ինքնավարութեան սկզբունքը հայոց եկեղեցական-գպրոցական գործերում այնքան հանրածանօթ և յատկանիշ է հայոց եկեղեցու համար, որ Թիւրքիայում ևս, երբ ստեղծվեց «աղքալին սահմանադրութիւն» կոչված հայոց ներքին կառավարութեան կանօնադրութիւնը, այդ սկզբունքը ամբողջովին գործադրված է: «Թէ, արդարեւ, հայոց կաթողիկոսների համար ճա-

նաչված է եղել իրաւունք բանալ ամեն տեսակ հանրակրթական դպրոցներ, իբրև մի իրաւունք, անբաժան հայոց եկեղեցուց, այդ երեսում է, ի միջի այլոց և այն փաստից, որ Նոր-Նախիջևանի արհեստաւորաց դպրոց բանալու առիթով երբ Գէորգ կաթողիկոսը զրագրութիւն էր բացել ներքին գործերի մինիստրի հետ, վերջին իր գրութեան մէջ այն միտքն էր յայտնել, որ կաթողիկոսը իրաւունք ունի բանալ „ամեն տեսակի հանրակրթական դպրոցներ“¹⁰⁰⁾:

«Հայոց եկեղեցու վայեած այս ներքին ինքնավարութեան իրաւունքը շարունակվեց անրնդհատ և անվիճելի, առանց որևէ հակառակութեան հանդիպելու, մինչև 1871 թիւը, երբ, ոռուսաց կառավարութիւնը հրատարակելով մի նոր կանօնադրութիւն եկեղեցական-ծխական դպրոցների համար (ընդհանուր բոլոր դաւանութիւնների համար), ձագեց և այն հարցը, թէ արդեօք հայոց եկեղեցական-ծխական դպրոցներն ևս պէտք է ենթարկվեն այդ կանօնադրութեան, թէ ոչ...»¹⁰¹⁾)

Տ. Առաքելեանի վերջին խօսքը վերաբերում է 1871—73 թւականների պայքարին, որը, ինչպէս յայտնի է, լուծւեց յօդուատ երշանկայիշատակ Գէորգ Գ. Կաթողիկոսի առաջադրութիւններին և ամփոփւեց 1874 թւի յուլիսի 19-ի «Կանոններ»-ի տեկստում:

Պետական Օրէնքի XI հատ. I մասի (հրատ. 1857 թ.) յօդ. 975-ով (հրատ. 1895 թ.—յօդ. 1178, 1836

¹⁰⁰⁾ Տես ևս ստորև՝ էջ 139—140:

¹⁰¹⁾ Տես «Մշակ», 1908 թ., № 109—Հ. Առաքելեանի «Հայոց եկեղեցական դպրոցները. III» (Եւս «Մշակ», 1908 թ., մալիս):

թւի մարտի 11-ի «Պոլոժենիէ», — § 66) նախառեսնւած էր Հայ-Լուսաւորչական Եկեղեցու պատմական իրականութեամբ ի վազուց անտի սրբազործւած իրաւունքը՝ ունենալ հոգեւոր (Եկեղեց, - ծխ.) դպրոցներ՝ ինժնայիշաբար վարելու իր հօտի կրթութեանդաստիարակութեան գործը: Մինչդեռ 1873 թւի նոյեմբերի 22-ին յայտարարւեց Պետական Խորհրդի Բարձրագոյն հաստատւած որոշումը Կովկասի և Անդրբկովկասի ուսումնարանական գործի կարգաւորման մասին: Ըստ այդ որոշման § 8-ի՝ Թիֆլիսի նահանգում եղած հայ գալրոցների վրա հակողութիւնը յանձնւում էր այդ նահանգի ժողովրդական (պետական) գալրոցների վերատեսչին և սրա օդնականին, իսկ այլուր՝ Կովկասի և Անդրբկովկասի բոլոր ուրիշ նահանգներում՝ ժողովրդական գալրոցների տեսուչներին: Որոշումն ուղարկւեց Գէորգ Դ. Կաթողիկոսին ևս: Վերջինս գժւարացաւ հաշտեցնել այդ որոշումը պետական տիրող Օրէնքի (Ծրատ. 1857 թ.) յօդ. 975-ի հետ և բացատրութիւն ուղեց՝ թէ որն է լինելիք «հակողութեան» չափն ու ծաւալը, արդեօք դրանով չի բացաւում-մխտում յօդ. 975-ով արտօնածը: Ահա, ի միջի ալոց, այդ հարցերի պատասխանը ևս տւին 1874 թւի յուլիսի 19-ի կանոնները:

1874 թւի յուլիսի 19-ի կանոնների տեկստը արտապւած է, ի միջի ալոց, նւաստի՝ «1905 թւի օգոստոսի 1-ի Ուկաղը և Ժամանակաւոր Կանոնները» աշխատութեան մէջ, ուր տւած է նրանց գնահատութիւնը ևս ¹⁰²⁾: Այստեղ, ի նկատի առնելով ալդ

¹⁰²⁾ Մուկւա, 1907 թ., էջ VI—VII (Կանոնները) և այլն:

կանոնների պլենցիպիալ նշանակութիւնը և այն, որ,
համաձայն 1905 թուի օգոստոսի 1-ի Ուկաղի, մեր
գլուխոցները, Թիկ այս—Թիկ այն, ունին զեկավարւելու
այդ իսկ կանոններով¹⁰³⁾, ևս այստեղ կրկին կբերեմ
այդ կանոնների տեկստը և կքաղեմ լիշածս աշխա-
տութեանս մէջ սրանց վերաբերեալ զրի առածիս մի
կառը:

1874 թի յուլիսի 19-ին Բարձրագոյն հաստատած կանոն-
ներ, որոնք նախապէս հաւանութիւն են գտել Մեծ Իշխան Կով-
կասեան Փոխարքայի կողմից¹⁰⁴⁾

«1) Համաձայն օրէնքների ժողովածուի XI հասորի,
I մասի, 975-դ յօդուածի, հայ-լուսաւորչական հո-
գեորականութեան պարտաւորութիւնն է մնում հիմ-
նել և կառավարել եկեղեցական դպրոցներ, նոյնական
և հոգալ մտցնելու դասաւութեան կանոնաւոր և
յարմար եղանակ և պահպանել բարի վարք ուսուցա-
նողների և աշակերտների մէջ:

«2) Ժողովրդական գլուխոցների տեսուչների (Ահ-
սպեկտօր) վրայ, հայ հոգեորականութեան հիմնելիք
և վարելիք բնդհանուր կրթական եկեղեցական-ժխական
գլուխոցների վերաբերմամբ, պարտաւորութիւնն է զլր-
ւում, համաձայն 1873 թուի նոյեմբերի 22-ին Բարձ-

¹⁰³⁾ Ասել է՝ 1905 թի օգոստոսի 1-ի Ուկաղով վերացւած է
Պետ. Օր. XI հատ. I մասի (ծրատ. 1896 թ.) յօդ. 1178-ի
առաջին ծանօթութիւնը և սրա «Յաւելւածը» (1884 թի փետր-
ւարի 16-ի կանոնները):

¹⁰⁴⁾ Այստեղ. ևս այդ կանոններն արտատպւում են «Արա-
բատ»-ի 1905 թի սեպտեմբեր ամսի տեսքից:

բագոյն հաստատուած Պետական Խորհրդի կարծիքին՝
հսկողութիւն ունենալ, 1) որ բոլոր դպրոցներում,
որտեղ աւանդում են ընդհանուր պատմութիւն և
աշխարհագրութիւն, աւանդուեն նաև ոռուսաց աշ-
խարհագրութիւն՝ ոռուսերէն լեզուով. 2) Որ այս դրա-
բոցներում ուսուցանողները լինեն ոռուսահպատակներ
և ունենան պարտ ու պատշաճ բարոյական յատկու-
թիւններ։ Իսկ միշտեղ տնտեսական մասի մէջ կամ
նրան կօնարօլի ենթարկել՝ տեսուչներին իրաւունք
չէ արւում։

(3) Այն ուսումնարանները, որոնք նպատակ ունին
հոգևորականներ պատրաստել՝ չեն ենթարկւում ժո-
ղովրդական ուսումնարանների աեսուչների հսկողու-
թեան և գտնւում են հոգևոր իշխանութեան բացա-
ռական վարչութեան տակ։ Այս դպրոցների ուսման
դասընթացքի և ներքին կարգերի մասին կանոնները
պէտք է ներկայացուեն Բարձրագոյն կառավարու-
թեան ի հաստատութիւն (յօդ. 1004):»

Ահա այդ «Կանոններ»-ի առթիւ գրի առածիս մի
կտորը՝

«Այդ օրէնքով մի անգամ ևս ընդգծւում է պետ.
«Պոլոսթինիկ»-ի գծածը—հայ դպրոցի անկախութիւնը
պետական որևէ միշտամութիւնից և ազգիս Վեհա-
փառ. Հայրապետի իրք այդ դպրոցի լիակատար տիրոչ
իրաւունքը, սակայն հետեւեալ մի բացառութեամբ՝
Եւղեցական-ծխական դպրոցների նկատմամբ։

(ա) Բոլոր եկեղեցական-ծխական դպրոցներում պի-
տի աւանդւի ոռուսաց լեզուն, իսկ ուր աւանդում է
պատմութիւն և աշխարհագրութիւն—այնտեղ պիտի

աւանդւեն ռուսաց պատմութիւն և ռուսաց աշխարհագրութիւն ևս, և այն՝ ռուսերէն լեզւով.

«Բ) Դպրոցների ռւսուցիչները պիտի լինեն ռուսականակ և տէր համապատասխան բարոյականի:

«Ահա այդ և մի միայն այդ երկու կետերի իրադորձման վրա հսկելու իրաւունքն է, որ 1874 թւի յուղիսի 19-ի օրէնքով վերապահուում է պետական ժողովրդական դպրոցների աեսուչներին (Իհուսութեան աշխատանքութեան մասին նշանական առաջարկ 105).

«Այդպիսով՝ համաձայն 1874 թւի յուղիսի 19-ի օրէնքի՝ հայ դպրոցը, իր ամեն տեսակում, վայելում է լիակատար անկախութիւն պետական միջամտութիւնից պահպատճենութեան նկատմամբ¹⁰⁵⁾. Համաձայն նշանական առաջարկի՝ հոգեւոր դպրանոցները, որոնց նպատակն է հոգեւորականներ պատրաստել, վայելում են նոյն լիակատար անկախութիւնը, իսկ եկեղեցական-ծրիական դպրոցներն անկախ են՝ վերև շեշտածս ռուսաց լեզւի, ռուսաց պատմութեան և ռուսաց աշխարհագրութեան վերաբերեալի բացառութեամբ:

«Այդ բացառութեան դէմ չէր Գէորգ Դ. կաթողիկոսը ևս: Նա ընդունում էր պետական լեզւի կարեւորութիւնը և ռուսաց լեզւի, պատմութեան և աշխարհագրութեան նկատմամբ պետական պաշտօնական միջամտութեան-հակողութեան վրա նայում էր՝ իբր մի գրաւականի, որով պիտի ամրանար „կառավարութեան վստահութիւնը դէպի մեր դպրոցները“: Երջանկայիշշատակ Կաթողիկոսը կանգնած էր այն գործնական տեսակետի վրա, որ ալդպիսով հայ ժողովրդական դպրոցական գործը ևս, ընդհանուր առմամբ,

105) Յատկապէս այդ մասին տես ստորև՝ Գլ. Ը.

կընթանայ պարտուապատշատն զարդացման շաւղով՝ ա-
պահովւած անսպասելի խոչընդուաներից»¹⁰⁶⁾)

Ի գեա.

Ահա, ի միջի այլոց, ինչպիսի տողեր է նւիրել Աստ-
րախանում հրասարակւող «Լրաբեր» շաբաթաթերթը
1874 թւի յուլիսի 19-ի կանոններին և սրանցով պայ-
մանաւորւած մեր դպրոցական երթեմնի իրականու-
թեան.

„Мы даруемъ армяно-григоріанскому духовенству способы къ широкой просвѣтительной въ пользу народа дѣятельности.

«Այս խօսքերով հաշտութեան ձիթենին տրւած էր:
Հայ ժողովուրդը՝ ուսումնարանն ու գիրը գնահատող
այդ ուսումնածարաւ մասսան անչափ գոհ մնաց, որ
այսուհետև իր զաւակների կրթութեան գործը իրան
է յանձնուում «լայն չափերով», որ այսուհետև հայի
կրթութեան մանուկ անդաստանը կաճի, կուրճանայ
ազատ, վատահ, համարձակ, չենթարկելով զանազան
կամակոր կարգադրիչների քմահանովըին:

«Ապացոյց դրան, նոյն իսկ այդ հրովարտակով պատ-
ւիրւում է Փօխարքային՝ հայ դպրոցների կառավա-
րութեան գործում առ ժամանակ զեկավարւել 1874
թւի օրէնքներով. այսինքն՝ այն օրէնքներով, որ գոր-
ծադրւում էր հանգուցեալ Գէորգ Դ.-րդ կաթողիկո-
սի օրով, իսկ զրա օրերը մեր դպրոցական տարեգրու-
թեան մէջ ապահով էլեկտրան, անտէրէլ դաստիարա-
կութեան և հայ դպրոցական գողծն ձաղինան ու դաս-

106) Տնա իմ՝ «1905 թւի օգոստոսի 1-ի Ուկադը և Ժամա-
նակաւոր կանոնները», էջ 7—8:

ըածնան օրերն էին. Զկալին խանգարիչներ, կողմնակի միջամտողներ և հայ ժողովուրդը ամբողջովին եռանդ գարձած, իրար ետևից բաց էր անում իր դրստոցների դռները, կատարելով մի անհրաժեշտ գործ, որ միանդամայն նպաստաւոր էր թէ պետական շահերի տեսակէտից և թէ ժողովրդի կուլտուրական առաջադիմութեան տեսակէտից»¹⁰⁷⁾...

Ապա.

Թէ որ աստիճան լայն էր հայ հոգևորականութեան իրաւանց՝ 1874 թւի յուլիսի 19-ի կանոններով գծած շրջագիծը, այդ պարզ է, ի միջի այլոց, Ներքին Գործոց Նախարարի 1875 թւին Կովկասի շրջանի հոգաբարձւին տւած պատասխանից՝ վերջնիս այն տարակուտանքի առթիւ թէ ունի՞ արդեօք հայ հոգևորականութիւնն իրաւունք բանալ ծխական դրստոցներից լայն ծրագրով դպրոցներ: Այդ առթիւ Ներքին Գործոց Նախարարը 1875 թւին՝ հիմնելով Կովկասի Մեծ Խշան Փոխարքայի արտայալտած տեսակէտի վրա՝ գրում էր —

«Հայ հոգևորականութիւնն ունի իրաւունք, առանց իսկ նոյնական նիւթ խնդրվելու հասարական նշանակութեան էց, բանալ դպրոցներ՝ ոչ միայն ծխականի գասերթացքով, այլև հանրակրթական դպրոցներ՝ միջնակարգ դպրոցներէ բարձրացնելու համար, սակայն այն պայմանով, որ նոր բացւելիք դպրոցների, որպէս և սրանցում նշանակւելիք ուսուցիչների մասին արեւին

¹⁰⁷⁾ Տես «Լքարեր» (Աստրախանի), 1908 թ., № 12՝ «Հայոց ծխական դպրոցները և նրանց կանոնադրութեան նոր ծրագիրը. I» (առաջնորդող):

տեղեկութիւններ ուսումնարանական վարչութեանը և որպէսզի ժողովրդական դպրոցների անսուներին վերապահուած լինի իրաւունք՝ պահանջել այն ուսուցիչների հեռացումը, որոնք անհամապատասխան կլինին տիրող օրէնքին»:

1875 թւի պաշտօնական դրութեան այդ վերջին՝ «տիրող օրէնք»-ն ակնարկող շեշտը, հարկաւ, ի նկատի ունի 1874 թւի յուլիսի 19-ի կանոնների § 2-ը, որով ապահովում էր ոռուսաց լեզուի, պատմութեան և աշխարհագրութեան բաւարար դասաւանդութիւնը: Ի դէպ.

Տարկ է ի նկատի առնել, որ 1905 թւի օգոստոսի 1-ի Ուկազով վերականգնուած 1874 թւի յուլիսի 19-ի կանոնները չեն տարածւել Կովկասից դուրս գոյութիւն ունեցող մեր դպրոցների վրա: Այս վերջինները շարունակում են ենթարկւել 1897 թւի յունիսի 0-րէնքին, այն է՝ ենթակայ են Լուսաւորութեան Նախարարութեանը:

Այդ առթիւ «Մեր Զայնը» լրագրում կարդում ենք՝

«... հոգևոր իշխանութիւնը 1905 թ. դիմումն է արել մինխստրութեան թեսարարիոյ հայոց դպրոցները վերադարձնելու խնդրի առթիւ և ժամանակի մինխսարք-նախագահ դրաֆ Վիստէից ստացել է պատասխան մօտաւորապէս այս մտքով: «Կովկասի փոխարքային Բարձրագոյն պատիրած է հայոց դպրոցների կառավարութեան համար մի նոր կանոնադրութիւն պատրաստել: Այդ կանոնադրութիւնը բանի դեռ չէ պատրաստուած, Կովկասին տրուած ժամանակաւոր կանոնների տարածումն Որուսաստանի երկու թեմերի՝

Բեսսարաբիոյ և Աստրախանի վրայ և նրանց գործադրութիւնը համարւում է վաղաժամ»:¹⁰⁸⁾

Ե.

Վերն ասացի, որ 1908 թւի նոր վեճի արանքից ցցւում են 1884—5 թթ. մեղ ժանօթ հին արմատները, և այն երեմն նորագոյն ծիլերով:

Անդրադառնալով հին արմատների վերատեսութեանվերագննութեան՝ մենք տեսանը սրանց ըստնական ժաշկ...

Բայց և այդպէս՝ 80-ական թւականների առաջին կէսում անցած վեճը մոռանալու չէ մեղ: Ավանս սիրայն, որ այն ամենելին ուսանելի չեղաւ այլոց համար...

Ինչ և իցէ...

Թաւականանաք վերը գրի առաժով՝ յուսալով, որ այդքան օրինական շեշտերով, պատմական փաստերով և մածուլի հզերից լսեցրւած պարզաբանութիւններով արդէն լուծեած կարելի է համարել պաշտօնական „Կավказъ“-ի արականանքը — թէ:

«Հայոց կաթողիկոսները ո՞ր հնագոյն աւանդութիւնների վրայ հիմնած՝ իրանց են սեփականում այս իրաւունքը, իբրև թէ նոքա կարող են պետութեան մէջ ինքնօրէն լայն ծրագրով աղդալին ուսումնարաններ հիմնել և կառավարել»¹⁰⁹⁾...

¹⁰⁸⁾ Տես «Մեր Զալնը», 1908 թ., № 18՝ «Մեր դպրոցների վիճակը» (Վարդգէսի):

¹⁰⁹⁾ Տես «Հովհան», 1908 թ., №№ 18, 23, 24 — Մեղքաք Մանդինեանի՝ «Հայոց հկեղեցական ուսումնարանները» լոգւածք, որտեղից քաղում եւ՝ „Կավказъ“ լրագրի լետագայ վկայութիւնները ես:

Սրան կից, մեզ մնում է մի անգամ ևս լիշտառ-կել պաշտօնական «Կավազъ»-ի ՀՀԱՅԻ-ՌԵ-ՆՆԵՐԸ՝

«Въ чемъ государственная власть нарушила национальные интересы армянского народа, въ томъ она безъ малѣйшаго колебанія созналась, и всѣ тѣ ограниченія въ школьнѣмъ вопросѣ, которыя послѣдовали послѣ изданія правиль 19 іюля 1874 года, всѣ они отмѣнены Высочайшимъ указомъ 1-го августа 1905 года— ինչում պետական իշխանութիւնը խախտել էր հայ ժողովրդի աղջային շահերը, զրանում նա (պետական իշխանութիւնը) խոստովանւեց առանց տատանման, և գալրոցական հարցում տեղի ունեցած այն ամեն սահմանափակումները, որոնք գոյութիւն առան 1874 թւի յուլիսի 19-ի կանոնների հրապարակութիւնից յետոյ, խափանւած են 1905 թւի օգոստոսի 1-ի Բարձրագոյն Ուկազով»...

«Указъ 1-го августа 1905 г. имѣетъ своимъ прямымъ назначеніемъ отмѣну всѣхъ стѣсненій армянской церкви, послѣдовавшихъ за послѣднее время—1905 թւի սգոստոսի 1-ի Ուկազի անմիշական նպատակն է վերացնել հայ եկեղեցու այն ամեն սահմանափակումները, որոնք տեղի ունեցան ՀԵՐԳԵՐԱ...»

«ԵՌԵ այդովէն է,—ասում է Մեղրաք Մանդինեանն իր՝ «Տայոց եկեղեցական ուսումնարանները» ուշադրաւ յօդւածի վերջում, — ուրեմն այսուհետեւ հայոց ԵՒ-ԱՀՅՈՒ-ԼԵՒ-Լ աղաս ինձնաւարութիւններն գործելու իրա- նուները ակտու է անապայման ճանաչութիւն նաև (Կովկասի

Փոխարքայի սահմանած Դպրոցական Յանձնաժողովի
նոր կազմած կանոնների մէջ¹¹⁰):

Մեզ մնում է միայն և եթև բնդգծել մեր անւանի
մանկավարժի խօսքը...

Անցնենք մեր գպր(ան)ողների նիւթական - դրամա-
կանին:

Ը.

Մեր դպր(ան)ոցների ներական-դրամականի նկատմամբ
ազգիս Վեհին պատկանելիք իրաւասութեան շրջա-
գիծը գծելու տեսակէտից նշանակալից են Պետական
Օրենքի XI հատ. I մասի 1896 թւի հրատարակու-
թեան յօդ. 1212 և 1213-ր (հրատ. 1857 թ.—յօդ.
1009 և 1010, 1836 թ. մարտի 11-ի «Պոլոժենիկ»
—§ 117):

Ահա այդ յօդւածները՝

„1212. Къ составу имуществъ Армяно-Гри-
горіанской Церкви принадлежать: 1) монастыр-
скія и церковныя зданія и находящаяся въ
нихъ движимость; 2) земли, населенныя и не-
населенныя; 3) денежные капиталы; 4) сборы
и даянія въ пользу монастырей и церквей.—
Տայլառական ելեղցու սեփականութեան կազ-
մին պատկանում են՝ 1) վանական և եկեղեցական
շենքերը և նրանց մէջ գտնւած շարժական կազքը.
2) բնակելի և անբնակ հողերը. 3) դրամագլուխները.

¹¹⁰⁾Տես «Հովիս», 1908 թ., № 24:

4) յօդուտ վանքերի և Եկեղեցիների արւած հանգա-
նակութիւնները և նւիրաբերութիւնները:»

«1213. Всякое движимое и недвижимое иму-
щество, предназначенное на содержание ка-
кого-либо Армяно-Григоріанского монастыря
или церкви, или принадлежащих къ нимъ
богоугодныхъ заведеній, считается общему соб-
ственностию всей Армяно-Григоріанской Цер-
кви.—Հայ-Լուսաւորչական որ և է վանքի կամ Եկեղե-
ցու, կամ սրանց պատկանող աստածահանոյ հիմնար-
կութեանց պահպանութեան համար նախանշանակւած
ամեն շարժական և անշարժ սեփականութիւն-կալք
համարւում է ընդհանուր սեփականութիւն համայն Հայ-
Լուսաւորչական Եկեղեցու (Ե՞ր մի ամբողջութեան):»:

Թէ որ աստիճան ժամրակշիռ է այդ երկու յօդ-
ւածների գոյութիւնը Պետական Օրէնքների ժողո-
վածւի մէջ—այդ հանգամանքն ըստ ամենայնի պարզ-
ւեց, ի միջի այլոց, 1903 թւի յունիսի 12-ի՝ ալսօր
ետ վերցրած կարգադրութեան (Եկեղեցական-վանա-
կան կալւածների գրաւումն յարըունիս) առթիւ ան-
ցածի ընթացքում։ Յալտանի է, որ՝ և Ռուսիոյ սահ-
մաններից, և արտասահմանից հայութեան կողմից
Պետերբուրգ տեղած ամեն բողոքների ու խնդիրների
զլիսաւոր հիմունք - ելակետն այն էր, որ Եկեղեցիների
և վանքերի ամեն շարժական և անշարժ սեփականութ-
իւն-կայտը համարւում է ընդհանուր սեփականութ-
իւն համայն հայ Եկեղեցու՝ Ե՞ր մի ամբողջութեան։

Եւսագալում դոյն այդ տեսակէան արձարծւեց
Մկրտիչ Ա. Կաթողիկոսից և ս. Էջմիածնի Սինոդից
(օրագրական որոշում. 1907 թ. սեպտ. 3 և սեպտ.

Դ հրամանը) Թիֆլիսում նշանակած «վանքապատկան և եկեղեցական կալուածների կանոնաւոր կերպով շահագործելու մասին խորհրդակցութեան» նստաշրջանում (հոկտ. 6—28): Այն է՝ Բարգէն վարդապետի նախագահական ժառում, ի միջի այլոց, կարգում ենք՝

«Մեր գալրոցների և վանական կալուածների կառավարութեան նկատմամբ պետութիւնը de jure ճանաչում է իրեւ «Եղիշականաստուք» և իրաւագույնը՝ Քայլականաստուք»: Ապա՝

«...ոմանց կարծիքով „Տէր և Տնօրէն“ բառերը բովանդակելով իրենց մէջ „սեփականութեան իրաւունքի, տիրապետութեան“ գաղափարը, կարող չեն յատկացնուել այնպիսի մարմինների, որոնք սեպհականութեան իրաւունք չունին, մանաւանդ գոնի ուես գոյութեան ունի Պօլցժենիան,...: Պօլցժենիայով աշխական լրացնեան իրաւունքը պատկանաւ է հայ Եկեղեցուն, որը է ունենաւ... Եղիշականի Նշիշայանում է իրաւական մարմին, իսկ ապէստոլ ժողովութեան մէ այդունքուն մարմին չէ հապնում: Տէր և անօնեն կարող է լնիւ միջայն հայ Եկեղեցին եւ լրացնեամբ: Իսկ այդ իրաւունքին ձեռնամուխ լինելը համարելի է չափազանց վտանգաւոր, վնասակար և նոյն իսկ կեանքի ներքայ պարմաններում աննպատակայարմար և անկարելի»¹¹¹⁾...

Այդ այլպէս լինելով՝ ինքնին հասկանալի է, որ Պետական Օրէնքի 1212 և 1213 յօդւածներով մեր դպր(ան)ոյների նիւթական-դրամականն ենթարկւում

111) Տես Բարգէն վարդապետ՝ «Ս. Էջմիածնի կալուածներն ու նրանց բարեկարգութեան ծրագիրը», Վաղարշապատ, 1908 թ., էջ V (Յառաջարանի փոխարէն) և 17 (Նիստ Դ.):

Է ամենայն հայոց Վեհափառ Հայրապետի իրաւասութեանը, այսպէս ասած, ընդհանուր առանձն այն ամեն անգամները, երբ վանքերը և եկեղեցիներն ունին նրապաստելու իրենց կից գանւող եկեղ.-ծխական դպրոցներին, որպէս և Թեմական Հոգևոր Դապրանոցներին; Այդ ամեն անգամները վանքերի և եկեղեցիների նրապաստները պիտի արւեն կամ ազգիս Վեհի անմիջական կամ սրա ներկայացուցիչ պաշտօնական մարմինների գիտութեամբ և թոյլտութեամբ: Համայն Հայ-Լուսաւորչական Եկեղեցու՝ իրը Գլ ամբողջութեան սեփականութեան օրինական կարգադրիչն է նոյն ամենող ջութան Պետք՝ ազգիս Վեհափառ Հայրապետը, որն իր կարգադրութիւններն անում է կամ անմիջապէս ինքը կամ իր ներկայացուցիչ մարմինների միջոցով:

Այդ նոյնն ընդգծում են մեր Եկեղ.-ծխական և Թեմական Հոգևոր Դապրանոցների նիւթական-դրամականին զատ-զատ վերաբերեալ Պետական առշյանձ նորմանները ևս:

Այսպէս՝

Եկեղեցական-ծխական դպրոցների տնտեսականի մասին
1874 թւի յուլիսի 19-ի Բարձրագոյն հաստատւած
«Կանոններ»-ի § 2-ում կարգում ենք՝

«... միջամտել (Եկեղ.-ծխ. դպրոցների) պետական մասի մէջ կամ նրան կոնտրոլի ենթարկել՝ (ժողովրդական դպրոցների) տեսուչներին իրաւունք չէ արւում»:

Սաել է Եկեղ.-ծխ. դպրոցների տնտեսականը (նիւթական-դրամականը), ըստ 1874 թւի յուլիսի 19-ի Պետական նորմայի, դրւած էր մեր հոգևոր իշխանութեան և սրա Վեհափառ Հայրապետի բացառական իշխանութեան տակ:

Ապա. 1884թւի փետրւարի 16-ի «լրացուցիչ»¹¹²⁾
«Կանոններ»-ը¹¹³⁾ դրի տեքն § 1-ում՝

«1. Армяно-Григоріанскими церковными училищами именуются всѣ общеобразовательные элементарные (начальные) одно- и двухклассные учебные заведенія, состоящія при церквяхъ и монастыряхъ сего исповѣданія и содержимыя или исключительно на счетъ церковныхъ и монастырскихъ суммъ, или при воспособленіи со стороны прихожанъ.—Հայ-Լուսաւորչական Եկեղեցական դպրոցներ կոչւում են մեն ընդհանուր - կրթական տարրական (սկզբնական) մի-և երկդասեան ուսումնարանները, օրոնք դոյութիւն ունեն այս դաւանութեան Եկեղեցիներին և վանքերին կից և պահպանում էն իամ բացառապես Եկեղեցների և վանքների դրամներով կամ, սրանց վեց, ժիշտանեների ն-իստերո-նի-ններով վենդաստներով»:

Այդպիսով՝ 1884թւի փետրւարի 16-ի կանոնները, մեր Եկեղ.-ծխական դպրոցների պահպանինի (նիւթական-դրամականի) հարցում, իրօք, հրապարակ իշան՝ «ի զարգացումն—ի պարզաբանութիւն» 1874թւի յուլիսի 19-ի նորմայի, որով որոշւած էն բացորով գծերով թիւք՝ որոնք են մեր Եկեղ.-ծխ. դպրոցների նիւթական-դրամական ապահովութեան աղբերները։ Եւ եթէ մինչ 1884թւի փետրւարի 16-ի կանոնների հրա-

¹¹²⁾ Տես Սուրբի եպիսկոպոսի «Պատվիրակութիւն ի Ս.-Պետերբուրգ ևն», էջ 97:

¹¹³⁾ Կցւած են Պետ. Օր. XI հատ. 1 մասի (հրատ. 1896թ.) յօդ. 1178-ին՝ իրը «Յաւելւած»:

տարակուելն ամենայն հայոց Վեհափառ Հայրապետը
մեր տարրական կրթարանների (Եկ.-Ծխ.) նիւթական-
դրամական ապահովութեան նկատմամբ իրեն պատ-
կանելիք իրաւասութեան յենակէտ ուներ իր՝ իրր աղ-
գիս հոգեւոր Պէտք իրաւասութիւնը, 1884 թւի փե-
տրուարի 16-ի կանոններն եկան օրենքի հարազարդ աւելա-
գութեան դոյն այդ իրաւասութիւնը՝ ի մաս-
նաւորի:

Ապա.

1905 թւի օգոստոսի 1-ի Բարձրագոյն Ռւկազը
վերականգնեց այդ հարցում ևս 1874 թւի յուլիսի
19-ի դրութիւնը, ասել է 1905 թւի օգոստոսի 1-ից
յետոյ ամենայն հայոց Վեհափառ Հայրապետն ունի
կարգադրելու մեր տարրական կրթարանների (Եկ.-Ծխ.)
նիւթական-դրամական ապահովութեան հարցը՝ յեն-
ւելով իր՝ իրր ազգիս հոգեւոր Պէտք իրաւասութեան
վրա:

Սպավիսով 1836 թւի մարտի 11-ի «Պոլոժենիէ»-
ից ցալաօր գոյութիւն առաջ օրինական նորմաները
մեր Եկեղ.-ծխ. գպրացների նիւթական-դրամական ա-
պահովութեան հարցի նկատմամբ տարբերել են օ-
րէնքի հարազարդ աւելագութեան, այլ ոչ՝ օրէնքի Ելակետ ակը-
բունիութեան որը շարունակարար ճանաչել է ազգիս Վե-
հի լիակատար իրաւասութիւնը՝ Անդրբնին այդ
հարցում:...

Անցնենք մեր Թեմական Հոգեւոր Դպրանոցների նիւ-
թական-դրամական ապահովութեան հարցին:

Հայոց Թեմական Հոգեւոր Դպրանոցների նիւթական-
դրամական ապահովութեան հարցում ազգիս Վեհին
պատկանելիք իրաւասութեան վրա ևս արդէն կանգ

եմ առել երկիցս—նախ՝ 1902 թւին «Նոր-Դար» -ի էջերում լրս տեսած մի յօդւաժումս¹¹⁴⁾, ապա 1908 թւի՝ մեր դպր(ան)ողների ապահովութեան հարցին նւիրած աշխատութեանս առաջին մասում¹¹⁵⁾: Ահա այդ աշխատութեանս կարևոր կտորը.

«Վերը¹¹⁶⁾ շեշտածս պաշտօնական փաստերը և նրանցից հետևյած եղբակացութիւնները, բայ իս, վերին աստիճանի ուշագրաւ են, քանի որ նպաստաւոր են դրբույթիս վերնագրում շեշտածի ցանկալի լուծմանը:

«Յիրաւի՛: Մենք իրականօրէն համոզւում ենք, որ Պետ. Օրէնքի մի շարք յօդւաձների համաժողոմաք, ներ-+ին իմաստը և, սրան կից, 1874 թւի յուլիսի 19-ի կանոնների § 3-ը ու Նոր-Նախիչևանի և Բեսսարաբիոյ 1880 թւի յունիսի 27-ին Բարձրագոյն հաստատած «Կանոնագրութեան» «Проектъ основныхъ правилъ»-ը թեղադրում են, որ չ. թ. չ. Դպրանոց-ների նիստ ու կացի՛ և գրամականին, և այլ պահանջներին ամեն ինչ վերաբերեալը կարգաւորելու իրաւունքն իւրացրած է ամենայն չափոյ Վեհափառ կաթողիկոսին, ի հարկէ, Պետ. Օրէնքի նախագծած սահմաններում:

¹¹⁴⁾ Տես «Նոր-Դար», 1902 թ., №№ 170, 172, 174, 175, 177, 194, 195 և 198՝ «Մեր Թեմական Հոգևոր Դպրանոցների եկամտի ցայսօր անտես առնւած աղբիւրները» յօդւածս:

¹¹⁵⁾ Տես իմ «Դպրոցների նիւթական-դրամական ապահովութեան հարցը. I. Հայոց Թեմական Հոգևոր Դպրանոցների եկամտի աղբիւրները (Պաշտօնական ցանկը և ցայսօր անտես առնածը)», Մոսկա, 1908 թ.:

¹¹⁶⁾ Տես ևս վերը՝ էջ 45—50:

“Մենք արդէն գիտենք՝ որոնք են այդ սահմանները:
Ամենայն չափոց Վեհափառ կաթողիկոսը կարող
է առաջարկել և էջմիածնի Սինոդին՝ միանւագ և տա-
րեկան կանոնաւոր ժողովարարութիւն բանալ Ռու-
սիայում գտնւող թեմերում՝ յօդուտ Հ. Թ. Հ. Դրա-
բանոցների (յօդ. 1141¹ 8): Նա կարող է հրամայել թե-
մական առաջնորդներին՝ միանւագ և տարեկան կա-
նոնաւոր ժողովարարութիւն բանալ իրենց թեմերում՝
յատկապէս յօդուտ իրենց թեմական չոգեոր Դպրա-
նոցների (յօդ. 1188¹ 7): Նա կարող է հրամայել, որ
բոլոր եկեղեցիներում և վանքերում մշտական ժողո-
վարարութիւն լինի՝ յատկապէս յօդուտ իրենց թե-
մական չոգեոր Դպրանոցների (յօդ. 1209): Նա կա-
րող է հրամայել վանքերին ամեն անդամ իրենց տա-
րեկան եկամտի որոշ մասն յատկացնել իրենց թեմերի
չոգեոր Դպրանոցներին (յօդ. 1209): Նա կարող է
հրամայել, որ կոնսիստորիաների, չոգեոր կառավա-
րութիւնների և թեմի չոգեոր Դպր(ան)ոցների բոլոր
պաշտօնեաների և ծառալողների ամեն 150 ըուր-
լուց աւել տարեկան ոռնի 20%-ն ամեն անդամ յատ-
կացնեի թեմական չոգեոր Դպրանոցներին (յօդ. 1210).
Եւ, որպէսզի այդ ամենը դիւրութեամբ իրագործեի,
նա կարող է հրամայել, որ ճշտութեամբ արձանագր-
ւեն վանքերի, եկեղեցիների, սրանց ծխականների, ու-
սուցիչների և այլ պաշտօնեաների ցուցակը, դրամա-
կան մուտքին, ոռնին և այլն վերաբերեալ թւերը
(յօդ. 1188¹ 13):

“Ե՞ն այդ ամենն իրականութիւն ստանալ, այն ժա-
մանակ՝ ոչ ոքութիւնը ըստ ինքեան կլրանալ վերը
(Գլ. Ա՝ I) բերածս չափոց թեմական Դպրանոցների

գրամական եկամտի աղբիւրների այսօր պաշտօնապէս դոյտթիւն ունեցող ցանկը — ի բաց առած միայն երկու մանրամասնութեան, այն է՝ որ վանքերի եկամտի թեմական հոգեսոր Դպրանոցին լատկացնելիք մասը լինի այդ եկամտի «ասասնորդը» (կէտ՝ «Գ») և որ ծխականի տուրքի նորման որոշւի տարեկան «երկու-երկու կոպէկ» (կէտ՝ «Զ»):

«Պարզենք այդ կէտը ևս:

«Ուսումնասիրելով հայոց թեմական հոգեսոր Դպրանոցների կանոնադրութեան վերաբերեալ հարցը՝ ես միշտ ուղեցոյց ունեմ ի մի խմբել տիրող օրինական-պաշտօնական նորմաները և, ըստ կարեացս, որոշականացնել դոյն Դպրանոցների նորմալ (որոշ) կանոնադրութեան հիմունքները: Դոյն այդ ուղղութեան հետեւել եմ հայոց թեմական հոգեսոր Դպրանոցների եկամտի աղբիւների որոշականացման հարցում ևս...

«Նամածայն այդ իսկ ուղղութեան՝ հայոց թեմական հոգեսոր Դպրանոցների եկամտի աղբիւրների նրաւաստիս կազմած ցանկում շեշտած են՝ իբր դոյն Դպրանոցներին հասանելիք գումարներ՝ «վանքերի եկամտի տասանորդը» (կէտ՝ «Գ») և ծխականների «երկու-երկու կոպէկ»-ը (կէտ՝ «Զ»):

«Եւ այդ աղբիւրները մտացածին չեն, ոչ, նրանք շեշտած կան ս. Էջմիածնի Սինոդի անդամների և առենադպիրի սառագրութիւնները կրող և ամենայն հայոց «վշապիք» Մատթէոս Կաթողիկոսից հաստատւած երևանի հայոց թեմական հոգեսոր Դպրանոցի 1865 թւի 31-ն յունարի «Կանոնադրութեան» («Կանոնադրութիւն լաղափս կառավարութեան աղ-

գալին հոգեոր գովրոյի հայոց Երևանայոց) § 14-րդի
«Գ» և «Ե» կէտերում, ուր կարդում ենք՝

«Հոգաբարձութիւնն ունի ընդ տեսչութեամբ իւ-
րով զամենալն անտեսական մասն ուսումնարամնի, զա-
փականութիւնս նորին ևս և զդրամաւոր գումարս,
որոց աղբերը ենք...»

«Գ. Բատ մտաց օրինաց հաստոր XI, մաս I, յօդ.
1005 տասանորդն եկամտից բոլոր վանօրէից, զտա-
նելոց յԵրևանայ թեմին:...

